



Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Գ.Խաչատրյան	Ռեկտոր	Ինքնագնահատման զեկույցի պատրաստման գործընթացի համակարգող
Ս.Թումանյան	Ուսումնական գծով պրոռեկտոր	III չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Ա.Սանթրյան	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Վ.Եղիազարյան	Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր: Աշխատակազմի ղեկավար	II և V չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Ա.Գևորգյան	Ուսումնամեթոդական վարչության պետ	IV չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Ս.Առուստամյան	Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի համակարգող	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Ս.Բաբայան	Համագործակցության և արտաքին կապերի բաժնի վարիչ	IX չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ, արտաքին կապերի պատասխանատու
Գ.Բաղդասարյան	Գլխավոր հաշվապահ	Ֆինանսական գործունեության վերաբերյալ գործընթացների պատասխանատու
Ս.Վիրաբյան	Հավատարմագրման գործընթացը համակարգող աշխատախմբի ղեկավար	Արտաքին գնահատման համար հավաստիության ապահովում
Ս.Սիրադեղյան	Անվտանգության գծով ինժեներ-շինարար	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ : Ռեսուրսների պատասխանատու:
Ս.Շահվերդյան	ՈԱԿ-ի ղեկավար	X Որակի ապահովման պատասխանատու
Ա.Մանուկյան	ՈԱԿ-ի մոնիթորինգի և վերլուծության մասնագետ	Մշտադիտարկումների պատասխանատու
Ս.Խառատյան	ՈԱԿ-ի աուդիտի մասնագետ	ՄԿԾ-ների վերաբերյալ վերապատրաստումներ կազմակերպում
Տ.Բաղրամյան	Կարիերայի և հեռավար ուսուցման կենտրոնի պատասխանատու	Կարիերայի կենտրոնի գործընթացների պատասխանատու պատասխանատու
Հ.Հարությունյան	Հայոց լեզվի ամբիոնի վարիչ	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ: <Հայոց լեզու և գրականություն> քակ. ԿԾ-

		ի պատասխանատու
<b>Լ. Պետրոսյան</b>	Հայոց լեզվի ամբիոնի դասախոս	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Գ. Եթիմյան</b>	Փիլիսոփայության ամբիոնի վարիչ	<Իրավագիտություն> բակ. ԿԾ-ի պատասխանատու
<b>Վ. Այվազյան</b>	Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս	Մանկավարժության ֆակ. որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Ռ. Կռոյան</b>	Մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ	<Մաթեմատիկա> բակ. ԿԾ-ի պատասխանատու
<b>Կ. Առուստամյան</b>	Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Հ. Մելքոնյան</b>	Հայոց լեզվի ամբիոնի դասախոս	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Ս. Սարգսյան</b>	Օտար լեզվի ամբիոնի վարիչ	Թարգմանությունների պատասխանատու
<b>Ս. Ժամհարյան</b>	Պատմաշխարհագրական ֆակուլտետի դեկան	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Թ. Շահվերդյան</b>	Մանկավարժության ֆակուլտետի դեկան	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Հ. Գրիգորյան</b>	Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Զ. Վարդանյան</b>	Կենսաբանաքիմիական ֆակուլտետի դեկան	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Ա. Պողոսյան</b>	Բանասիրական ֆակուլտետի դեկան	Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման խմբի անդամ:
<b>Ա. Ներսեսյան</b>	Ֆիզմաթ ֆակուլտետի ուսանող	Ֆակուլտետի որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Հ. Սարյան</b>	Ֆիզմաթ ֆակուլտետի ուսանող	Ֆակուլտետի որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Ն. Հովհաննիսյան</b>	Մանկավարժության ֆակուլտետի ուսանող	Ֆակուլտետի որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Ա. Հովհաննիսյան</b>	Կենսաբանաքիմիական ֆակուլտետի ուսանող	Ֆակուլտետի որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Մ. Գալստյան</b>	Պատմաշխարհագրական ֆակուլտետի ուսանող	Ֆակուլտետի որակի ապահովման աշխատախմբի անդամ
<b>Զ. Քարհանյան</b>	Թիվ 1 դպ. ուսումնական գծով տնօրենի տեղակալ	Գործատու, ինքնավերլուծության խմբի

		անդամ
<b>Կ.Մեսրոպյան</b>	Թիվ 1 դպ հայոց լեզվի ուսուցիչ	Գործատու, ինքնավերլուծության խմբի անդամ
<b>Ա.Կիրակոսյան</b>	ՈԱԿ-ի ավագ մասնագետ	Որակի ապահովման շուրջ իրազեկության բարձրացում

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ .....	6
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	6
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ .....	8
Լ.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	8

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	14
III. ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	20
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....	35
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....	53
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....	61
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....	72
VIII. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը.....	84
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ.....	93
X. ՈՐԱԿԻՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	103
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ.....	109
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	112

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,

- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարավորտիս պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի եզրույթներով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1969թ. հուլիսի 9-ին ՀՍՍՀ նախարարների խորհրդի թիվ 455 հրամանով ՀՍՍՀ պետական մանկավարժական հեռակա ինստիտուտի (հիմնադրված 1936թ.) հիման վրա կազմակերպվում է Կիրովականի մանկավարժական ինստիտուտը:

Կիրովական են տեղափոխվում հեռակա ուսուցման հինգ ֆակուլտետներ՝ հայոց լեզվի և գրականության, ֆիզմաթ, կենսաբանության, պատմության, մանկավարժության:

1970թ ընդունելություն է կազմակերպվում նաև ցերեկային ուսուցմամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում էր 12 ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերով. վերջինս հիմնականում համալրված էր, երևանաբնակ, գիտական աստիճան

և կոչում ունեցող առաջնակարգ մասնագետներով, տեղացի անվանի մանկավարժներով և ԵՊՀ-ի վերջին տարիների շրջանավարտներով:

1983թ. ինստիտուտի ռեկտոր ակադեմիկոս Ս.Մերգելյանի ջանքերի շնորհիվ ՀՍՄ քարձրագույն կրթության նախարարի հատուկ հրամանով ԵՊՀ-ի 'Կիրառական մաթեմատիկա' մասնագիտության ընդունելության տեղերից 25-ը տրվում է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտին: «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունն առաջին համալսարանական մասնագիտությունն էր. դրանով դրվում էր համալսարանականացման երկարատև գործընթացի հիմքը:

1988թ. հոկտեմբերի 14-ին ՍՍՀՄ մինիստրների սովետը որոշում է համաձայնել Ադրբեջանի ՍՍՀ ժողովրդական կրթության մինիստրության առաջարկին և փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ հանձնարարական իջեցնելով Ադրբեջանի և ՀՍՄ նախարարություններին ապահովելու ուսանողների կրթության շարունակումը:

1988թ. հոկտեմբերի 17-ի թիվ 382 որոշմամբ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայ ուսանողությունը և դասախոսական կազմը տեղափոխվում է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ:

1988թ. մարտի 15-ի թիվ 94-Մ որոշմամբ ՀՍՄ ժողովրդական կրթության մինիստրության որոշմամբ Ստեփանակերտ քաղաքում ստեղծվում է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք, որտեղ վերջին ընդունելությունը կատարվում է 1992 թ.:

ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ ստեղծվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի» հանակետային վարժարանը:

ՀՀ ԿնԳ նախարարի թիվ 212Ա/Ք հրամանով 2006 թվականից բացվում է ասպիրանտուրա՝ 6 մասնագիտությունների գծով:

2010թ. սեպտեմբերի 11-ին «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը իրավունք է ստանում իրականացնելու միջին մասնագիտական կրթական ծրագիր: Այդպիսով տարածաշրջանում դառնում է առաջին կրթական համալիրը, որը կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 5-8 մակարդակներով:

2011-12 ուսումնական տարվանից սկսած ներդրվում են համալսարանական մի շարք նոր մասնագիտություններ «Թարգմանչական գործ», «Լրագրություն», «Կառավարում», «Դեղագործական քիմիա», «Սոցիալական աշխատանք»):

ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը վերանվանվեց «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»:

Այսօր տարածաշրջանի ուսուցիչների շուրջ 70%-ը մեր բուհի շրջանավարտներ են, որոնք ոչ միայն բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ են, այլ նաև կրթական գործի կազմակերպիչներ:

Նրանց թիվը մեծ է նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մեջ (48,7 %), որոնց մեջ գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը:

Համալսարանի շրջանավարտները իրենց ներդրումն են ունեցել և շարունակում են աշխատել ՀՀ-ի տնտեսության տարբեր ճյուղերում, կառավարությունում:

Համալսարանն իր գերակա խնդիրն է համարում կրթության որակի բարձրացումը, աշխատաշուկայի պահանջարկի բավարարումը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու հնարավորության մեծացումը:

## ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

### Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** *Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:*

*ՎՊՀ-ի տեսլականն է ձգտել բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով կոմպետենտ մասնագետներ և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն:*

*ՎՊՀ-ի առաքելությունն է.*

1. Համալսարանը, ձգտելով ապահովել կայուն զարգացում և ինտեգրվել եվրոպական միասնական կրթական տարածք, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է *շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունը:*

2. Համալսարանը, ձգտելով պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, *ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր:*

3. Համալսարանը, ընդունելով *հասարակության առջև իր պատասխանատվությունը,*

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՄՈՒՀ-ի կանոնադրությունը [I Mission\1.4.docx](#)  
ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները <http://www.vsu.am/karg/zarg.pdf>  
Հաստատության որակավորումների շրջանակը  
[http://www.edu.am/DownloadFile/4277arm-Havelvac\\_332.pdf](http://www.edu.am/DownloadFile/4277arm-Havelvac_332.pdf)  
[Kanonadrutyun\licenzia\Licenzia bak\licenzia 0017 bak \(2\).jpg](#), [Kanonadrutyun\licenzia\Licenzia mag\licenzia 0017 mag2.jpg](#)

*Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից:* ՎՊՀ-ի 2014-2018 թթ. ռազմավարությունը մշակվել է ՎՊՄԻ-ի ռազմավարության արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների հիման վրա, որն ուղղված է ՀՀ հյուսիսային տարածաշրջանի գործատուների կարիքները բավարարող մասնագետների պատրաստմանը կրթական ծառայությունների և գիտահետազոտական ոլորտի աստիճանական զարգացման միջոցով:

ՎՊՀ-ի կանոնադրությունը հաստատվել է 2014թ ՀՀ կառավարության կողմից, ինչը պայմանավորված է ոչ միայն մասնագիտական կրթության նկատմամբ հարացույցի փոփոխությամբ, այլև եվրոպական կրթության ինտեգրմանը նպաստող մարտահրավերների ընդունմամբ:

ՎՊՀ-ը կրթական և գիտական գործունեություն իրականացնող պետական հաստատություն է, որտեղ մասնագիտական կրթական ծրագրերը մշակված են վերջնարդյունքների հիման վրա և իրականացվում են որակավորումների ազգային շրջանակի բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներով: Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում տարածաշրջանային և հանրապետական մակարդակներով ուսուցման առկա և հեռակա ձևերով, պետական կրթական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով:

Ընդունելով վերոնշյալ առաքելությունը՝ ՎՊՀ-ն առաջնորդվում է նպատակային կողմնորոշիչներով, որոնք ուղղված են կրթական և գիտական գործունեության բնագավառներին, ինչպես նաև՝ տարածաշրջանի զարգացման և կրթության միջազգայնացմանը:

ՎՊՀ-ի հայեցակարգում ներկայացված են համալսարանի նորարարական կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների, մանկավարժական փորձի և կառավարման ոճի համադրման հիման վրա մատուցվող կրթական ծառայությունները, որոնք նպատակաուղղված են ժամանակակից պահանջները բավարարող որակյալ կրթության ապահովմանը և աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջների բավարարմանը: Շարունակական կրթության սահմաններում բուհն իրականացնում է քառաստիճան ուսուցում՝ ավագ դպրոց-բակալավրիատ-մագիստրատուրա և ասպիրանտուրա: Նույն նպատակով համալսարանում կազմակերպվում են հետբուհական կրթության՝ ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման, բուհ ընդունվողների նախապատրաստական դասընթացներ: Այսօր համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում բարձր մրցակցության դաշտում և

կարողանում է ապահովել առաջնային դիրք աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետների պատրաստման բնագավառում:

**1. Արդյոք գործու՞մ է ռազմավարական ծրագրի գնահատման գործընթաց:**

Թե որքանով են գործընթացները համապատասխանում համալսարանի առաքելությանը, արտահայտված է ռազմավարական ծրագրի կառավարման գործընթացի գնահատման «ներդրում - գործընթաց - արդյունք - բարելավում» մոդելի կիրառմամբ: Գործընթացների պարբերական գնահատումը իրականացվում է մոնիթորինգի միջոցով: Ռազմավարական ծրագրի գնահատման գործընթացի հիմնական միջոցը համալսարանի կառավարման և կրթական գործընթացների աուդիտն է:

**2. Եթե այո, նշել գնահատման հաճախականությունը:**

Ռազմավարական ծրագրի գնահատման հաճախականությունը պայմանավորված է ծրագրի իրականացման պլանով: Մասնավորապես, բակալավրի ՄԿԾ-ները գնահատվում են 4 տարին մեկ աուդիտի միջոցով, իսկ ընթացիկ վերահսկողությունը, ժամանակին հայտնաբերելու ծրագրից շեղումները, վտանգները և ժամանակին դրանց բացահայտումն ու գործընթացի բարելավմանն ուղղված քայլերն իրականացվում են պարբերաբար մոնիթորինգի միջոցով: Մագիստրոսական ԿԾ-ի աուդիտն իրականացվում է երկու տարին մեկ: Մոնիթորինգի և աուդիտի արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումների, շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես՝ դասախոսների, ուսանողների, ֆակուլտետների, ամբիոնների ղեկավարների և վարչական աշխատակիցների հետ: Բարելավմանն ուղղված առաջարկությունները քննարկվում են ամբիոններում, ֆակուլտետներին կից գործող գիտամեթոդական խորհուրդներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՄՈՒՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը (*ռեկտորատի արձանագրություն 14.05.2014*)  
Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները (օրինակ՝ *հարցումներ [http://www.vsu.am/karg/dasaxos\\_usanox\\_achqerov-NOR.pdf](http://www.vsu.am/karg/dasaxos_usanox_achqerov-NOR.pdf)*)  
ՄՈՒՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: *Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/*

Ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների մոնիթորինգի, շահակիցների կողմից ներկայացված կարծիքների և շուկայի ուսումնասիրության արդյունքները պարբերաբար ենթարկվում են համեմատական վերլուծության:

**Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մոտեցումները.**

ՎՊՀ-ում գործում են կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնց միջոցով համակարգվում են կարիքների վերհանման, ինչպես նաև առկա վիճակի բարելավմանն ուղղված գործընթացները: *Օրինակ. <<Բուհ- դպրոց>> կապը գործատուի հետ կառավարման, կրթական, մշակութային, կազմակերպչական և այլն մակարդակներում:*

Համալսարանական կրթության անցումը պահանջում է նաև արդյունաբերական ոլորտի ուսումնասիրություն, շուկայի պահանջներին համապատասխան նոր ՄԿԾ-ների ներդրում: Չնայած ընդունված քաղաքականությանը՝ մարդկային ռեսուրսների սակավության պատճառով աշխատանքները միշտ չէ, որ արդյունավետ են լինում:

Արտաքին շահակից կողմերը ընդգրկված են համալսարանի կառավարման գործընթացներում,

ինչպես նախատեսված է օրենքով՝ խորհուրդ, գիտխորհուրդ:

2011թ.-ից ներդրված է գործատուների հետ համագործակցության որոշակի մեխանիզմներ, ըստ որոնց, ապահովվում է գործատուների մասնակցությունը մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման գործընթացին, սակայն այդ մեխանիզմները արդյունավետ չեն, քանի որ շահագրգիռ կողմերի մոտիվացիայի մակարդակը տարբեր է՝ համալսարան – շրջանավարտ-գործատու հարաբերությունները միջնորդավորված են: Այս մեխանիզմը ընդլայնելու և համալսարանական կրթությունը պատշաճ մակարդակով իրականացնելու, գործատուների կարիքները ժամանակին վերհանելու նպատակով վերանայվում է գործատուների հետ համագործակցության քաղաքականությունը:

*Ներքին շահակիցների կարիքների վերհանման մոտեցումները.*

Համալսարանում պարբերաբար իրականացվում են հարցումներ՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների շրջանում՝ կրթական գործընթացի կազմակերպման, իրականացման և արդյունավետության վերաբերյալ կարծիքների քննարկման, ինչպես նաև կարիքների բացահայտման նպատակով:

Գործատուների հետ համագործակցության և կարիքների վերհանման գործում ՄՈՒՀ-ը կարևորում է ուսանողների մասնակցությունը: Մասնավորապես, մոնիթորինգի խմբերում ուսանողների վրա դրվում են որոշակի պարտականություններ՝ հարցումների կազմակերպում, տվյալների վերլուծություն, առաջին կուրսի ուսանողների ադապտացիայի հետ կապված խնդիրների վերհանում և աջակցություն: *Օրինակ՝* ուսանողների կողմից կրթական գործընթացի բավարարվածության և կարիքների վերհանման, ինքնավերլուծության արդյունքում առաջացած խնդիրների վերլուծության հիման վրա մշակվել է նոր քաղաքականություն՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման և գործունեության կատարելագործման վերաբերյալ:

Վերանայվել են համալսարանում գործող կանոնակարգերը, ընթացակարգերը, ինչն արտացոլված է գիտխորհրդի նիստերի արձանագրություններում և տեղադրված է համալսարանի վեբ կայքում՝ <http://www.vsu.am>, և մատչելի է հանրության համար:

**ԶՄՓՈՐՈՇԻՉ Գ.** ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Մաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը,  
Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր (ռեկտորատի նիստի 14.05.2014 արձ.)  
Շահակիցներից ստացված արձագանքները (քննարկումների արձանագրություններ),  
Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը,  
Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր,  
ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները, <http://vsu.am/index.php/hy/buhi-masin/rector-menu-hy/hashvetvutyun>

*Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:*

ՎՊՀ-ում առաքելության հիման վրա ընդունված ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների իրականացման նպատակով մշակված են կարճաժամկետ աշխատանքային

պլաններ, որտեղ ներկայացված են իրականացվող գործառնությունների նպատակները, լուծվող խնդիրները, ժամանակացույցը, պատասխանատուները և ցուցիչները:

Ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը գիտիտրիտրի մշտական ուշադրության կենտրոնում է:

ՈԱԿ-ի կողմից մշակվել են մի շարք հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել հետադարձ կապը և գնահատել իրականացված աշխատանքի համապատասխանությունը նախանշված նպատակներին: Այս աշխատանքները դեռ կատարելագործման կարիք ունեն: Մասնավորապես, պետք է ավելի հաճախ իրականացնել որակական հետազոտություններ, դարձնելով դրանք ավելի նպատակային՝ ուղղված ռազմավարական ծրագրի խնդիրների լուծմանը:

Գործընթացները համակարգված են որակի ապահովման ուղղությամբ ՄՈՒՀ-ում վարվող քաղաքականությամբ: Մշակված են համապատասխան կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնց միջոցով ապահովվում են ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված մեխանիզմները:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատմանը մեծապես նպաստում են այն սկզբունքները, որոնք հիմք են հանդիսացել հետադարձ կապի ապահովման քաղաքականության ներդրման համար՝ թափանցիկություն, հաշվետվողականություն, մասսայականացում:

Յուրաքանչյուր տարի ստորաբաժանումների ղեկավարները հանդես են գալիս հաշվետվությամբ, իսկ ռեկտորի հաշվետվությունը տպագրվում և բաժանվում է շահակից կողմերին, տեղադրվում կայքում:

Ներքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացին արտահայտվում է հաշվետվությունների, ուսանողների կողմից գործընթացների մասնակցությամբ, ինչն արտացոլված է հանձնաժողովների կազմում, միջոցառումների, կրթական ծրագրերի մշակման գործընթացներում:

Շահակիցները հնարավորություն ունեն արձագանքելու ներկայացված հաշվետվություններին՝ կայք-էջի միջոցով, facebook-ով կամ մասնակցել ՈԱԿ-ում պարբերաբար կազմակերպվող քննարկումներին, որտեղ կարող են պատասխան ստանալ իրենց կողմից բարձրացված հարցերին:

Ռազմավարական ծրագրի իրականացման մոնիթորինգը և գնահատումը պաշտոնական բնույթ է կրում: Կրթական ծրագրերի աուդիտն իրականացվում է յուրաքանչյուր տարի և որոշակի նպատակով, ինչն արտացոլված է աուդիտի կանոնադրության մեջ, [X\10.5.docx](#) որի մասին հաշվետվությունը և առաջարկությունները ներկայացվում են բոլոր ստորաբաժանումներին:

Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման դժվարությունները պայմանավորված են ոչ միայն քանակական, այն որակական գնահատման մեխանիզմների անկարությամբ, որոնց ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են: Հնարավոր սխալների և ռիսկերի կանխատեսման նպատակով այժմ վերամշակվում են մի շարք կանոնակարգեր, ընթացակարգեր՝ դրանք առավել դյուրին, արդյունավետ և հասանելի դարձնելու նպատակով:

Հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն արտացոլված են կանոնակարգերում, իսկ շարունակական բարելավմանն ուղղված խնդիրները լուծվում են բացահայտված կարիքների վերլուծության, քննարկումների և դրանց իրականացման ուղիների որոնման միջոցով:

*Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

ՈՒՄԵՆԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	
<ol style="list-style-type: none"> <li>1. ՎՊՀ-ի 2014-2018 թթ. ռազմավարական ծրագիրը մշակվել է նախորդ ծրագրի ձեռքբերումների հիման վրա:</li> <li>2. Համալսարանի ղեկավարության կողմից բարեփոխումներին և նորարարություններին աջակցություն:</li> <li>3. Համալսարանի կողմից մասնագիտական կրթություն և գիտական գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան պայմանների և նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն:</li> <li>4. ՎՊՀ-ի՝ որպես ՀՀ հյուսիսային տարածաշրջանի բարձրագույն կրթական հաստատության, բարձր հեղինակությունը:</li> <li>5. Նորարարական մոտեցումների ընդունում և ներդրում:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ռազմավարության իրականացման հետ կապված միջոցների սակավություն:</li> <li>2. Հասարակության և մանկավարժների բարեփոխումների գործընթացի նկատման տարբերություն:</li> <li>3. Համայնքի սահմանափակ կարիքները, կողմնորոշում դեպի տեղական շուկան:</li> <li>4. Գործատուների շուկայի վերաբերյալ վերլուծության բացակայություն:</li> <li>5. Ուսումնական տարածքների սահմանափակությամբ:</li> <li>6. Ազգային և միջազգային աշխատաշուկայի հետ կապի մեխանիզմների անկատարությունը:</li> </ol>	<p>ած կողմ</p>
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ	
<ol style="list-style-type: none"> <li>1. ՎՊՀ-ի կառավարման մոդելի փոփոխություն, որը, բխելով առաքելությունից, կարող է տանել դեպի կրթության բարեփոխում:</li> <li>2. Ընդլայնել և հարստացնել այն ռեսուրսները, որոնք կնպաստեն կրթական և գիտական գործունեություն ծավալմանը տարբեր ուղղություններով:</li> <li>3. Ընդլայնել և խորացնել այն գործընթացները, որոնք ուղղված են պրոֆեսորադասախոսական կազմի որակի բարձրացմանը, և կնպաստեն մասնագետների կրթության, գիտական աշխատանքների արդիականացման գործին:</li> <li>4. Համագործակցել մարզի հաստատությունների հետ՝ ՎՊՀ-ի շրջանավարտների հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով:</li> <li>5. Շարունակել մի քաղաքականություն, որն ուղղված կլինի ՎՊՀ-ի՝ որպես բարձրագույն կրթական հաստատության, հեղինակության բարձրացմանը:</li> <li>6. Ակտիվացնել նորարարական գործունեության զարգացմանը նպաստող և մասնակցային մշակույթի կայացումը ապահովող գործընթացները:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատատեղերի նվազումը և դիպլոմավորված մասնագետների գործազրկության բարձրացում:</li> <li>2. Արտագաղթի պատճառով աշակերտների թվի նվազեցում, հետևաբար և աշխատատեղերի թվաքանակի պակաս:</li> <li>3. Ազգային և միջազգային կրթական տարածաշրջանում պատշաճ տեղ զբաղեցնելու հնարավորության հետ կապված դժվարություններ:</li> <li>4. Ներքին տեղաշարժ և արտագաղթը, ուսանողների թվի նվազում:</li> <li>5. Մասնագիտական կրթության ներդրումային գրավչության նվազում:</li> </ol>	
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <p><i>ՎՊՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են որդեգրած առաքելությանը և համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին, սակայն այն կատարելագործելու և իր առջև դրված մարտահրավերները ընդունելու տեսանկյունից, հարկ է վերանայել և նորոպի մոտենալ համալսարանի կողմից վարվող քաղաքականությանը:</i></p> <p>Անցումը համալսարանական կրթությանը նոր խնդիրներ է դնում ՎՊՀ-ի առջև: Ռեկտորի 2013 թ. հաշվետվության մեջ ներկայացված են այն ուղղությունները, որոնցով պետք է առաջնորդվել մեր աշխատանքներում: Մասնավորապես.</p>		

- ✓ վերանայել որակի կառավարման համակարգը,
  - ✓ կատարելագործել պրոֆետորադասախոսական կազմի որակի բարձրացման գործընթացները՝ համապատասխանեցնելով մասնագիտական կրթության և գիտական աշխատանքների արդիականացման խնդիրներին,
  - ✓ վերանայել այլ հաստատությունների հետ համագործակցության մեխանիզմները, ապահովելով հետադարձ կապ,
  - ✓ ակտիվացնել նորարարական գործունեության զարգացմանը նպաստող և մասնակցային մշակույթի կայացումն ապահովող գործընթացներ:
- Ուշադրության կենտրոնում են SWOT վերլուծության արդյունքում վերհանած թույլ կողմերը, որոնք ռիսկ են հանդիսանում ՎՊՀ-ի առաքելության իրականացման համար: Այն կանխատեսելու և վերացնելու նպատակով նախատեսվում են մի շարք գործընթացներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել ներքին և արտաքին շահակիցների մոտիվացիան բարեփոխումների նկատմամբ, մասնավորապես, շուկայագիտական քաղաքականության առկայությունը թույլ կտա խուսափել արտաքին ռիսկերից:
- Վերոնշյալ բոլոր առաջարկությունները նպատակ ունեն բարելավել համալսարանի առկա վիճակը և կայունացնել նրա առաջատար դիրքը՝ որպես ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կրթական ծառայություններ մատուցող, գիտահետազոտական գործունեություն իրականացնող, պրակտիկ բարձրորակ մասնագետներ պատրաստող առաջատար հաստատություն:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ ապահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

Համալսարանի կառավարումն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը և ՎՊՀ կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծմանը համալսարանի անձնակազմի և սովորողների մասնակցության սկզբունքների հիման վրա: Համալսարանի ղեկավարությունը իրականացնում է անձնակազմի իրավունքների և պարտականությունների հստակ բաշխման քաղաքականություն, համաձայն՝ կադրերի կառավարման համակարգի կառուցվածքի, կանոնակարգերի և պաշտոնի նկարագրերի բովանդակության: (ՎՊՀ կանոնադրություն, հաստատված Կառավարության 30.04.2014թ. թիվ 485-Ն որոշմամբ), (ՎՊՀ 2014-2018թ.թ. զարգացման հայեցակարգ, հաստատված ՎՊՀ գիտական խորհրդով, 04.09.2014թ., արձանագրություն թիվ 6):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը: I [Mission\1.4.docx](#)

Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ:  
 Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգը և աուդիտի արդյունքները ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների ցանկը և գործունեության կանոնակարգերը: <http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxtter/kanonakarger/218-storabajanum-verab>

Հիմքեր՝ Կառավարման մարմինների ընտրության կարգերը: <http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxtter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt>

Կազմակերպչական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի: I [Mission\1.5.docx](#)

ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, իրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը: <http://www.vsu.am/karg/pashtonneri%20texakalman-NOR.pdf>

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը:

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը/ *կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից*: Բնչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանով է այն հասանելի անձնակազմին:

ՎՊՀ-ն ունի ձևավորված կառավարման համակարգ: ՎՊՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ Կառավարության 30.04.2014թ. թիվ 485-Ն որոշմամբ հաստատված ՎՊՀ-ի կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների գույակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթներով:

Ներկայումս, ՄՈՒՀ-ում ներդրված է կառավարման հորիզոնական մոդել, որով ապահովվում է կրթական գործընթացի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությունը ու նրանց ընդգրկվածությունը կառավարման գործընթացին, որպես համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման երաշխիք:

Կառավարման գործընթացը շարունակաբար կատարելագործվում է ղեկավարության կողմից վարվող քաղաքականությամբ, աջակցելով բարեփոխումներին, կրթության որակի կառավարման գործընթացներին և կառավարման համակարգի ապակենտրոնացման ուղղությամբ քայլերի իրականացմանը:

Հետադարձ կապի ապահովման և կառավարման գործողություններն առավել թափանցիկ և արդյունավետ դարձնելու նպատակով մշտադիտարկման արդյունքները քննարկվում են շահագրգիռ կողմերի հետ, տեղադրվում ներբուհական ցանցում, որը հասանելի է և կիրառվում է բարելավման աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում առկա են բավարար նյութատեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ռազմավարական խնդիրների լուծման գործընթացի կառավարման համար:

ՄՈՒՀ-ում Ֆինանսական ռեսուրսները հիմնականում առաջանում են ուսանողների վարձավճարներից, պետության կողմից անվճար համակարգում սովորողների վարձի փոխհատուցումից, ինչպես նաև տարբեր դրամաշնորհներից և միջազգային ծրագրերից: ՄՈՒՀ-ի ֆինանսատնտեսական քաղաքականությունը ձևավորվում է ֆինանսատնտեսական

հանձնաժողովի եզրակացությունների և խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր՝	Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը <a href="http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt">http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt</a> Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը (առկայության դեպքում)
---------	---

*Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:*

ՎՊՀ-ում ընդունվել են մի շարք կանոնակարգեր, ընթացակարգեր՝ վարվող կադրային քաղաքականության և աշխատակազմի կառավարման գործընթացի զարգացման վերաբերյալ:

Չնայած կանոնակարգված չեն համապատասխան մեխանիզմները, այնուամենայնիվ ՄՈՒՀ-ում պարբերաբար իրականացվում են դասախոսների, ուսանողների և ղեկավարության միջև երկխոսության և հետադարձ կապի ապահովման, կառավարման ոլորտում նրանց մասնակցության և գործունեության արդյունավետության բարձրացման աշխատանքներ. ներքին շահակիցների իրազեկում, ներգրավում կարիքների վերհանման, կառավարման և դրանց բարելավման գործընթացներին:

ՄՈՒՀ-ի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի, ուսանողների դերի բարձրացումը արտահայտված են նրանց մասնակցությամբ համապատասխան հանձնաժողովների և խորհուրդների կազմերում:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը կնպաստեր նաև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, որը կարող է ստեղծվել գործող էլեկտրոնային ներքին ցանցի կատարելագործման միջոցով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը (աշխատանքային պլան) Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը <a href="#">Mission\1.8.doc</a>
--------	--

*Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*  
*Ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:*

ՎՊՀ-ի գործունեության երկարաժամկետ պլանավորումը բխում է 2014-2018թթ. համալսարանի զարգացման հայեցակարգից , որը մշակված է ՄՈՒՀ-ի առաքելությանն ու

նպատակներին համապատասխան, քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ և ընդունվել համալսարանի գիտխորհրդի կողմից (<<ՎՊՀ 2014-2018թ.թ. զարգացման հայեցակարգ>>):

2014թ. ՄՈՒՀ-ի ստորաբաժանումներում իրականացված ինքնավերլուծության արդյունքի հիման վրա վերանայվել են ստորաբաժանումների կանոնադրությունները, որոնցում աշխատանքի պլանավորման գործընթացը համակարգվել է և ուղղվել իրենց առջև դրված խնդիրների լուծմանը:

ՄՈՒՀ-ում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորված նպատակների և խնդիրների լուծման գործընթացներն իրականացվում են որոշակի մեխանիզմներով, սակայն կանոնակարգված չեն:

Միջնաժամկետ ռազմավարական պլանի վերանայման ընթացքում SWOT վերլուծությամբ բացահայտված կարիքների մի մասին տրվել է համապատասխան լուծում, մասնավորապես՝ մշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են փաստաթղթեր, որոնք հասանելի են հանրությանը և նպաստում են համալսարանի առաքելության արդյունավետ իրականացմանը:

Այդ փաստաթղթերը <http://www.vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt> կարելի է խմբավորել ըստ.

1. ՄՈՒՀ-ի քաղաքականության, կառուցվածքի և կառավարման,
2. ՄԿԾ-ներին առնչվող համալսարանի քաղաքականության և ընթացակարգերի,
3. ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցների հարաբերությունների կարգավորման,
4. ՄՈՒՀ-ի շրջանավարտների հետ հետադարձ կապի:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ.** ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

**Հիմքեր**  
 ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները և գործիքները [X\10.6.docx](#)  
 Պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես ընդունված քաղաքականությունը (առկայության դեպքում)  
 Այլ հիմքեր և վերլուծություններ (քննարկումներ, հաշվետվություններ)

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:  
 ՎՊՀ-ն իրականացնում է սոցիալական գործընկերություն աշխատաշուկայի հետ՝ որպես նորարարական զարգացման միջոց տվյալների հավաքագրման և որոշումների կայացման գործում:

ՎՊՀ-ում պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ, որոնց նպատակն է ուսումնասիրել ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը, գործողությունների համապատասխանությունն առաքելությանը և նպատակներին: Արդյունքում բացահայտված հիմնական կարիքները բավարարելու, ռիսկի գործոնները նվազեցնելու նպատակով կազմվել են տարբեր աշխատանքային խմբեր՝ ուսանողների, գործատուների մասնակցությամբ, որոնք մշակել և ներդրել են վերոնշյալ գործընթացների համակարգմանը միտված միջոցառումներ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե.** Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

**Հիմքեր՝**  
 ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը [X\10.3.doc](#), [I Mission\1.7.docx](#)  
 Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները [X\10.1.doc](#)

	<p>Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմները <a href="#">X\10.3.doc</a> Այլ հիմքեր և վերլուծություններ</p>
<p><i>Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i> Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:</p>	
<p>ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի վարչարարական գործունեության արդյունավետությունը, նրա կատարելագործումը և շահագրգիռ կողմերի ներգրավումը որակի կառավարման գործընթացներին պայմանավորված է կառավարման ընդունված մոդելի առանձնահատկություններով: Իրականացվող քաղաքականության հիմքում ընկած են հայեցակարգային մոտեցումներ. <a href="http://www.vsu.am/karg/zarg.pdf">http://www.vsu.am/karg/zarg.pdf</a>, <a href="#">I Mission\1.4.docx</a> ա/ իրականացվող գործընթացների բարելավմանը և նորարարական մոտեցումների ներմուծմանը միտված նախագծերի ստեղծում, բ/ կառավարչական գործունեության փուլային հստակեցում: Այս երկու մոտեցումներով իրականացվող գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ՄՈՒՀ-ի կառավարման մոդելի առկայությամբ, որում բոլոր շահակից կողմերը մասնակից են դառնում կրթության կառավարման և որակի ապահովման գործընթացին: ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը ներկայացված է որակի կառավարման հայեցակարգում, որը մշակված է SWOT վերլուծության հիման վրա: Կառավարման գործընթացների կատարելագործումը և արդյունավետության բարձրացումն իրականացվում է շահակիցների պահանջների բավարարման սկզբունքով:</p>	
<p><b>ՉԱՓՈՐՈՇԻՉ</b> գ. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:</p>	
<p>Հիմքեր՝</p>	<p>Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները (հարցումներ, բենչմարքինգ) Այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները Տեղեկատվության հավաքագրման համակարգը Համապատասխան վերլուծություններ</p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ՄՈՒՀ-ում կրթությունն իրականացվում է բակալավրիատի 28 և մագիստրոսական 13 ծրագրերով: Կրթական բարեփոխումների շրջանակներում մշակվել է մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգը և ներդրման ռազմավարությունը: ՄԿԾ-ները կազմված են &lt;&lt;թյունինգ&gt;&gt; մեթոդաբանությամբ: ՄԿԾ-ները պարբերաբար վերանայվում են՝ համաձայն ընդունված կարգի, թեև դեռևս առկա են որոշակի խնդիրներ, որոնք կարիք ունեն լուծման: Լրամշակման կարիք ունեն հատկապես կրթական գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները, բենչմարքինգի քաղաքականությունը:</p>	
<p><b>ՉԱՓՈՐՈՇԻՉ</b> է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական</p>	

տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը <a href="http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt">http://vsu.am/index.php/hy/buhi-masin/iravakan-pastatxter/kanonakarger/216-yundhanur-iravakan-akt</a></p> <p>Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները (հայտարարություններ ՁԼՄ-ներում, հետադարձ կապ)</p>
--------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Վերլուծությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները լրամշակման կարիք ունեն: Այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվում, մասնավորապես վերանայվել է ՄՈՒՀ-ի կողմից հասարակությանը տեղեկատվության տրամադրման համակարգը: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի քաղաքականությունը ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների վերաբերյալ հրապարակային տեղեկատվության տարածման ուղղությամբ ՄՈՒՀ-ում տեղեկատվական միջավայրի ստեղծման և զարգացման քաղաքականության մաս է կազմում: Այդ նպատակով համալսարանի ուսումնական և օժանդակ ստորաբաժանումները համակարգչային տեխնիկայով ապահովման աշխատանքներ են կատարվել: Տեղեկատվական դաշտի հարստացումն ուղղված է կրթության ոլորտում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հետագա զարգացմանը և կրթության գործընթացի տեղեկատվության կատարելագործմանը:

*Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

<i><b>Ուժեղ կողմեր.</b></i>	<i><b>Թույլ կողմեր</b></i>
<ol style="list-style-type: none"> <li>1. Հստակ ձևակերպված առաքելություն, մշակված ռազմավարություն բուհի մատուցվող ծառայությունների վերաբերյալ:</li> <li>2. Կառավարման մասնակցային մոտեցում:</li> <li>3. Ղեկավարության պատրաստակամություն որակի քաղաքականության զարգացման վերաբերյալ:</li> <li>4. Շահակիցների մասնակցություն կառավարման գործում:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ֆինանսական մուտքերի ձևավորման անկատարություն:</li> <li>2. Ֆինանսական աուդիտի բացակայություն:</li> <li>3. Արտաքին շահակիցների հետ թույլ կապ:</li> <li>4. Գովազդային և տեղեկատվական հրապարակումների դաշտի անկատարություն</li> </ol>
<i><b>Հնարավորություններ</b></i>	<i><b>Սպառնալիքներ</b></i>
<ol style="list-style-type: none"> <li>1. ՄՈՒՀ-ի աշխատակիցների ներգրավվածության ապահովումը որակի կառավարման գործընթացներում:</li> <li>2. ԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների մշակման հնարավորություն:</li> <li>3. Գործատուների պատրաստակամությունը համագործակցության դաշտի զարգացման գործում:</li> <li>4. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Սոցիալ-տնտեսական վիճակի անկայունություն:</li> <li>2. Ֆինանսական մուտքերի նվազում:</li> <li>3. Օրենսդրական դաշտի անկատարություն:</li> </ol>

<p>ընդլայնում:</p> <p>5. Նորարարական կրթության նկատմամբ բարենպաստ դաշտի ստեղծում:</p> <p>6. Հայաստանյան և միջազգային բուհերի հետ համագործակցություն:</p> <p>7. Նոր մասնագիտությունների ոլորտի մասնագետների պատրաստում:</p>	
--	--

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

ՎՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց աշխատանքային գործառույթները իրականացնում են՝ ըստ համալսարանի 2014-2018թթ. զարգացման ռազմավարության հիմնական ուղղությունների:

Համալսարանական կրթության անցումն անհրաժեշտություն է ստեղծում աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումների ձևավորման համար, որը ենթադրում է.

- ✓ ավելի ընդարձակել աշխատակիցների և շահակից կողմերի ներգրավվածությունը կառավարման գործընթացներում,
- ✓ կատարելագործել ֆինանսական մուտքերի և ֆինանսական ռեսուրսների ձևավորման և կառավարման մեխանիզմները,
- ✓ ստեղծել ֆինանսական աուդիտի համակարգ,
- ✓ առավել ամրապնդել արտաքին շահակիցների հետ կապը,
- ✓ կատարելագործել գովազդային և տեղեկատվական հրապարակումների դաշտը:

**III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

**ԶԱՓԱՆԻՇ:** *ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը*

ՄՈՒՀ-ը ձգտում է պահպանել իր առաջատար դիրքը Հայաստանի Հանրապետության հյուսիսային տարածաշրջանում որպես կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող կենտրոն:

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերը վերամշակվում են ըստ կրթական ծրագրերի որակին ներկայացվող Բոլոնյան գործընթացի և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի պահանջների, համալսարանի զարգացման հայեցակարգին և ռազմավարությանը համապատասխան: Դրանք մշակված են համալսարանի կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարությամբ նախատեսված ընթացակարգով և համապատասխանում են աշխատաշուկայի կարիքներին, ունեն թափանցիկ կառուցվածք, միտված են կրթական վերջնարդյունքներին և համադրելի են այլ ՄՈՒՀ-երի ծրագրերի հետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքերը Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը [I Mission\1.9.doc](#)  
Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և կատարված աշխատանքը [I Mission\1.3.docx](#)

*Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:*

ՎՊՀ-ում սկսվել են կրթական լայնածավալ բարեփոխումներ՝ միտված ուսուցման արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի ապահովմանը և նրանց՝ հնարավորին չափով համապատասխանացմանը եվրոպական կրթական չափանիշերին: Բուհն առաջարկում է ԿԾ-ի կրթական բոլոր մակարդակների լայն ցանկ, որը համահունչ է հաստատության առաքելությամբ սահմանված գործունեության հիմնական ուղղություններին: Համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է 40 կրթական ծրագիր, որոնցից 27-ը բակալավրի, 13-ը՝ մագիստրոսի: [III\3.8.doc](#) 2015 թ-ի ընդունելության արդյունքում կներդրվեն 3 նոր համալսարանական ծրագրեր (քայլը ռազմավարական է), արդյունքում ներդրված ՄԿԾ-ների թիվը կհասնի 43-ի: «Մերվիս», «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա», «Հոգեբանություն» ՄԿԾ-ների ներդրումը համահունչ է Լոռու մարզի զարգացման քաղաքականությունը: Նշված ՄԿԾ-ների մշակման գործընթացում խախտվել է կրթական ծրագրերի հաստատման կարգով հաստատված ժամանակացույցը, մյուս բոլոր պահանջները և քայլերը պահպանված են, որոնք բխում են համալսարանական կրթության կազմակերպման ռազմավարությունից և 2014թ-ի ապրիլին կարգավիճակի փոփոխությունից:

ՄԿԾ-ների իրականացման համար առաջնահերթ և կարևորագույն է համարվել մարդկային և նյութական ռեսուրսներով ապահովվածության խնդիրը: Գիտական աստիճան և կոչում ունեցողների տեսակարար կշիռը պրոֆեսորադասախոսական հիմնական անձնակազմի մեջ 74% է, իսկ ընդհանուրի մեջ՝ 57% , որոշ ամբիոնների դեպքում այդ թիվը հասնում է 80-100% (կենսաբանություն, հայոց լեզու, մանկավարժության): [III\3.4.pdf](#) Նախկինում լինելով մանկավարժական բուհ, ունենալով տարածաշրջանի հանրակրթական օջախների բարձրորակ մասնագետներով ապահովելու առաքելությունը՝ լուրջ ուշադրություն է դարձվել մանկավարժություն գիտաճյուղի զարգացմանը, մասնագետներով ապահովմանը: Մարդկային ռեսուրսները չկորցնելու համար, ելնելով համալսարանի առջև դրված նոր խնդիրներից, այսօր ծրագրեր են մշակվում մասնագետների վերաորակավորման համար, մասնավորապես, մանկավարժության և հոգեբանության ամբիոնների ռեսուրսները կօգտագործվեն նաև «Սոցիալական աշխատանք» ՄԿԾ-ի կարիքների բավարարման համար՝ վերապատրաստման, շարունակական կրթության ճանապարհով (2014-15 ուստարում ունենք ԵՊՀ-ում մեկ որակավորվող):

Համալսարանն ունի որակի հստակ քաղաքականություն. քաղաքականության ռազմավարական խնդիրներն իրականացվում են ըստ կանոնակարգերի, կարգերի և ընթացակարգերի [III\3.18.doc](#) <http://www.vsu.am/karg/ararkaiakan%20nkaragir%20nor.pdf>, <http://www.vsu.am/karg/krtakan%20cragreri%20hastatman>. և §Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության

քաղաքականությունը և ընթացակարգը՝ համապատասխան ստորաբաժանումների կողմից:

2007-2008 ուստարում ՎՊՀ-ն անցում է կատարել 5-ամյա կրթությամբ միաստիճան համակարգից բակալավրի և մագիստրոսի որակավորումներով երկաստիճան կրթական համակարգի:

Առկա ուսուցման կրեդիտային համակարգով կրթական ծրագրերը ներդրվել են 2008-ից, հեռակա ուսուցման համակարգում՝ 2012թ-ից: 2007թ-ին մշակվել և ներդրվել են «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման հաշվառման» կանոնակարգը:

<http://www.vsu.am/karg/kreditneri%20kutakman%20norrrrrrrrrrrrrrr.pdf> Վերջինս 2015թ-ին վերամշակվել է և հունվարի 30-ի գիտխորհրդի նիստով հաստատվել:

Համալսարանի՝ 2010-2015 և 2014-18թթ. զարգացման հայեցակարգերում կարևորվում են բոլորնյան գործընթացի հիմնադրույթների զարգացումը և դրա իրականացման խթանումն ու ուղղորդումը դեպի կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչները, կրթական ծրագրերի միջազգային հավաստագրման գործընթացի զարգացումը ու կրթական ծառայությունների նկատմամբ շահագրգիռ կողմերի պահանջների բարձրացումը::

ՄԿԾ-ների մշակման համար հիմք են ընդունվել ՀՀ պետական կրթական չափորոշիչները, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները) և ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակը (ՀՀ Կառավարության 2011թ. մարտի 31-ի N 332-Ն որոշումը), շնորհվող որակավորումների վերջնաարդյունքները:

Ընդունված մեթոդական հենքի և մշակված պիլոտային ծրագրի /Սոցիալական մանկավարժություն, OSI, գրանտ N 16532/ փորձի հիման վրա ՎՊՀ-ի բոլոր ֆակուլտետներում մշակվում են կրթական վերջնաարդյունքների վրա հիմնված ՄԿԾ-ներ:

Ռազմավարության մշակմանը նախորդել են բազմաթիվ քննարկումներ, պատրաստվել են նախնական փաստաթղթեր, անցկացվել է փորձագիտական մանրակրկիտ աշխատանք ինչպես ներքուհական, այնպես էլ՝ ՀՀ առաջավոր բուհերի տարբեր փորձագետների հետ:

ՎՊՀ-ի մասնագիտական՝ կրթական, գիտակրթական բոլոր ծրագրերը մշակվել և մշակվում են Բոլոնյան փաստաթղթերում առաջարկված նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ թյունինգ-մեթոդաբանությանը համապատասխան: Ներկա փուլում ՎՊՀ-ի բոլոր ՄԿԾ-ները նկարագրված են կամ նկարագրվում են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության:

Բոլոր գործող և ստեղծվող կրթական ծրագրերը մշակվում և վերամշակվում են հայեցակարգային սկզբունքների հիման վրա:

Ինչպես 2010-2014թ հայեցակարգում, այնպես էլ 2015թ հաստատված «ՎՊՀ-ի զարգացման հայեցակարգ»-ում հստակ սահմանված են համալսարանի առաքելությունը, նպատակային կողմնորոշիչները, տեսլականը, որի համաձայն՝ ՄՈՒՀ-ը ձգտում է պատրաստելով կոմպետենտ մասնագետներ, բավարարել աշխատաշուկայի պահանջները և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն, ապահովել կայուն զարգացում՝ կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնելով շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն, պատրաստել

հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:

Այս տեսլականի ներքո նախանշված են չորս գերակա առաջնահերթություններ՝ **կրթություն, գիտություն, հետազոտություն և միջազգայնացում**: ՄՈՒՀ-ի նպատակային կողմնորոշիչների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում կրթական գործունեությունը:

ՎՊՀ-ում իրականացվող ՄԿԾ-ները համահունչ են նրա առաքելությանը, տեսլականին և նպատակային կողմնորոշիչներին: Դեռևս 1969թ-ից ստեղծվելով որպես Հայաստանի հյուսիսային շրջաններին մանկավարժական կադրերով ապահովող հաստատություն՝ ներդրվել են <Հայոց լեզու և գրականություն>, <Մաթեմատիկա> մասնագիտությունները:[III\3.5.docx](#), [III\3.7.doc](#) Հանրակրթության ուսումնական պլաններում միշտ էլ հայոց լեզու, գրականություն, հանրահաշիվ, երկրաչափություն (այժմ՝ մաթեմատիկա) առարկաների ժամաքանակը մեծ է եղել, հետևաբար նաև ուսուցիչների պահանջարկը և մեր պատրաստած մասնագետների առաքելությունը եղել է նշանակալից: Ներկայումս ներդրված համապատասխան ՄԿԾ-ները ամբողջությամբ համապատասխանում են և համահունչ են ինչպես դպրոցի, այնպես էլ լուսավորչական գործունեության պահնջներին:

2015 թվականին ընդունելություն է կատարվելու 030500 <Իրավագիտություն> մասնագիտությամբ՝ իրավագիտության բակալավրի որակավորմամբ (նախկինում՝ մանկավարժության բակալավր):

Հանրակրթական ծրագրերում ստեղծված իրավունքի առարկայախումբը այսօր <Հասարակագիտության> մի մասն է միայն, ուստի դրանից տարածաշրջանում իրավաբանի մասնագիտության նկատմամբ միշտ էլ հետաքրքրություն է եղել և կա, նամանավանդ, որ շահառուներից շատերին հասանելի չի եղել մայրաքաղաքում ուսանելը: Ստեղծված է նոր ՄԿԾ, որի ուսումնական պլանի դասընթացների վարման համար առկա է մատրիցային ռեսուրսը: [III\3.11.doc](#)

ՄԿԾ-ների որակը և մրցունակությունը ապահովելու համար համալսարանում ներդրվել է բենչմարքինգի տեխնոլոգիան՝ բարձր վարկանիշ ունեցող բուհերի գործունեության մշտական ուսումնասիրություն և փորձի վերլուծություն, ինչպես նաև ՄԿԾ-ների համադրական վերլուծություն՝ կրթական ծառայությունների ներքին և արտաքին շուկաներում ՄՈՒՀ-ի ներդրումային վարկանիշը բարձրացնելու նպատակով:

2010թ-ից աշխատանքներ են տարվել ՄԿԾ-ների տեղեկագրքերի ստեղծման ուղղությամբ: 2012թ կայքում տեղադրվել են և հասարակության լայն շրջաններին (այդ թվում՝ դիմորդներին, ուսանողներին) հասանելի են դարձել 34 ՄԿԾ-ների տեղեկագրքեր, որոնցից 23-ը բակալավրի հիմնական կրթական ծրագրերով, իսկ 11-ը՝ մագիստրոսի հիմնական կրթական ծրագրերով: ՄԿԾ-ների համալսարանականացման գործընթացին զուգընթաց մշակվում են և մինչև 2015թ ապրիլի 30-ը կայքում կտեղադրվեն բոլոր ՄԿԾ-ների նոր տեղեկագրքերը /հիմնական մասը համալսարանականացված/:

Մշակված ՄԿԾ-ների առաջին տարբերակների կառուցվածքային մաս չէր կազմում մասնագիտության մասնագիրը, որը լրացվել է 2014թ-ին: Ներկայումս բոլոր ՄԿԾ-ների մասնագրերն առկա են:

2008թ-ին մշակվել և 2009-ից ներդրվել են դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ (ԱՌԻՓ): Վերջինս կրթական ծրագրերի կարևորագույն բաղադրիչ է:

2014թ կատարվել է ինքնավերլուծություն, որի երրորդ բաժնի ա չափորոշիչի առաջարկություն է կատարվել (դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանության, ուսումնառության արդյունքի և գնահատման մեթոդների աղյուսակներ նոր ՄԿԾ-ներում առարկայացված են):

ՄԿԾ-ները քննարկվել են ինչպես ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդներում (պրոռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով), այնպես էլ՝ ռեկտորատի նիստերում (ռեկտորատի 2014թ մարտի 7-ի (արձ. թիվ 7) և ապրիլի 14-ի (արձ. թիվ 10): Նույն թվականին ՈԱԿ-ի կողմից կատարվել է «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեղագործական քիմիա» ՄԿԾ-ների աուդիտ. Ճիշտ առաջարկությունները և քննադատությունը վերախմբագրման ընթացքում հաշվի են առնվել:

Իրականացվել է հետխորհրդային և եվրոպական երկրների առաջավոր փորձի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ այդ երկրներ անմիջական այցելություններով /Գերմանիա, Չեխիա, Էստոնիա, Լեհաստան, Վրաստան, Ռուսաստան, Բելոռուսիա, Շվեդիա, Ղազախստան, Ուկրաինա, Ռուսաստան/ և նյութերի հեռակա ուսումնասիրությամբ: ՄԿԾ-երին կցված է այն երկրների ցանկը, որոնց օրինակով կատարվել է համեմատական վերլուծություն:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում մշակվել և հաստատվել է «Բենչմարքինգի իրականացման ռազմավարությունը», «Ուսանողը և ժամանակակից կրթական ծրագիրը /ուղեցույց ուսանողների համար», /Վանաձոր, 2011, հեղինակներ՝ Գ. Կ. Խաչատրյան, Ս. Կարաբեկյան/, «Սոցիալական գործընկերությունը բուհերի և աշխատաշուկայի միջև՝ որպես նորարարական զարգացման միջոց» /Վանաձոր, 2011, հեղինակներ՝ Ս. Թումանյան, Ս. Բաբայան/:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

**Հիմքեր** Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (պատահական հիմունքներով ՈԱԱԿ-ի կողմից ընտրված 3 ՄԿԾ-ների համար)  
Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը  
<http://vsu.am/karg/kreditneri%20kutakman%20norrnrnrnrnrnrnr.pdf>, [I Mission\1.1.docx](#)  
Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը (դասախոսական տեքստեր, ուսումնամեթոդական այլ նյութեր՝ տեղադրված համալսարանի ներքին ցանցում, գրադարանային և տեղեկատվական միջոցներ)  
Համապատասխան հիմքեր

*Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*  
Բոլոնիայի հռչակագրի վավերացման համաձայն՝ Հայաստանում ընթացող բարեփոխումները թելադրում են դասավանդման և ուսումնառության ավանդական մեթոդների վերանայում, հարացույցի փոփոխում՝ որակական մոտեցմամբ, որի հիմքում ընկած է գիտելիքների, հմտությունների և կարողությունների /երկրորդ սերնդի հիմնօրինակներ/ շնորհիվ ու որակավորումների արդյունքներին նպատակաուղղված /կոմպետենտային

ձեռքբերումը՝/երրորդ սերնդի հիմնօրինակները/: Ակնհայտ է, որ ՄՈՒՀ-ում ուսումնառության ընթացքում ուսանողն ընդգրկված է սոսկ ուսումնական գործունեության մեջ, իսկ էլքային շեմում նրանից անհապաղ պահանջվում է գործունեության նոր խոր մասնագիտական տեսակ, որին նա դեռևս լիարժեք պատրաստ չէ: Հետևաբար, պետք է արմատապես վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդների և մոտեցումների ամբողջ փաթեթը, որպեսզի գործընթացը դառնա առավելապես ինտերակտիվ և պատրաստի ուսանողին մասնագիտական գործունեությանը: Անհրաժեշտություն է ծագել ներդնել նորարարական մեթոդներ, որոնք նպաստում են շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը: Չնայած կատարված քայլերին, այնուամենայնիվ անելիքներ դեռևս կան:

ՄԿԾ-ների մշակման և ներդրման ռազմավարության մեջ կարևորվում են ուսումնառության և դասավանդման բազմաբնույթ մեթոդները և տեխնոլոգիաները: Պարապմունքների կազմակերպման ավանդական մեթոդները լրացված են նորարարական ձևերով, որոնք ենթադրում են ուսանողի առավելագույն ներգրավվածությունը, երբ նա ոչ թե ուսումնական գործընթացի պասիվ մասնակից է, ով պետք է յուրացնի որոշակի տեղեկատվություն, այլ նոր գիտելիքի ձևավորման գործընթացի ակտիվ մասնակից /համագործակցային մանկավարժություն/: 2010-14թթ. ռազմավարությունում թվարկված մեթոդների հիմքում ընկած էին բացատրական-ցուցադրական, արտադրողական և վերարտադրողական մեթոդների համադրումը: Դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդները ընդգրկված են նաև առարկաների ուսումնամեթոդական փաթեթներում /այսուհետ՝ ԱՈՒՓ/, որոնք ՎՊՀ-ում ներդրվել են 2009 թվականից և անցնում են ամենամյա մշտադիտարկում և ենթարկվում համապատասխան փոփոխությունների: Որոշ մասնագիտությունների կրթական ծրագրերի /Մաթեմատիկա, Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն, Դեղագործական քիմիա/ վերլուծությունը վկայում է, որ ԱՈՒՓ-ներում ներառված են արդիական մեթոդներ, որոնք լրացնում են ռազմավարության մեջ ներկայացված ցանկը: Ներկայումս մշակվում է արդիական մեթոդների բանկ, որը որպես ուղեցույց կտրամադրվի համալսարանի բոլոր ամբիոններին: Դասավանդման և ուսումնառության մեթոդների, մոտեցումների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը արդյունավետ իրականացնելու նպատակով մանկավարժության ամբիոնի փորձագետները, պրակտիկայի բաժինը պարբերաբար անցկացնում են սեմինարներ: Համալսարանի ուսումնամեթոդական բաժնի տեղեկատվական տեխնոլոգիաների մեթոդիստը դասախոսներին տրամադրում էր անհատական խորհրդատվություն՝ նորարարական մեթոդների յուրացման նպատակով (վերապատրաստում է անցել 29 դասախոս): Նշված հաստիքն այսօր կրճատված է. խնդիրը լուծվում է դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներում:

ՄԿԾ-ների բաղադրամաս է «Պահանջվող կոմպետենցիաների և դրանք ձևավորող տվյալ ՀԿԾ-ի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցման մատրիցան»: [III3.12.docx](#) վերջինիս գործնական կիրառումը բոլոր մեթոդների տարբեր իրադարձային վիճակներին, դասավանդվող նյութին համապատասխանեցումը, վերջապես, որպես գործիքակազմ ընդունումը, անշուշտ կնպաստի դասավանդման և ուսումնառության որակի բարձրացմանը: Իհարկե, բոլոր մեթոդները չէ, որ այս պահին հասանելի են պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմին:

ԱՈՒՓ-ների քարտերում (քարտեզ) ընտրված են դասավանդման տարբեր ձևեր, մեթոդներ: Դեռևս նկատելի է դասական ձևերին նախապատվություն տալու հակումը, սակայն վերջին տարիների ընթացքում կատարվել և կատարվում է զգալի առաջընթաց:

Ուսումնառության կարևորագույն տարրն է ուսանողի ինքնուրույն աշխատանքը: Համալսարանում վերջին տարիներին մշակվել և ուսանողներին տարբեր միջոցներով (կայք, ԱՌԻՓ) հասանելի են դարձել ինքնուրույն աշխատանքի ձևերը: 2015թ. բարեփոխումների և ուսումնական վարչության կողմից մշակվել են և ներդրման փուլում են ԳՄԼ-ն և կոմպետենցիաների անձնագիրը և այլն, որոնք ապրիլ ամսին հասանելի կլինեն դասավանդողներին և ուսանողներին: Ինքնուրույն աշխատանքի ձևերի ամբողջ զինանոցի օգտագործումը, անտարակույս, կնպաստի որակի բարձրացմանը: Մինչ այժմ տարածված ռեֆերատը, մասնագիտական գրականության մշակումը, լավագույն դեպքում էսսեն, ստեղծագործական մոտեցմանը, անհատականության բացահայտմանը և ինքնագարգացմանն այնքան էլ չեն մղում: Առաջարկվող մեթոդների ներդրումը կնպաստի ինքնուրույնության, փաստարկման, բանավիճելու, իրադարձային վիճակներում վճիռներ կայացնելու հմտությունների ու կարողությունների զարգացմանը: Կոմպետենցիաների մի մասը ձեռք կբերվի ինքնուրույն աշխատանքների միջոցով:

2014թ. համալսարանում կատարվել է ՎՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցում. դասավանդման որակից բավարարվածությունը 60-70%-ը գնահատել է 7-10 (10 միավորանոց սանդղակ), իսկ մեթոդներից՝ 61%, ինչը այլ կտրվածքով դիտարկելիս այնուամենայնիվ (1-3 միավոր է գնահատել 6%-ը) անհանգստացնող է: Բարելավման ծրագիր է մշակվում, արդեն նախապատրաստված են մեթոդական երաշխավորություններ (հարցման արդյունքները քննարկվել են 2014թ. դեկտեմբերի 18-ի գիտական խորհրդում, քանակական վերլուծությունը կցված է, տե՛ս գիտխորհրդի թիվ 10/2014-2015 արձանագրությունը):

Գործնական, հատկապես լաբորատոր աշխատանքների բաղադրիչը, ժամաքանակի, փորձերի թվի մեծացման, լաբորատորիաների վերազինման հարցերը բարձրացված են ինչպես վերը նշված հարցման ընթացքում, այնպես էլ համալսարանում պարբերաբար կազմակերպվող «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկի «Առաջարկություններ» բաժնում:

2015-2016 ուսումնական տարում ներդրվելիք ուսումնական պլաններում խնդիրը որոշակիորեն բարելավվել է:

2015թ. բյուջեի նախահաշվով նախատեսված «Սարքեր և սարքավորումներ» հոդվածի նախատեսվող ֆինանսական միջոցները կուղղվեն հիմնականում լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը (առաջարկները բյուջեի նախահաշիվը կազմելուց առաջ ներկայացնում են ամբիոնները):

Կրթական գործընթացի կարիքների բավարարման համար ժամանակակից էլեկտրոնային միջոցները բավարար են:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները հաշվարկվում և գնահատվում են ուսանողների կողմից միջանկյալ և վերջնական քննությունների ընթացքում ստացած գնահատականներով: Քննությունների արդյունքները վերլուծվում են, գնահատվում է ուսանողի իմացության առաջընթացը, արվում համապատասխան եզրահանգումներ, որոնք և ամփոփվում են ամբիոնների համապատասխան նիստերում:

ՎՊՀ-ի առանցքային փաստաթղթերում ամրագրված է համալսարանի զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը /Համալսարանի զարգացման հայեցակարգը, ՎՊՀ ռեկտորի ամենամյա հաշվետվությունները, որոց էլեկտրոնային տարբերակները տեղադրված են ՎՊՀ կայքում/, ինչն

իրականացվում է գործնականում: Համալսարանում մշակված են դասընթացների դասախոսական տեքստերը:

Համալսարանը գործնական քայլեր է ձեռնարկել և ձեռնարկում է դասավանդման և ուսումնառության գործընթացների բարելավման ուղղությամբ:

Համալսարանի զարգացման հայեցակարգում նախանշված ռազմավարությունը հիմք կդառնա մինչ 2018թ. ՎՊՀ-ի դասավանդման և ուսումնառության արդիական մեթոդների ներդրման և դրանց էական բարելավման գործում:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հիմքեր՝ Ուսանողների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը <http://www.vsu.am/karg/kreditneri%20kutakman%20norrrrrrrrrrrrrrr.pdf,I Mission\1.4.docx>

Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները

<http://www.vsu.am/karg/kreditneri%20kutakman%20norrrrrrrrrrrrrrr.pdf>

Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթեր <http://vsu.am/karg/akadem-aznv.pdf>

Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը [III\3.14.doc](#)

Ուսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները (մշտադիտարկում, հարցումներ, արդյունքների վերլուծություն)

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները [III\3.5.docx](#) [III\3.7.doc](#) [III\3.10.docx](#)

*Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Կրթական համակարգում իրականացվող արմատական փոփոխությունները ստիպում են վերանայել նաև ուսանողների գնահատման քաղաքականությունը:

Ուսանողի գնահատման քաղաքականությունը բարձրագույն կրթության ժամանակակից համակարգում որդեգրել է չափանիշերի և հիմնօրինակների վրա հիմնված մոտեցում: Գնահատման այդ մոդելը հնարավորություն է ընձեռում միմյանց հարմարեցնելու գնահատման ընթացքը ուսումնառության և դասավանդման մեթոդներին, համապատասխանեցնելու գնահատման մեխանիզմները դասընթացի կրթական վերջնարդյունքներին և դրանով թույլ է տալիս իրապես երաշխավորելու գնահատման որակը: Չափանիշների և հիմնօրինակների վրա հիմնված գնահատման մոտեցումը ապահովում է որակական մի հենք, որը.

- ուղղորդում և խրախուսում է ուսանողի արդյունավետ ուսումնառությունը. անաչառ, հուսալի և արժանահավատ կերպով չափում է ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելուն ուղղված ուսումնական գործողությունների կատարման ընթացքը, սահմանում և ապահովում է ակադեմիական չափորոշիչները:

Արդյունավետ գնահատման երեք սկզբունքներն են.

1. հուսալիությունը,
2. արժանահավատությունը,
3. անաչառությունն ու արդարացիությունը:

ՎՊՀ-ում ուսանողների գնահատման համակարգի վերանայման գործընթացը սկսվել է 2009 թվականից: Ներդրվել է գրավոր միջանկյալ քննությունների համակարգ, որոնց արդյունքները կանխորոշում են վերջնական քննության գնահատականը: Ներդրվել է նաև գիտելիքների ստուգման համակարգչային թեստավորման տարբերակը: Գիտելիքի ստուգման նման ալգորիթմը, իհարկե, առաջընթացային քայլ է և նվազեցնում է սուբյեկտիվության գործոնը, բայց չի բացառում գրագողությունը: Երկաստիճան կրթական համակարգին անցնելուն զուգահեռ՝ ներդրվել է նաև գնահատման 20 միավորանոց սանդղակը: Ուսանողների՝ ըստ ուսումնառության արդյունքների գնահատման քաղաքականության մշակման խնդիրը բազմիցս քննարկվել է ֆակուլտետների խորհուրդների, համալսարանի գիտխորհրդի նիստերում, որոնց արդյունքները և դինամիկան արտացոլված են փաստաթղթերում:

Վերոհիշյալ փաստաթղթերում նշված են ուսումնառողների գնահատման մեթոդների վերանայման, դրանց արդյունավետությունն ապահովող մեխանիզմները, ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդները և չափանիշները, գիտելիքի ստուգման ձևերը, բողոքարկման ընթացակարգը և վերահանձնման գրաֆիկները և ընթացակարգը, ավարտական ատեստավորման չափանիշները և ընթացակարգը, ավարտաճառի կատարման պահանջները, բազմագործոնային համակարգի բաղադրիչները և այլն: Մշակված է ինքնուրույն աշխատանքի գնահատման ընթացակարգ:

Մշակվել և ներդրվել է նաև <<Ուսանողի գնահատման ուղեցույց>> /ՎՊՀ-ի դասախոսական և վարչական կազմի համար, որում արծարծվել են արդյունավետ գնահատման հիմնական սկզբունքները, գնահատման չափանիշերը, գնահատման մեթոդների ընտրությունը, գնահատման համար անհրաժեշտ ժամանակահատվածի սահմանումը և այլն:

Գնահատման բոլոր նորարարական ձևերը ներդրումից առաջ քննարկվել են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

Ուսանողները ստանում են գնահատման նոր ձևերի մասին տեղեկատվություն ինպես անմիջական հանդիպումների, այնպես էլ՝ էլեկտրոնային միջոցների, դասընթացների նկարագրիչների և ԱՌԻՓ-ների միջոցով:

Համեմատական վերլուծության /բենչմարքինգի/ հայեցակարգի համաձայն՝ անցկացվում է գնահատման առաջավոր փորձի համեմատական վերլուծություն:[III\3.14.doc](#)

Ուսումնառողների գնահատման քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար. յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփվում են ամբիոնների նիստերում, ֆակուլտետների խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են նաև ընթացիկ ստուգումների արդյունքները:

2014թ. հոկտեմբերին կատարված ՏԴասախոսը ուսանողի աչքերով՝ հարցման արդյունքների մշակման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել 27-րդ կետին՝ դասախոսի գնահատման օբյեկտիվությանը. այն ներկայացվել է գիտխորհրդում (գիտխորհրդի 2015թ փետրվարի 26-ի թիվ 2/2014-2015թթ. արձանագրությունը), հանձնարարական է իջեցվել ամբիոններին այդ կետը դարձնել հատուկ քննարկման նյութ:

Հարցման ժամանակ 4 և ավելի միավոր է գնահատվել (5 միավորանոց սանդղակ) արդեն մշակված հարցաթերթիկներում մտցված դասախոսների 86.2 %-ը: Ուրախալի է, որ ուսանողների 27-րդ հարցին տրված գնահատականը և <Առաջարկություն.բաժնում կատարած

գրառումները հիմնականում համահունչ են:

2013թ. կատարած հարցումը փաստել է, որ ուսանողների զգալի մասը (47%) նախընտրում է թեստային համակարգը, ընթացիկ ստուգումները համարում են գիտելիքի գնահատման օբյեկտիվ միջոց (76%), դրանք թուլացնում են դասախոսից հոգեբանական կախվածությունը (60%):

2015թ. հունվարի 30-ի նիստով ընդունվել է գիտելիքների գնահատման նոր կարգը, որտեղ կատարվել են որոշ փոփոխություններ, կարևորվել է գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներին հաճախումը:

2015թ-ին բարեփոխումների բաժնի կողմից մշակվել է <Ուսանողների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպոտենցիաների) ստուգման, գնահատման միջոցների լրակազմի գնահատման կանոնակարգը> (ԳԱԼ), որը տիպի ստուգումների մեթոդիկաների և ընթացակարգերի լրակազմ է և հնարավորություն կտա հաղթահարել ձեռք բերած արդյունքների և կրթական ծրագրի պահանջների, դասընթացների և այլ կրթական բաղադրիչների ծրագրով պլանավորված ուսուցման արդյունքների գնահատման դժվարությունները (տեղադրվել է ներքին ցանցում. նախապատրաստվում է 2015թ. ապրիլին կայանալիք գիտխորհրդի քննարկմանը):

2015-2016թթ ԳՄԼ-ներ կմշակվեն ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասընթացների և ուսումնական գործունեության բոլոր ձևերի համար: Դրանք կներառվեն ԱՈՒՓ-ների մեջ: Այս գործընթացին կնախորդեն տարամակարդակ սեմինարներ, թրեյնինգներ: Նյութերը նախապատրաստման փուլում են :

ԳՄԼ-ի ստեղծումը որոշակիորեն պայմանավորված է նաև 2014թ. կատարած ինքնավերլուծության 3-րդ բաժնի գ ենթագլխի առաջարկությամբ:

Ակադեմիական ազնվությունն ապահովելու համար ձեռնարկվում են որոշակի քայլեր.

- գրավոր քննություններ կնիքված տետրերում,
- համակարգչային թեստավորում,
- ավարտական քննությունների ձայնագրում,
- վերահանձնում և բողոքարկում հանձնաժողովով:

<<Ուսանողի գնահատման ուղեցույցում>> հատուկ բաժին է հատկացված գրագողության հնարավորությունների նվազեցման մեխանիզմներին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ.** ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր՝	<p>Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների (ՄԿԾ-ների ուսումնական պլանի կառուցվածքը)</p> <p>Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթը (առկայության դեպքում):</p> <p><a href="#">«ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի»:</a></p> <p><a href="#">ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության կարգի</a></p> <p><a href="http://www.vsu.am/karg/ynd-2014+.pdf">http://www.vsu.am/karg/ynd-2014+.pdf</a></p> <p><a href="http://www.vsu.am/karg/texekagirq%20magistr-NOR.pdf">http://www.vsu.am/karg/texekagirq%20magistr-NOR.pdf</a></p> <p>Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն:</p> <p><a href="http://www.vsu.am/karg/ECTS.pdf">http://www.vsu.am/karg/ECTS.pdf,</a></p>
---------	--

*Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:*

*Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվա քանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:*

*Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Բնչքանո՞վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:*

ՄԿԾ-ների մշակման և ներդրման ռազմավարությունը մշակվել է՝ գերակա ուղղություն ընդունելով միջազգային չափանիշները և հիմնօրինակները: Համապատասխանաբար, բոլոր ՄԿԾ-երը /բակալավրի, մագիստրոսի/ մշակվում և վերամշակվում են Բոլոնիայի գործընթացի մասնակից բուհերում փորձարկված թյունինգ-մեթոդաբանությամբ: [III.3.9.doc](#) Բոլոր գործող և նոր ստեղծվող կրթական ծրագրերը մշակվում և վերամշակվում են հետևյալ հայեցակարգային սկզբունքների հիման վրա.

- ✓ վերջնարդյունքների և կոմպետենցիաների վրա հիմնված և ուսանողակենտրոն մոտեցում,
- ✓ ՄԿԾ-երում տեսական և գործնական բաղադրիչների հստակ տարանջատում,
- ✓ մասնագիտության կրթական ծրագրերի շարունակականություն և փոփոխականություն,
- ✓ մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանություն շուկայական պահանջներին և սոցիալական կարիքներին,
- ✓ գործատուների հետ սոցիալական գործընկերություն:

Այս սկզբունքները բխում են ՄԿԾ-ների բարելավման խնդրից: Բացի այդ՝ հաշվի են առնվել բենչմարքինգի արդյունքները. անցկացվել է այլ (հայաստանյան և արտասահմանյան) բուհերի առաջավոր փորձի ուսումնասիրություն՝ չափանշային օրինակ ձևավորելու նպատակով, ըստ որի՝ ՄԿԾ-ները համահունչ են նմանատիպ ՄԿԾ-ներին:

ՄԿԾ-ների կառուցվածքը և դրանցում կամրնտրական դասընթացների առկայությունը, որոնց քանակը հատկապես մեծ է մագիստրատուրայում, կնպաստեն ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների և կրթական ծրագրերի համադրելիությանը, ուսանողների շարժունությանը: 2014-2015 ուսումնական տարում մշակված նոր ուսումնական պլաններում կամրնտրական դասընթացների տեսակաբար կշիռն ավելի է մեծացել՝ մինչև 20% բակալավրի կրթական ծրագրերում, 40 %՝ մագիստրոսական կրթական ծրագրերում:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում (փետրվար-մարտ) ուսանողներին հնարավորություն է տրվում ընտրելու կամրնտրական դասընթացը՝ ելնելով տրամադրված ուսումնամեթոդական նյութերից, դասախոսի հմտությունից (նախատեսվում է դաս-ներկայացումներ), ուսանողության շրջանում ունեցած վարկանիշից: 2015-16 ուսումնական տարվա համար նախատեսվում է նաև համահամալսարանական որոշ դասընթացների դասավանդողներին փորձնականորեն ընտրելու հնարավորություն (հայոց պատմության հիմնահարցեր, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, իրավագիտություն,

մշակութաբանություն, հոգեբանություն, մանկավարժություն և այլն):

ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան կարգը թերի է և արտասահմանյան բուհերի հետ շարժունությունը կարգավորելու համար դժվարահարույց, այնուամենայնիվ, արտասահմանից վերադարձած ուսանողների համար բարդություններ չեն ստեղծում: Հարցը օրենսդրական դաշտով կարգավորելու համար մինչև 2015 թ սեպտեմբեր կմշակվեն կանոնակարգ և ընթացակարգ:

Առ 01.01.2015թ ՄՈՒՀ-ում շարժունության կարգով սովորում է մեկ մագիստրանտ՝ Դանուտա Մարիա Ստոյակ: Նրա համար կազմվել է անհատական պլան, դասընթացները կազմակերպվում են ինչպես խմբային, այնպես էլ անհատական:

Այնուամենայնիվ, այս ամենը բավական չէ, որպեսզի ուսանողը կարողանա կառուցել կրթության անհատական պլան /PDP, progress file/ և կուուսակի կրեդիտների որոշակի քանակ ցանկալի առարկաներից, որը սահմանափակում է ուսանողների շարժունությունը և՛ համալսարանի ներսում, և՛ միջազգային փոխանակման ծրագրերում, ինչը ներկա փուլում գրեթե անհնարին է իրականացնել համապատասխան իրավական դաշտի բացակայության պատճառով:

ՎՊՀ-ում մշակվել և հաստատվել է պայմանագրի և ակադեմիական տեղեկանքի ձևաչափ՝ բուհերի միջև երկկողմանի փոխանակում իրականացնելու նպատակով: Այդ փաստաթղթերը արդեն կիրառվում են, քանի որ ՎՊՀ-ն ներգրավված է ERASMUS MUNDUS ծրագրի EMINENCE և IANUS նախագծերում. առ 1-ը հունվարի 2015թ 26 ուսանող, իրավունք է ստացել սովորելու արտասահմանում, 2015-16 ուստարում՝ 7 ուսանող: Ուսանողների շարժունությունը և համալսարանի միջազգայնացումը խթանելու համար ՄՈՒՀ-ում գործում է լեզուների կենտրոն: Համալսարանում իրականացվել են տարբեր ծրագրեր միջազգային համագործակցության շրջանակներում: ՄՈՒՀ-ում TEMPUS ծրագրի շրջանակներում MAHATMA նախագծով մի քանի եվրոպական բուհերի հետ ներդրվել է §Կրթության կառավարում> մասնագիտությունը:

ՎՊՀ-ն համագործակցության եռակողմ պայմանագրեր է կնքել Դարմշտադտի Կիրառական գիտությունների համալսարանի, Օսնաբրյուկի /Գերմանիա/ Կիրառական գիտությունների համալսարանի, Կոստրոմայի պետական համալսարանի, Մինսկի լեզվաբանական համալսարանի, Ղազախստանի, Լեհաստանի բուհերի հետ:

Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորություններն ընդլայնելու համար ՄՈՒՀ-ն իրականացնում է հնգաստիճան ուսուցում՝ ավագ դպրոց-քոլեջ-բակալավրիատ-մագիստրատուրա և ասպիրանտուրա: Նույն նպատակով կազմակերպվում են հետբուհական կրթության, ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման, ընդունվողների նախապատրաստական դասընթացներ: 2012-13 ուստարվանից բուհում գործում է նաև <<Դասախոսների և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման>> <http://www.vsu.am/karg/dasaxosneri%20usumn-NOR.pdf> բաժինը ECTS կրեդիտային համակարգով: Բուհում գործում է նաև Կարիերայի կենտրոն: <http://www.vsu.am/index.php/hy/karucvacq-menu/vpmi-xorhurd/2013-08-16-19-38-47/gitutyam-mijazgajin-harc-gcov-pror/kariera-haravar-krtutyun-kentron>

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր՝	Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը (առկայության դեպքում) Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները
---------	---

	<p><u>/հարցումներ, վերլուծություն, քննարկումներ/</u></p> <p>Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին) <a href="#">X\10.4.docx</a></p> <p>Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը (կցել կամ հղում կատարել համապատասխան փաստաթղթին) <a href="#">X\10.6.docx</a></p> <p>Գործընթացների անաչառությունն երաշխավորող մեխանիզմները (հղում կատարել կամ կցել կանոնակարգը)</p>
--	--

*Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:*

ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականությունը մշտապես եղել է բուհի ուշադրության կենտրոնում: Համալսարանում կան կառուցվածքային հատուկ ենթաբաժիններ, որոնք իրականացնում են այդ քաղաքականության բարելավումը.

- ✓ կրթական բարեփոխումների բաժին,
- ✓ որակի ապահովման կենտրոն:

Կրթական ծրագրերի կազմման հայեցակարգային սկզբունքները 2010 թվականին մշակվել են **Ներկառուցված որակի մեխանիզմով կրթական ծրագրերի մշակում և ներդրում** N16532 ծրագրի շրջանակներում /OSI/, ինչը թույլ է տալիս կիրառել մշակված սկզբունքները և մոտեցումները կրթական ծրագրերի վերանայման և վերամշակման գործընթացում: Այդ ծրագրի շրջանակներում մշակվել և հետևողականորեն կիրառվում են պլանավորման, առաջադրման, հաստատման, վավերացման, իրագործման, ներքին և արտաքին փորձաքննության, մշտադիտարկման, գնահատման, կրթական ծրագրերի պարբերաբար թարմացման մեխանիզմները և պաշտոնական ընթացակարգերը: Ծրագրի շրջանակներում մշակվել են նաև հիմնական շահառուներին՝ գործատուներին, ուսանողներին, շրջանավարտներին ներգրավելու արդյունավետ մեխանիզմներ: Մշակվել և իրականացվել են նաև ներքին և արտաքին շահառուների հետ համագործակցության մեխանիզմներ /կլոր սեղանների, ֆոկուս-խմբերի, որակական և քանակական հարցումների անցկացում/: ՎՊՀ-ի կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներից են ՎՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումները: Հարցումներն իրականացնելու համար օգտագործվում են համապատասխան հարցաթերթեր, որոնք մշակվել և ներդրվել են արհեստավարժ սոցիոլոգի կողմից՝ N16532 պիլոտային ծրագրով:

Հարցումների արդյունքները վերլուծվում և ամփոփվում են ՄԿԾ-ների մշակման հանձնաժողովների կողմից, որոնք ձևավորվել և գործում են 2010 թվականից:

Որոշ ՄԿԾ-ներ և ԱՌԻՓ-ներ անցնում են ներքին և արտաքին փորձաքննություն, բայց այդ գործընթացը կրում է էպիզոդիկ բնույթ և վերջնականապես կայացած չէ: Բոլոր այս տվյալները քննարկվում են համապատասխան ամբիոնների նիստերին, ֆակուլտետների խորհուրդների նիստերին, որից հետո ՄԿԾ-ներում ներդրվում են փոփոխություններ՝ հաշվի առնելով գործատուների, ուսանողների և շրջանավարտների կարծիքները, ՄԿԾ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին և այն փաստը, թե որքանով են ՄԿԾ-ները արդյունավետ ժամանակակից աշխատաշուկայում մրցունակ մասնագետ պատրաստելու համար: Համալսարանում մշակվել և հրատարակվել է երկու ձեռնարկ՝ շահառուների հետ գործընկերության վերաբերյալ, որոնց հիման վրա ներկայումս մշակվում են

հայեցակարգ և ընթացակարգ:

Վերլուծությունը ցույց տվեց, որ ՎՊՀ-ում իրականացվում է որոշակի գործունեություն ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականությունն արդյունավետ իրագործելու ուղղությամբ, որը կնպաստի Բոլոնյան հռչակագրի գերակա ուղղություններից մեկի իրականացմանը, այն է՝ ՄԿԾ-ների համադրելիություն, թափանցիկություն, նրանց՝ եվրոպական էտալոնային չափորոշիչներին համապատասխան: Ներկայումս փորձը ընդհանրացվում է մշակվող ընթացակարգերում՝ ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ, ՄԿԾ-ների հաստատման կարգ: Այդ գործընթացի արդյունավետությունը և անաչառությունն առայժմ չափելի չեն, քանի որ այն գտնվում է մշակման և փորձարկման փուլում: Նախատեսվում է իրականացնել լայնածավալ աշխատանք պրոֆեսորադասախոսական կազմի, ՄԿԾ-ների մշակման հանձնաժողովների, ֆակուլտետների վարչակազմի իրագելության բարձրացում և վերապատրաստում:

*Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:*

*Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

**Ուժեղ կողմեր (ձեռքբերումներ)**

1. ՎՊՀ-ում ՄԿԾ-ների մշակման, ներդրման հաստատման, գնահատման, մշտադիտարկման, ներքին և արտաքին փորձաքննության և վերանայման, որակի անընդմեջ բարելավման քաղաքականությունը համահունչ է բուհի առաքելությանը, տեսլականին և նպատակային կողմնորոշիչներին: ՎՊՀ-ում ՄԿԾ-ներին ուղեկցող փաստաթղթերը և նյութերը վկայում են այն մասին, որ որակի ապահովման ներբուհական համակարգը կանխորոշվում է ՄԿԾ-ների որակի անընդմեջ բարձրացման կայուն գործընթացով:
2. Բենչմարքինգի իրականացման քաղաքականությունը առայժմ գտնվում է կայացման փուլում: Մշակված են Բենչմարքինգի հայեցակարգ և այն գործողությունները, որոնք կրում էին տարերային բնույթ, այժմ փոխանցվում են փաստաթղթային հաստատում ունեցող հիմնավոր հայեցակարգային բազա, մշակվում է բենչմարքինգի անցկացման արձանագրության ձևաչափ:
3. ՄԿԾ-ները կազմում են ՄՈՒՀ-ի պլանավորման բաղկացուցիչ մաս, գտնվում են անընդմեջ բարելավման գործընթացում, որը նպաստում է շարժունությանը և միջազգայնացմանը:
4. ՄՈՒՀ -ում մշակվել է ՄԿԾ-ների մշակման և ներդրման ռազմավարություն, որն անցել է ներքին և արտաքին փորձաքննություն և արտացոլում է Բոլոնյան փաստաթղթերի հիմնական գերակայությունները: ՄԿԾ-ները կառուցվում են պետական կրթական չափորոշիչներին և Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան, նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
5. ՄՈՒՀ-ում առկա է բավարար մեթոդաբանական և կոնցեպտուալ ընթացակարգային հենք, որը թույլ է տալիս բարեփոխել կրթական ծրագրերը և համապատասխանեցնել միջազգային չափանիշների պահանջներին, սոցիալական պատվերին և ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող վերջնարդյունքներին:
6. Կրթական ծրագրերը ներքին ու արտաքին շահառուների համար թափանցիկ և

հասկանալի դարձնելու նպատակով՝ ՄՈՒՀ-ում մշակվել են ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքեր: Նույն նպատակին են ծառայում համալսարանում հրատարակված **Ուսանողը և ժամանակակից կրթական ծրագիրը**, **Սոցիալական գործընկերությունը բուհերի և աշխատաշուկայի միջև՝ որպես նորարարական զարգացման միջոց**՝ մեթոդական ձեռնարկները: Առկա են ՄԿԾ-ների մշակման և ներդրման հստակ ռազմավարություն, ինչպես նաև «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» և «Ուսումնամեթոդական փաթեթներ» դասավանդվող բոլոր առարկաներից, որտեղ ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը:

7. ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը և ուսանողների շարժունությանը նպաստելու համար բուհում գործում է լեզուների ուսուցման կենտրոն: Այդ գործառույթների ակտիվացմանը նպաստում է նաև համալսարանի մասնակցությունը 2 ERASMUS MUNDUS, 5 TEMPUS ծրագրերին, ինչպես նաև համալսարանում գործող համագործակցության և արտաքին կապերի բաժինը:

### **Թույլ կողմեր**

1. Վերջնարդյունքների հիման վրա նորամուծություն համարվող ՄԿԾ-ների առկայությունը հաճախ առաջացնում է պրոֆեսորադասախոսական կազմի քննադատական հակազդեցություն: Անհրաժեշտ է կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման և իրազեկության բարձրացում՝ ներգրավելով ոչ միայն ներքին, այլև՝ միջազգային փորձագետներին:
2. Որակավորումների ազգային շրջանակի և պետական կրթական չափորոշիչների ներկա վիճակը չի կարող բավարար կոնցեպտուալ հիմք լինել ՄԿԾ-ների պահանջվող որակն ապահովելու համար, քանի որ չափանիշները վերջնականորեն լեգիտիմ չեն, իսկ Որակավորումների ազգային շրջանակում բացակայում է որակավորումների ոլորտային շրջանակը:
3. Չնայած ՄՈՒՀ-ում գործող գնահատման համակարգի առավելություններին և բավականին լուրջ հիմքերի առկայությանը՝ այն դեռևս լիարժեք չի ապահովում ակադեմիական ազնվության բավարար մակարդակ. դեռևս բացակայում են վերջնարդյունքների չափելիության հստակ մեխանիզմներ:
4. ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի կառուցվածքը դեռևս մնում է կարծրացած, որը ուսանողներին զրկում է անհատական ուսումնական ծրագրերով սովորելու հնարավորությունից: Այս գործընթացին խոչընդոտում է փորձի, մշակված տեխնոլոգիաների և համապատասխան իրավական դաշտի բացակայությունը:
5. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման ընթացակարգերը բենչմարգինգի և մշակման փուլում են, ուստի գործընթացի արդյունավետությունը հաշվարկել դեռևս հնարավոր չէ:
6. Բուհում չի գործում պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության ճկուն համակարգ:
7. Զգալի բարդություններ և սահմանափակումներ կառաջացնի մասնագիտությունների դասիչների փոփոխումը /ՀՀ կառավարության որոշում, 31.01.2013թ., N 85/:

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

Մշակել դասավանդման մեթոդների ընտրության, դասավանդման և ուսումնառության

մոտեցումների, մեթոդների, նյութերի և ռեսուրսների պարբերաբար արդիականացման քաղաքականություն, կատարել ուսումնամեթոդական նյութերի փորձաքննություն և ուսումնառության արդյունքների վերլուծություն:

Շարունակաբար բարելավել դասավանդման և ուսումնառության գործընթացները, ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ:

Վերանայել դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները, մոտեցումները ուսանողների մոտ մասնագիտական վերջնարդյունքների ձևավորման տեսանկյունից: Ներդնել շնորհիվող որակավորումների ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը նպաստող նորարարական մեթոդներ:

Բարձրացնել ուսանողների, գործատուների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և այլ շահառուների իրազեկվածության մակարդակը ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի մշակման, ներդրման և իրականացման վերաբերյալ:

Կիրառել կրթական ծրագրերի վերամշակման և իրականացման գործընթացներում հիմնական գործատուների ավելի լայն ներգրավման արդյունավետ մեխանիզմներ:

Մշակել գնահատման միջոցների լրակազմ (ԳՄԼ) և ներառել ԱՈՒՓ-երի մեջ ՄԿԾ-ի ուսումնական գործունեության բոլոր ձևերի և դասընթացների համար:

Կիրառել ՄԿԾ-ի ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցման մատրիցան տարբեր իրադարձային վիճակների, մեթոդների, դասավանդվող նյութերի նկատմամբ, ինչը կնպաստի դասավանդման և ուսումնառության նպատակայնությանը, կրթության որակի ապահովմանը և մասնագիտական վերջնարդյունքների ձևավորմանը:

Շարունակաբար կատարելագործել կրթական ծրագրերի իրագործման, մշտադիտարկման, փերձաքննության, վերամշակման, գնահատման մեխանիզմները, ընթացակարգերը:

Շարունակաբար բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման որակը գնահատման մեխանիզմների համապատասխանեցմամբ ուսումնառության և դասավանդման մեթոդներին, կրթական վերջնարդյունքներին:

Մշակել և ներդնել առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարկինգ) հիման վրա ձևավորված գնահատման նոր արդյունավետ մեթոդներ, մեխանիզմներ:

Ներդնել – ուսանողների ինքնուրույն աշխատանքների նոր արդյունավետ ձևեր, որը կնպաստի նրանց ինքնուրույնությանը, փաստարկման, բանավիճելու, իրադարձային վիճակներում վճիռներ կայացնելու ունակությունների ձևավորմանը, հմտությունների և կարողությունների զարգացմանը և համապատասխան կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Համապատասխան իրավական դաշտի ձևավորման դեպքում մշակել ուսանողների շարժունությունն ապահովող կրթության անհատական պլանի իրականացման տեխնոլոգիաներ, կանոնակարգեր, ընթացակարգեր:

Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի արտաքին վերապատրաստումների և շարժունության ապահովման մատչելի մեխանիզմներ:

#### IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՎՊՀ-ի [առաքելությունն](#) է ձգտել պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորել է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:

Համալսարանում ուսանողը համարվում է կրթական գործունեության առանցքը և նրա շուրջն է ստեղծվում նպաստավոր միջավայր անձի համակողմանի զարգացման համար: Ուսանողների կարիքների բացահայտման, խնդիրների լուծման գործընթացներում ներգրավված են հենց իրենք՝ ուսանողները: Հետադարձ կապի մեծանիզմների կատարելագործումը հնարավորություն է տալիս լսելու "ուսանողի ձայնը", որն ուղղորդում է իրականացնելու կրթական պահանջմունքներին համապատասխան կրթական գործունեություն: Առանձնահատուկ կարևորություն ունի ուսանողի ներգրավվածությունը հետազոտական գործունեության մեջ:

<b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:						
Հիմքեր՝	<p>Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգերը (<a href="#">մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ աշակերտների շրջանում</a>)</p> <p>Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը <a href="#">ՀՀ Կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»:</a></p> <p>Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը</p> <p>Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը՝ ըստ <a href="#">IV\4.1. Ուսանողների թվաքանակ 2011-2015.docx</a></p> <p>Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների համար:</p> <p>Բարելավմանն ուղղված ծրագրեր</p>					
	Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:					
Ուսանողների թիվը		2011	2012	2013	2014	2015
Բակալավրի	առկա	2203	1537	1290	1177	1105
	հեռակա	1955	1738	1701	1588	1449
Մագիստրոսի	առկա	202	246	269	262	244
	հեռակա		8	29	28	28
Հետզոտողի	առկա					
	հեռակա	6	4	4		2
Ուսումնառողների շարժունությունը						

Ուսումնասիրողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով						
Ուսանողների արտահոսք						
Հաստատություն/երկիր		2011	2012	2013	2014	2015
1	ՀՊՄՀ	1			2	
2	ԳՊՄԻ					
3	ԵՊՀ		1			
4	ՀՊԱՀ					
5	ՀՀ ԳԱԱ գիտ. միջազգ. կենտրոն				1	
6	Ընդհամենը	1	1		3	
Ուսանողների ներհոսք						
Հաստատություն/երկիր		2011	2012	2013	2014	2015
1	ՀՊՄՀ			1	3	1
2	ԵՊՀ	1				1
3	ՀՊԱՀ					
4	ՀՊՏՀ	1		1		
5	ՀՊՃՀ					
6	ԳՊՄԻ					
7	ԵՊԼՀ	1				
8	ԵԿՆԻՏՀ					
9	«Մխիթար Գոշ» համալսարան					3
10	Դոնի Ռոստովի համալսարան					
11	Ընդհամենը	3		2	3	5
Հեռացումներ և վերականգնումներ						
Ուսանողների թիվ		2011	2012	2013	2014	2015
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	3,69 % 161	2,41 % 85	2,77 % 91	5,34 % 163	1,1 % 31
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	3,97 % 173	5,84 % 206	4,04 % 133	5,3 % 162	1,45 % 41
<p><i>Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ՄՈՒՀ-ում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման նպատակով գործում են ընդունելության արդյունավետության գործընթացի բարելավման նպատակաուղղված հստակ ծրագրեր:</p> <p>ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի ուսանողների ընդունելությունն իրականացվում է <a href="#">ՀՀ Կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»</a>: Համաձայն նշված կարգի՝ առկա ուսուցման համակարգի ընդունելությունը իրականացվում է ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն: Յուրաքանչյուր տարի ՀՀ Կառավարության հաստատման է ներկայացվում այն մասնագիտությունների ցանկը, որոնք պահանջված են դիմորդների կողմից, և/կամ պահանջարկ</p>						

կա աշխատաշուկայում: Ընդունելություններ անցկացվում են միասնական քննությունների արդյունքների հիման վրա, միայն «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Սոցիալ-մշակութային գործունեություն», «Կերպարվեստ և գծագրություն», «Երաժշտական կրթություն» մասնագիտություններով ընդունելությունը կատարվում է ներբուհական քննություններով, որոնց հանձնաժողովների կազմը հաստատվում է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Որոշ դեպքերում Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից սահմանվում է գիտելիքների գնահատման առավել բարձր պահանջներ /բարդ թեստեր/, որն էլ կարող է առանձին մասնագիտությունների գծով (մասնավորապես բնագիտական) հանգեցնել թերլրման:

Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունը կատարվում է ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 27-ի հրամանով հաստատված [«ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»](#) համաձայն: Ընդունելությունը կատարում են ԿԳ նախարարի կողմից հաստատված բուհական հանձնաժողովներ՝ ըստ ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի և սահմանված չափորոշիչների:

2010-2014 թվականների ընդունելության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նվազել է և՛ հեռակա ուսուցման համակարգում, և՛ առկա ուսուցման համակարգում (Աղյուսակ 4-1):

Աղյուսակ 4-1. 2010-2014 ընդունելության տվյալները

	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014թ.
Առկա	501	62	450	387	349
Հեռակա	336	247	281	225	255
Ընդամենը	837	309	731	612	604

Նվազման պատճառներից են Հայաստանի Հանրապետությունում դիմորդների թվի նվազումը, մայրաքաղաքի ՄՈՒՀ-երի հնարավոր մրցակցությունը և տարածաշրջանի ոչ պետական ՄՈՒՀ-երի համեմատաբար ցածր վարձավճարների գրավչությունը, մուտքի առավել դյուրին պայմանները:

Մագիստրոսի կրթական ծրագրի ընդունելությունը ՄՈՒՀ-ում կազմակերպվում է սկսած 2008 թվականից՝ համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի հրամանով հաստատված [«ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի»](#): Յուրաքանչյուր տարի ՄՈՒՀ-ի Գիտական խորհրդում հաստատվում է [մագիստրատուրայի ժամանակավոր կարգ](#): Մագիստրատուրայում ուսանողների ընդունելությունը և մրցույթը անցկացվում է երեք փուլով: Կարգում, թափանցիկությունն ապահովելու նպատակով, հստակ ներկայացված են ընդունելության ընթացքը՝ ներառյալ մրցույթի անցկացման քայլերը:

Ի լրումն ավանդական դարձած տասը մագիստրոսական ծրագրերի /«Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն/անգլերեն/», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Կրթության կազմակերպում», «Պատմություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա»/ 2013 թվականին ներդրվել են ևս երեք մագիստրոսական ծրագրեր՝ «Ինֆորմատիկա», «Հանրային կառավարում», «Կրթության կառավարում» /TEMPUS MAHATMA ծրագիր/:

Դիմորդների հավաքագրման ծավալների մեծացման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրի մուտքային շեմերը աստիճանաբար նվազեցվել են, իսկ 2013 թվականին ՄՈԳ-ի շեմ չի սահմանվել, որը հանգեցրեց մրցակցային ոգու նվազմանը: 2014թ. մուտքային շեմ սահմանվել է միայն անվճար ուսուցման համակարգի տեղերի համար: Մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը՝ 2010 թվականի համեմատ աճել է նոր մասնագիտություններով ուսուցում կազմակերպելու:

Օտարերկրացի քաղաքացիների ընդունելությունը իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշմամբ հաստատված [«Հայաստանի Հանրապետության](#)

[բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի»](#) համաձայն: Ներկայումս ՄՈՒՀ-ում սովորում են 28 օտարերկրյա ուսանողներ: Միջուրքահայ ուսանողների հետ իրականացվում են խորհրդատվական աշխատանքներ:

Ասպիրանտուրայում ընդունելությունը իրականացվում է ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի N 740-Ն հրամանով հաստատված [«ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության կարգի»](#) և ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 20-ի թիվ 662 որոշմամբ հաստատված [«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգի»](#): Մինչ օրս ունեցել ենք 10 ասպիրանտ և հայցորդ, որոնցից 9 հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական թեզը:

ՄՈՒՀ-ն ուսանողներ հավաքագրելու նպատակով մարզի դպրոցների և քոլեջների շրջանավարտների շրջանում կատարում է աշխատանքներ.

1. 2008թ. գործում են կրթական կենտրոններ Տաշիր, Սպիտակ, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում, որոնց գործառույթներից է տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների շրջանում տեղեկատվական-խորհրդատվական աշխատանքների իրականացումը, հնարավորինս լայն աշխարհագրություն ընդգրկելը և մարկետինգային գործունեություն ակտիվացնելը: Կենտրոններն աշխատանքներն իրականացնում են միայն բակալավրի կրթական ծրագրերով դիմորդների հավաքագրման նպատակով:

2. Գովազդարշավի իրականացում.

2.1. Ռեկտորի հրամանով ձևավորվում են դասախոսներից և ուսանողներից կազմված աշխատախմբեր, որոնք տարվա ընթացքում այցեր են կատարում մարզի ավելի քան 30 դպրոցներ, ներկայացնում մեր բուհը ֆիլմերով, տեղեկատվական նյութերով՝ նպաստելով դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը: Աշխատախմբերում ընդգրկվում են բուհի ֆակուլտետների ղեկանների կողմից առաջադրված թեկնածուները՝ դասախոսներ և ուսանողներ: Աշխատախմբերն ըստ ժամանակացույցի այցեր են կատարում Վանաձոր, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան, Սպիտակ քաղաքների և նրանց տարածաշրջանների դպրոցներ:

2.2. «Ֆակուլտետային օրեր» միջոցառումների շրջանակներում կազմակերպվում են աշակերտների այցեր, բաց դասեր, կատարվում են լաբորատոր ցուցադրումներ:

2.3. Դիմորդներին տեղեկատվություն է տրամադրվում և ընդունելության ընթացքը մեկնաբանվում ՄՈՒՀ-ի կայքում գործող [«Դիմորդ»](#) բաժնի միջոցով:

3. Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում աշակերտների ստեղծագործական ընդունակությունների բացահայտում և մասնագիտության ճիշտ ընտրություն.

3.2. Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են հանրակրթական առարկաներից դպրոցական օլիմպիադաներ /այդ թվում «Կերպարվեստ», «Երգ» առարկաներից, ասմունքի, հայրենասիրական երգի մրցույթներ, որոնք կազմակերպվում են՝ [համապատասխան կարգերի համաձայն](#): Հիմնականում մասնակիցների և հաղթողների թիվը ավելի մեծ է լինում հումանիտար առարկաներից: Բնագիտական մասնագիտությունների գծով նմանապես նվազում է նաև դիմորդների քանակը (Աղյուսակ 4-3):

Աղյուսակ 4-3. Աշակերտների մասնակցությունը դպրոցական օլիմպիադաներին

Ուսումնական տարի	Առարկաներ	Մասնակից աշակերտների թվաքանակը	Մրցանակակիրների թվաքանակը	
			աշակերտներ	%
2011 թ.	Հումանիտար առարկաներ	71	17	26,8
	Բնագիտական առարկաներ	178	8	4,5
2012 թ.	Հումանիտար առարկաներ	317	30	9,5
	Բնագիտական առարկաներ	260	13	5
2013 թ.	Հումանիտար առարկաներ	132	19	14,4

	Բնագիտական առարկաներ	110	7	6,36
2014 թ.	Հումանիտար առարկաներ	142	21	14,8
	Բնագիտական առարկաներ	140	4	2,9
2015 թ.	Հումանիտար առարկաներ	227	48	21
	Բնագիտական առարկաներ	154	25	16,2

ՄՈՒՀ ընդունվելու դեպքում՝ օլիմպիադայի հաղթողները հնարավորություն են ունենում օգտվելու ուսանողական նպաստի մասնակի [փոխհատուցման արտոնությունից](#):

4. ՄՈՒՀ-ի ընդունելությանը նախապատրաստելու նպատակով քննական առարկաներից ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվում են նախապատրաստական անվճար դասընթացներ.

**Աղյուսակ 4-4. Աշակերտների մասնակցությունը նախապատրաստական դասընթացներին**

Տարեթիվ	Մասնակիցների թվաքանակ	Հումանիտար	Բնագիտական	Դիմորդների թվաքանակ	Ընդունվածների թվաքանակ
2011 թ.	12	8	4	12	3
2012 թ.	37	24	13	37	30
2013 թ.	36	25	11	28	15
2014 թ.	50	29	21	40	29

Համաձայն ՀՀ վարչապետի՝ 2012.02.02 նիստի արձանագրային որոշման [«ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի իրականացման»](#) ՎՊՀ-ում 2012թ. նոյեմբեր-մայիս ամիսներում կազմակերպվել են անվճար նախապատրաստական դասընթացներ: Դասընթացներին մասնակցելու համար դիմել են Վանաձորում հաշվառված անապահով ընտանիքներից 174 աշակերտ, բայց մասնակցել են թվով 110-ը:

Նախապատրաստական դասընթացները վարել են մասնագիտական ամբիոնների դասախոսները և մագիստրատուրայի թվով 24 լավագույն ուսանողներ:

Անցկացվել են ք.Վանաձորի դպրոցների ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հանրակրթական առարկաների լրացուցիչ պարապմունքներ՝ «Կրթություն բոլորի համար» ՀԿ ծրագրի շրջանակներում, որի մեջ ընդգրկվել են մագիստրատուրայի 20 ուսանողներ:

5. Քոլեջների հետ համագործակցության շրջանակներում, սկսած 2005թ-ից, ՄՈՒՀ են ընդունվում քոլեջների լավ և գերազանց գնահատականներով շրջանավարտները՝ համաձայն ՀՀ Կառավարության 2002թ. մայիսի 20-ի թիվ 589 որոշմամբ հաստատված [«Միջին մասնագիտական ուսումնական հաստատության բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսուցումը բարձրագույն ուսումնական հաստատությունում շարունակելու մասին»](#) կարգի և քոլեջների հետ կնքած պայմանագրերի: Նման համագործակցության արդյունքում 2009-2014 թթ. ՄՈՒՀ են ընդունվել քոլեջի 30 ուսանող:

Յուրաքանչյուր տարի ՄՈՒՀ են դիմում նաև երկրորդ մասնագիտություն ստանալու համար: Դիմորդների գերակշիռ մասը դիմում է մանկավարժական կրթություն ստանալու նպատակով, քանի որ ՄՈՒՀ-ը համարվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան տարածաշրջանի միակ մանկավարժական կրթություն իրականացնող բուհը, և աշխատաշուկան մանկավարժներին մրցութային կարգով աշխատանքի ընդունվելու հնարավորություն է ընձեռում: Երկրորդ մասնագիտություն ստանալու գործառնությամբ կարգավորվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2006թ. օգոստոսի 15-ի N 671-Ն հրամանով հաստատված [«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու»](#) և [«Վանաձորի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի երկրորդ մասնագիտություն ստանալու»](#) կարգերով:

**Աղյուսակ 4-5 Ուսանողների թվաքանակը 2011-2015 թթ.**

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևի						
Ուսանողների թիվը		2011 (հունվարի 1)	2012 (հունվարի 1)	2013 (հունվարի 1)	2014 (հունվարի 1)	2015 (հունվարի 1)
Բակալավրի	առկա	2203	1537	1290	1177	1105
	հեռակա	1955	1738	1701	1588	1449
Մագիստրոսի	առկա	202	246	269	262	244
	հեռակա		8	29	28	28
Հետազոտողի (ասպիրանտ, հայցորդ)	առկա					
	հեռակա	6	4	4		2

Ուսումնառողների շարժունությունը<sup>1</sup>

Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով

Ուսանողների արտահոսք					
Հաստատություն/երկիր	2011	2012	2013	2014	2015
ՀՊՄՀ	1			2	
ԳՊՄԻ					
ԵՊՀ		1			
ՀՊԱՀ					

<sup>1</sup> Ուսանողների շարժունությունը իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության սովորողների ակադեմիական շարժունության», կարգի

ՀՀ ԳԱԱ գիտ. միջազգ. կենտրոն				1	
Ընդամենը	1	1		3	

Ուսանողների ներհոսք					
Հաստատություն/երկիր	2011	2012	2013	2014	2015
ՀՊՄՀ			1	3	1
ԵՊՀ	1				1
ՀՊԱՀ					
ՀՊՏՀ	1		1		
ՀՊՃՀ					
ԳՊՄԻ					
ԵՊԼՀ	1				
ԵԿՆԻՏՀ					
“Մխիթար Գոշ” համալսարան					3
Դոնի Ռոստովի համալսարան					
Ընդամենը	3		2	3	5

Հեռացումներ և վերականգնումներ<sup>2</sup>

<sup>1</sup> Ուսանողների շարժունությունը իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության սովորողների ակադեմիական շարժունության», կարգի

<sup>2</sup> Ուսանողների հեռացում (ազատում) և վերականգնումը իրականացվում է՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով հաստատված «Հայաստանի

Ուսանողների թիվը/%	2011		2012		2013		2014		2015	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Դուրս մնացածների թիվը/ տոկոսը	161	3,69	85	2,41	91	2,77	163	5,3 4	31	1,1
Վերականգնված ուսանողների թիվը/ տոկոսը	173	3,97	206	5,84	133	4,04	162	5,3	41	1,45

ՄՈՒՀ-ի սոցիալական քաղաքականությունը ուղղված է սոցիալապես անապահով ուսանողների կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծմանը և վարձավճարի պատճառով ուսանողների հեռացումները հասցվում է նվազագույնի:

Ներկայացվում է նաև ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, ուսուցման համակարգերի, կրթական աստիճանների (Հավելված 4.1): Սկսած 2012-13 ուստարուց մեծացել է ուսանողների հոսքը առկա ուսուցման համակարգից հեռակա համակարգ, որը հիմնականում պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմաններով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր՝	<p>Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները</p> <p>Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՈՒՀ-ի քաղաքականության մեջ</p>
---------	--

*Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ի ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացվում են միջոցառումներ, որոնք ուղղված են բացահայտելու և բարելավելու կրթական միջավայրը, կրթություն կազմակերպելու համար ստեղծելու բարենպաստ պայմաններ:

- 2009 թվականից ՄՈՒՀ-ում գործում է ակադեմիական խորհրդատուների հաստատությունը: «ՎՊՄԻ-ում ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգ»-ով սահմանվում է նրանց գործառնությունների շրջանակը: Ակադեմիական խորհրդատուները բացահայտում են իրենց կցված ուսանողների կրթական կարիքները, նպաստում առաջին կուրսեցիների հարմարակմանը /ադապտացիա/, տեղեկատվության ապահովմանը, կրթական բարեփոխումների գործընթացում ուսանողների ընդգրկմանը, արտալսարանային աշխատանքների կազմակերպմանը, հետևում ակադեմիական ձեռքբերումներին:
- Ակադեմիական խորհրդատուների աշխատանքը ուսանողների խմբի/կուրսի հետ կատարվում է անընդհատ, և աշխատանքային ժամերը ամրագրված են կուրսի դասացուցակում:
- Ուսանողների հետ արտադրական խորհրդակցություններ են հրավիրում ՄՈՒՀ-ի ռեկտորը՝

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման, կարգ-ի

յուրաքանչյուր կիսամյակում երկու անգամ, դեկանները՝ յուրաքանչյուր ամիս: Խորհրդակցությունների և քննարկումների միջոցով ուսանողները կարողանում են վերհանել իրենց խնդիրները, առաջարկել բարելավման ուղիներ և մասնակցել կրթական միջավայրի բարեփոխումներին:

- Ուսանողներն օգտագործում են կայքի «[Հարց-պատասխան](#)» բաժնի հնարավորությունները և ստանում անհրաժեշտ տեղեկատվություն, ուղղորդում, ներկայացնում կրթական գործընթացի հետ առնչվող իրենց կարիքները ՄՈՒՀ-ի ցանկացած աշխատակցին:
- Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցում կարևոր դեր ունի ՄՈՒՀ-ի ուսխորհուրդը:

Ուսանողները ներգրավված են ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում /25%/, տարբեր խորհուրդներում և հնարավորություն ունեն մասնակցելու ուսանողակենտրոն քաղաքականության մշակման գործընթացին: Սակայն մասնակից ուսանողները հիմնականում սովորում են առկա ուսուցման համակարգում:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը
Հիմքեր՝	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը
	Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	74,07 %	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	11,11 %	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	14,81 %	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվո՞ւմ են խորհրդատուներ:	✓	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:		

*Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ում ուսանողներին ակադեմիական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով գործում է ակադեմիական խորհրդատուների ինստիտուտը /նկարագրված **ՉՍՓՈՐՈՇԻՉ բ-ում**/, որի աշխատանքները ը ՄՈՒՀ-ում կանոնակարգվում է ըստ գործող կարգի,

համակարգվում ըստ հաստատված պլանի և սահմանված ժամանակացույցի: Խորհրդատուների հիմնական դերը ինքնավար ուղղորդվող ուսումնառողներին օգնություն տրամադրելն է:

Բացի ակադեմիական խորհրդատուների տրամադրած խորհրդատվական ծառայություններից՝ յուրաքանչյուր ամբիոն կազմակերպում է անհատական պարապմունքներ, որոնց նպատակն է օգնել.

- կիսամյակի ընթացքում ինքնուրույն, արտալսարանային աշխատանքներ կատարող բոլոր ուսանողներին,
- թեման չյուրացրած, բացակայած ուսանողներին,
- ընթացիկ և կիսամյակային ցածր առաջադիմությամբ ուսանողներին:

Ամբիոններն ունեն ամենօրյա խորհրդատվության համար հաստատված ժամանակացույց: Խորհրդատվությունը կատարվում է, սակայն գրանցումները համակարգված չեն:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին ընդգրկվում են հիմնականում ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողները:

Ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդներում, ռեկտորատի նիստերում կատարվում են քննաշրջանի, ընթացիկ քննությունների արդյունքների վերաբերյալ քննարկումներ, ամփոփում /նաև վիճակագրական/, վերհանվում են հիմնական խնդիրները և սահմանվում են ժամանակացույցեր՝ լրացուցիչ խորհրդատվական աշխատանքները համակարգված, նպատակային և արդյունավետ կազմակերպելու համար: Լրացուցիչ պարապմունքները դասախոսները իրականացնում են ավանդական դասավանդման մեթոդներով, իսկ նոր կրթական տեխնոլոգիաներ հիմնականում չեն կիրառվում:

Անհատական խորհրդատվական աշխատանքների համար դասախոսներին տրամադրվում են ժամեր, որոնք տարեկան անհատական ծանրաբեռնվածության մեջ արտահայտված են առանձին սյունակով: Բացի դրանից, սկսած 2012 թվականից, ցածր կուրսերում կազմակերպվում են ինքնուրույն-խմբային պարապմունքներ, որոնք արտահայտվում են և՛ դասացուցակում, և՛ դասախոսի անհատական ծանրաբեռնվածության մեջ: 2009 թվականից դասախոսների ծանրաբեռնվածության մեջ ներառված ուսանողների անհատական/ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար տրամադրված ընդհանուր ժամաքանակը 6,1 % -ից 2014 թվականին հասցվել է 20 %-ի:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքները կազմակերպվում և կարգավորվում են ՄՈՒՀ-ում գործող «[Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման](#)» կանոնակարգով և «[Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման](#)» կարգով:

Նախատեսվում է խորհրդատվական աշխատանքներն իրականացնել կուրսերի տարբերակմամբ. առաջին կուրսերում կրթական միջավայրին հարմարման և կոլեկտիվի ձևավորման, երկրորդ կուրսերում մասնագիտական որակների ձևավորման, ավարտական կուրսում մասնագիտական մտածողության և ինքնագնահատականի ձևավորման ուղղությամբ:

ՄՈՒՀ-ում իրականացվող խորհրդատվական ծառայությունների մասին ուսանողները տեղեկացվում են ակադեմիական խորհրդատուների և առաջին կուրսեցիներին տրամադրված «Ուսանողի ուղեցույց»-ի միջոցով:

2014թ. կատարված սոցիոլոգիական հարցման տվյալներով խորհրդատուների աշխատանքը ուսանողների կողմից արդյունավետ է համարվել 53,2%-ով, դասախոսների կատարած արտալսարանային աշխատանքը ուսանողների հետ՝ 53.9 %, ինքնուրույն աշխատանքների

կազմակերպման և կատարման գործում դասախոսից ստացած օգնությունը՝ 67 %: Խորհրդատվական ծառայությունների արդյունավետության վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակական են, և կատարվում են քննարկումներ ուսանողների հետ կայացած հանդիպումների ժամանակ:

Ակադեմիական խորհրդատուների աշխատանքը կատարվում է կուրսի հետ, սակայն ուսանողների անհատական ուսումնական պլանի կազմման աշխատանքներին խորհրդատուները ակտիվ մասնակցություն չի ցուցաբերում: Կրեդիտային հենքով ուսուցման կազմակերպման խորհրդատվական աշխատանքների բարելավելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է վերանայել կանոնակարգը, դարձնել ավելի իրատեսական և կիրառելի:

Ուսանողների կողմից առաջարկություն է եղել խորհրդատվական աշխատանքներում ներգրավել նաև բարձր կուրսերի ուսանողներին: Իրականացնել խորհրդատվական աշխատանքներ կուրսերի տարբերակմամբ. առաջին կուրսերում կրթական միջավայրին հարմարման և կռիվակառուցման, երկրորդ կուրսերում մասնագիտական որակների ձևավորման, ավարտական կուրսում մասնագիտական մտածողության և ինքնագնահատականի ձևավորման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության ծրագրերում ուսանողների սակավաթիվ ընդգրկվածության, ուսանողների շարժունության պասիվ գործընթացի պատճառներից հիմնականը օտար լեզուների չիմացությունն է, որի վերացմանն էր ուղղված «Լեզուների կենտրոնի» հիմնադրումը: Կենտրոնում ուսուցանվում են անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուները: Տարեկան միջին 70 ուսանողներ են մասնակցում Կենտրոնի դասընթացներին: Կենտրոնի գործունեությունը համակարգվում է «[Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ](#)» ՊՈԱԿ-ի լեզուների ուսուցման կենտրոնի» կանոնակարգով:

ՄՈԻՀ-ում կատարվել է նաև [Հոգեբանական կենտրոնի առկայությունը](#), որը անվճար հիմունքներով հոգեբանական խորհրդատվական խնդիրների լուծման, հոգեբանական օգնության կազմակերպման գործընթացների հետ կապված տարաբնույթ ծառայություններ մատուցում է ոչ միայն ուսանողներին, այլ նաև աշխատակիցներին:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ ղ.** ՄՈԻՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր՝	Ուսումնառողներին՝ վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգը <a href="http://www.vsu.am/karg/npastttt%20nortt.pdf">http://www.vsu.am/karg/npastttt%20nortt.pdf</a> Համապատասխան ժամանակացույցեր
---------	--

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	55,56 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	25,93 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	14,81 %

*Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են վարչական աշխատակազմին դիմելու մի շարք մեխանիզմներ, որոնք հեշտացնում են հետադարձ կապը ինստիտուտի աշխատակազմի և ուսանողների՝ որպես շահառուների միջև:

Ռեկտորը պարբերաբար կազմակերպում է արտադրական խորհրդակցություններ ուսանողների մասնակցությամբ /առանց դասախոսական կազմի և խորհրդատուների/: Ուսանողների կողմից բարձրացված հարցերը և առաջարկությունները քննարկվում են ՄՈՒՀ-ի տարբեր օղակներում և մակարդակներում:

Ռեկտորը և պրոռեկտորները ունեն ընդունելության սահմանված ժամեր:

Ուսանող-վարչակազմ հարաբերությունների կայացման գործում մեծ է Ուսխորհրդի դերը, որը մի կողմից ՄՈՒՀ-ի ղեկավարությանը ներկայացնում է ուսանողին իր խնդիրներով, մյուս կողմից՝ ինտեգրում է ուսանողին կրթական և սոցիալ-դաստիարակչական աշխատանքներում իրականացվող բարեփոխումներին:

Ուսանողները ընդգրված են ՄՈՒՀ-ի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետային խորհուրդներում, տարբեր հանձնաժողովներում և հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը, հանդես գալու ՄՈՒՀ-ի գործունեության բարելավմանը միտված առաջարկություններով:

Ուսանող-ղեկանատ հարաբերությունները բավականին անկաշկանդ են և ոչ միայն միջնորդավորվում են խորհրդատուների միջոցով, այլև ղեկանը մասնակցում է դասացուցակով սահմանված խորհրդատվական ժամերին, ամիսը մեկ անգամ հրավիրում է կուրսերի ավագների խորհրդակցություն:

«Ուսանողի ուղեցույցի», ՄՈՒՀ-ի կայքի միջոցով ուսանողին տրամադրվում են ստորաբաժանումների հեռախոսահամարները և վարչակազմի էլփոստի հասցեները: [www.vsu.am](http://www.vsu.am) կայքի «Հարց-պատասխան» բաժինը ուսանողին հնարավորություն է տալիս դիմելու ՄՈՒՀ-ի աշխատակիցներին /տարվա կտրվածքով պատասխանում ենք ավելի քան 85 նամակի/: Այս հնարավորությունից ավելի շատ օգտվում են հեռակա ուսուցման համակարգի ուսանողները: Կայքի տեղեկատվության համալրման արդյունքում նշված բաժնի նամակների քանակը նախորդ տարիների համեմատ նվազել է:

ՄՈՒՀ-ում գործում են մի շարք կարգեր և կանոնակարգեր, որոնցում ամրագրված են վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմները:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերը <http://www.vsu.am/karg/karieria-NOR.pdf> Այդ գործընթացներն իրականացնող ենթակառուցվածքը և դրա գործառույթները (կարիերայի կենտրոն)

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների n ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	37,04 %
Ուսանողների n ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	11,11 %
Ուսանողների n ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	11,11 %

ՄՈՒՀ-ում գործում է կարիերայի կենտրոն, որը ստեղծվել է 2009 թվականին: Շրջանավարտների աշխատանքի տեղավորման, մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայի արդի պահանջների վերլուծության ոլորտը լայն է և բազմագործոն, համակարգի կայացումն էլ կախված է մի շարք օղակների փոխհամաձայնեցված և փոխլրացնող հստակ և համակարգված աշխատանքից: Ճկուն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է գործընթացների ճիշտ կազմակերպում և ժամանակակից մեթոդների կիրառում: ՄՈՒՀ-ը վերջին տարիների ընթացքում փորձում է համախմբել այս օղակների աշխատանքները: 2015թ. «Կարիերայի և հեռավար կրթության կենտրոնը» վերանվանվել է «Շրջանավարտների և Կարիերայի աջակցման կենտրոն» (կանոնակարգը ներկայացվել է գիտխորհրդի ապրիլ ամսվա նիստի հաստատմանը): ՎՊՀ ամբիոնների և բուհ – դպրոց կապն ապահովող բաժինների հետ համատեղ մշակվել են աշխատանքային և միջոցառումների պլաններ, որոնց միջոցով իրականացվել են մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման, աշխատաշուկայի վերլուծության, աշխատաշուկայի արդի պահանջների բավարարմանը միտված վերապատրաստման դասընթացներ:

Վերջին հինգ տարիների ընթացքում բաժնի կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ՝ աշխատաշուկայի ուսումնասիրության, գործատու-բուհ կապի արդյունավետության, շրջանավարտների բավարարվածության, աշխատաշուկայում մեր շրջանավարտների պահանջարկի, մարզի աշխատաշուկայում առկա պահանջարկված մասնագիտությունների և ՄՈՒՀ-ի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

Աշխատաշուկայի ընթացիկ վերլուծությունները պարբերաբար ներկայացվել են բուհի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներին: Աշխատաշուկայի վերլուծությունների թարմացված տարբերակները, աշխատանքի նոր հայտարարությունները մշտապես տեղակայվել են ներքին ցանցում, կենտրոնի ինտերնետային էջում և մատչելի են եղել ՎՊՀ ուսանողների և շրջանավարտների համար: Աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի վերլուծությունն իրականացվում է 2010 թվականից և իրենից ենթադրում է մշտական թարմացում պահանջող գործընթաց:

Աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի, գործատուների կողմից աշխատողներին ներկայացվող պահանջների, ինչպես նաև աշխատանք փնտրելու հնարավորությունների մասին տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրվել ՎՊՀ պաշտոնական ինտերնետային էջի միջոցով: Այժմ կենտրոնի կայքը գտնվում է լրամշակման փուլում, ինչի ավարտից հետո այն տեղեկատվական ոլորտում ավելի լայն հնարավորություն կընձեռի նոր աշխատանքների իրականացման համար:

Ըստ նախատեսված միջոցառումների պլանի կազմակերպվում և իրականացվում են դասընթացներ, որոնց ընթացքում երիտասարդներին հնարավորություն է ընձեռվում ստանալ աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանն աջակցող և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն նրանց մրցունակության բարձրացմանն ու արդյունավետ հաղորդակցությանն ուղղված դասընթացներ:

Արդեն հինգ տարի է կարիերայի կենտրոնը համագործակցում է ՎԻՎԱ-ՄԵԼ ՄՏՍ ընկերության հետ, ինչի արդյունքում ՎՊՀ չորս տասնյակից ավելի ուսանողներ ներգրավվել են 'Կրթական ֆոնդ' ծրագրի մեջ և նրանց ուսման վարձն ամբողջությամբ փոխհատուցում է ընկերությունը: Համագործակցության շրջանակներում մի շարք ուսանողներ և դասախոսներ

մասնակցել են հատուկ երկարաժամկետ և կարճաժամկետ վերապատրաստումների, ամառային դպրոցների, ինչպես նաև անցել են աշխատանքային պրակտիկա կազմակերպության տարբեր բաժիններում:

Իրականացվում են նաև պորտֆոլիոների պատրաստման և կիրառման փորձնական ծրագրեր:

Ընթացքի մեջ են գտնվում շրջանավարտների տեղեկատվական և ռեզյումենների համակարգչային բազաների ստեղծման աշխատանքները, որի արդյունքում նախատեսվում է ունենալ շրջանավարտների ամբողջական տվյալների բազա, ինչը կնպաստի հետադարձ կապի ապահովման արդյունավետությանը:

Կենտրոնի կատարվելիք աշխատանքները ներառվում են կենտրոնի ամենամյա աշխատանքային պլանի մեջ, որը հաստատվում է ռեկտորի կողմից: Կատարված աշխատանքները չափելի են դառնում տարեկան հաշվետվությունների միջոցով:

Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ՝ մասնագիտական տեսանյութերի դիտումներ, քննարկումներ, բանավեճեր, որոնց իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում ՎՊՀ ուսանողները:

Կենտրոնը սերտ համագործակցում է մարզի և հանրապետության կրթաուսումնական հաստատությունների, հիմնարկ ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների հետ:

*Կենտրոնը համագործակցում է նաև մարզային զբաղվածության կենտրոնի հետ, կազմակերպվում են համատեղ աշխատանքի տոնավաճառներ, սեմինարներ, վերապատրաստումներ:*

**ՉԱՓՈՐՈՇԻՉ** գ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2010	2011	2012	2013	2014
Բակալավր		260	250	292	253	90
Մագիստրոս		52	98	102	135	136

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների [IV\4.6..docx](#)

	Գիտահետազոտական ծրագիր	2010	2011	2012	2013	2014
1						

Ուսումնառողների հեղինակությանը և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը [IV\4.6..docx](#)

	Տպագրված աշխատանք	2010	2011	2012	2013	2014
1						

*Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և համակարգման նպատակով գործում է ուսանողական գիտական ընկերությունը, որն իրականացնում է ուսանողների մոտ գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու, մասնագիտական ունակությունների խթանելու, տարբեր գիտական ծրագրերում լավագույն ուսանողների ընդգրկելու աշխատանքներ: Ուսանողական գիտական ընկերությունը գործում է համաձայն [Ուսանողական գիտական ընկերության կանոնադրության](#):

Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ում ստեղծվել է գիտահետազոտական համալիր լաբորատորիա, որը բնագիտական մասնագիտությունների ուսանողներին հնարավորություն է տալիս կատարել փորձեր նորագույն սարքերի և սարքավորումների միջոցով, ստանալ առավել ճշգրիտ տվյալներ:

2006 թվականից ստեղծվել է գիտական կաբինետ՝ հազեցած համակարգչային տեխնիկայով և ինտերնետային կապով: Գիտական աշխատանքների կատարմանը նպաստող գործունեություն են իրականացնում մասնագիտական կաբինետները, որոնք ունեն մասնագիտական գրականություն և ինտերնետային կապ:

ՈՒԳԸ կողմից կազմակերպվել են հանրապետական և միջբուհական ուսանողական գիտաժողովներ, որոնցում զեկուցված լավագույն աշխատանքները տպագրվել են: ՄՈՒՀ-ի ուսանողների զեկուցումները տպագրվել են նաև մյուս բուհերի կազմակերպած գիտաժողովներում:

Ներամբիոնային, ապա ներֆակուլտետային գիտական ընթերցումների հիման վրա ուսանողները երաշխավորվում են հանրապետական գիտաժողովներին մասնակցելու համար: Այսպես՝ 2010 թ. հանրապետական գիտաժողովներին մասնակցության հայտ են ներկայացրել 15 ուսանող, 2011 թ.՝ 19, 2012 թ.՝ 66, 2013 թ.՝ 42, 2014՝ 19, 2015 թ.՝ 90 ուսանողներ:

Հանրապետական գիտաժողովներին մասնակցած լավագույն զեկուցումները գիտաժողովների հանձնաժողովների կողմից երաշխավորվել են տպագրության: Այսպես ՎՊՄԻ՝ 2012թ./ 12 ուսանող/, ԳՊՄԻ՝ 2013թ. /7 ուսանող/, ՎՊՄԻ՝ 2013թ. /22 ուսանող/:

Նշված տվյալները վկայում են, որ ամբիոններում դեռևս մշակված չեն ուսանողների գիտահետազոտական աշխատանքների երաշխավորության հստակ չափանիշներ և որոնց մշակման անհրաժեշտություն կա:

ՎՊՀ-ն ուսանողական գիտաժողովների ժամանակ հյուրընկալել է ԵՊՀ-ին, վերջինիս Գավառի և Իջևանի մասնաճյուղերին, Գևորգյան հոգևոր ճեմարանին, ԳՊՄԻ-ին, ՀՊՄՀ-ին, ԵՊԼՀ-ին, ՀԱԱՀ-ին, ԱրՊՀ-ին, ՀՀ պետական կառավարման ակադեմիային, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիային, ՀՀ ոստիկանության կրթահամալիրին և այլն:

**ԶՍՓՈՐՈՇԻԶ** է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթուղթը <http://www.vsu.am/karg/nerqin%20kanonakarg.pdf>  
 Ուսանողական խորհրդի կանոնադրությունը <http://www.vsu.am/karg/usanoxakan%20xorhurd%20kanonadrutyun-NOR.pdf>  
 Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը <http://www.vsu.am/karg/Karg%20dimum%20boxogneri-NOR.pdf>  
 Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	40,74 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	18,52 %
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	14,81 %

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքները ամրագրված են [Ուսխորհրդի կանոնադրությամբ, Ներքին կարգապահական կանոններով](#):

Ուսանողների պաշտպանության պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը համարվում է ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական-ընտրովի բարձրագույն մարմին: Նա ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ՄՈՒՀ-ի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը: Ուսխորհրդի կարևոր դերը ուսանողների խնդիրների լուծմանը գորավիզ լինելն է, նրանց շահերի և իրավունքների պաշտպանությունը: Ուսխորհուրդը մասնակցում է նաև ուսանողների հանգստի և ժամանցի միջոցառումների կազմակերպմանը: Ուսխորհրդում աշխատանքները կազմակերպում են ա) մշակույթի« սպորտի և ազատ ժամանցի, բ) գիտաուսումնական, գ)լրատվության և քարոզչության, դ) ուսանողների իրավունքների պաշտպանության, ե) արտաքին կապերի և հարաբերությունների հանձնաժողովները: Ուսանողների 10.1 %-ը ընգրկված են ՄՈՒՀ-ի Ուսխորհրդի կազմում:

Բավականին ակտիվ գործում են նաև Ուսխորհրդի ենթակառուցվածքները՝ ֆակուլտետային ուսխորհուրդները, որոնք սերտ կապեր են ստեղծում բոլոր ուսանողների հետ՝ խնդիրներն ավելի համակարգված ներկայացնելով: Առաձևահատուկ կարևորություն է տրվում առաջին կուրսեցիների հետ կատարվող աշխատանքներին, և հենց սեպտեմբերի մեկից կազմակերպվում են պլանավորված հանդիպումներ. «ուսանողի կողմից ուսանողներին» ներկայացնելով ուսանողի իրավունքները, պարտականությունները, ուսանողական կյանքը:

Ուսխորհրդի աշխատանքների համար ՄՈՒՀ-ի արտաբյուջեի միջոցներից կատարվում է ֆինանսավորում, որը հիմնականում օգտագործվում է ուսանողական միջոցառումների

կազմակերպման նպատակով:

2011 թվականի սոցիոլոգիական հարցումների արդյունքում ուսանողները Ուսխորհրդի կատարած աշխատանքները արդյունավետ են համարել ուսանողության 63%-ը:

ՄՈՒՀ-ի Ուսխորհուրդն ունի ինտերնետային էջ՝ [www.facebook.com/groups/579442265433283/](http://www.facebook.com/groups/579442265433283/), և բլոգ՝ [www.vphusxorhurd.blogspot.com/](http://www.vphusxorhurd.blogspot.com/):

Ուսխորհուրդը կարևոր դեր ունի «Լավագույն կուրս», «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքներում՝ գնահատելով ուսանողների կատարած հասարակական աշխատանքները, ակտիվ մասնակցությունը ներբուհական կյանքին, ուսանողական ինքնակառավարման աշխատանքներին:

2013 թվականի հուլիսի 5-ին ստեղծվել է Իրավաբանական խորհրդատվական կենտրոն, որի նպատակն է իրավագետ-ուսանողների և դասախոսների ջանքերով պաշտպանել այլ ուսանողների ու դասախոսների իրավունքներն ու օրինական շահերը, որոշակի պայմաններ ստեղծել ՄՈՒՀ-ում իրավական մշակույթի զարգացման, իրավագիտակցության բարձրացման, ուսանողների մասնագիտական կողմնորոշման, ուսանողների գործնական գիտելիքների ապահովմանը նպաստելու, կրթական հարցերում օժանդակելու համար: Ներկայումս կենտրոնը տեղեկատվական աշխատանք է կատարում ուսանողների, դասախոսների և ուսանողների ծնողների շրջանում, կազմակերպում է սեմինար քննարկումներ, կապ է պահում տարբեր ՀԿ-ների հետ, իրականացնում համատեղ ծրագրեր, անդամների ուժերով մասնակցում է հանրապետական դատախազ մրցույթներին՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ: Կենտրոնի գործունեությունն արտահայտված է դրա արձանագրություններում և <http://www.facebook.com/profile.php?id=100009354133002/>: [ինտերնետային էջում/](#)

Քննաշրջանի ընթացքում ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվում է քննությունները վերահսկող հանձնաժողովը, որը գործում է ռեկտորի հրամանով 2007 թվականից: Հանձնաժողովի մոտ 30 %-ը ուսանողներ են:

**ԶՍՓՈՐՈՇԻԶ ք.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները [I Mission\1.8.doc](#) [I Mission\1.7.docx](#)  
Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը [I Mission\1.4.docx](#)  
Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակներ (հարցման արդյունքներ)

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ում ուսանողների, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատումը հիմնականում իրականացվում է սոցիոլոգիական հարցումների միջոցով: Հարցումների համար մշակվել են կրթական ծառայությունների, ուսումնաօժանդակ կազմի

մատուցած ծառայությունների, ուսումնական ռեսուրսների, կոռուպցիոն ռիսկերի, ուսանողների բավարարվածության գնահատման գործիքակազմ: Որոշ հարցումներ կանոնակարգված են («ՎՊՄԻ-ի «Դասախոսը ուսանողների այքերով» արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» [կանոնակարգ](#) ) և կրում են պարբերական բնույթ՝ հարցումը ՄՈՒՀ-ի բոլոր ուսանողների շրջանում կատարվում է տարին երկու անգամ: Բուհի նոր կայքը հնարավորություն է տալիս կատարել նաև առցանց հարցումներ տարբեր շահառուների շահեկիցների շրջանում:

Հարցումների արդյունքները վերլուծվում են, քննարկվում ՄՈՒՀ-ի տարբեր օղակներում, մակարդակներում, վերհանվում են կարիքները և կարգավորման նպատակով ձեռնարկվում միջոցառումներ:

Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության վերլուծության արդյունքները՝ նախատեսվում է սկսել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների և ինտեգրված ծրագրերի ելքային կոմպետենցիաների վրա հիմնված բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթաց՝ այն կողմնորոշելով դեպի ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ստեղծումը:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար տարածաշրջանում [IV\4.2.docx](#) և Վանաձոր [IV\4.3.pptx](#)

*Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> <li>Դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմների կիրառությունը</li> <li>Մագիստրոսի կրթական ծրագրում նոր մասնագիտությունների ներդրումը</li> <li>Խորհրդատվական ծառայությունների ներդրումը</li> <li>ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացում ուսանողների մասնակցությունը</li> <li>Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության մեխանիզմների ամրագրումը ներքին իրավական ակտերում և կիրառությունը</li> <li>Հետադարձ կապի ապահովման գործիքների առկայությունը</li> <li>Ուսանողների տեղեկատվության ապահովումը</li> <li>Օտար լեզուների ուսուցման կարևորումը</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Բուհի սահմանափակ մասնակցությունը ընդունելության գործընթացին</li> <li>Դիմորդների թվի նվազումը</li> <li>Բնագիտական մասնագիտություններու ուսումնառության թույլ հիմնավորումը</li> <li>Հետբուհական կրթության գործընթացում ուսանողների թույլ ներգրավվածությունը</li> <li>ՈւԳԸ աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածությունը</li> <li>Կրթական ծառայությունների գնահատման և կարիքների վերհանման մեխանիզմների անկատարությունը</li> <li>Աշխատաշուկայի կարիքների դիպվածային վերլուծությունը</li> <li>Առաջխաղացմանը նպաստող ծառայությունների անկատարությունը</li> </ol>
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ol style="list-style-type: none"> <li>ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացում ուսանողների դերակատարման մեծացում</li> <li>Մագիստրոսի կրթական ծրագրերի ներդրման</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Հայաստանի Հանրապետությունում դիմորդների թվի նվազումը</li> <li>Մայրաքաղաքի ՄՈՒՀ-երի</li> </ol>

<p>միջոցով ուսանողների հավաքագրման գործընթացի աշխուժացումը</p> <p>3. Խորհրդատվական ծառայությունների բարելավումը, նոր մեթոդների կիրառությունը</p> <p>4. Ուսանողների շարժունությունն ակտիվացնելու նպատակով նպաստավոր պայմանների ստեղծումը</p> <p>5. Հետադարձ կապի ապահովման գործիքների զարգացումը</p> <p>6. Ուսանողների շարժունության խթանումը</p>	<p>մրցակցությունը և տարածաշրջանի ոչ պետական ՄՈՒՀ-երի համեմատաբար ցածր վարձավճարների գրավչությունը</p> <p>3. Ուսանողների հոսքի մեծացումն առկա ուսուցման համակարգից հեռակա համակարգ</p> <p>4. Աշխատաշուկայի պահանջների փոփոխականությունը</p> <p>5. Ծրջանավարտների հետ կապի թուլացում կամ բացակայությունը</p>
--	--

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

ՄՈՒՀ-ը վարում է ուսանողամետ քաղաքականություն՝ ստեղծելով արդյունավետ և նպաստավոր կրթական միջավայր, որտեղ կարող են կազմակերպվել ուսանողների և՛ ուսումնառությունը, և՛ գիտահոտագոտական գործունեությունը: Առկա թերությունները հնարավորինս վերացնելու նպատակով առաջարկվում է՝

1. դիմորդների հավաքագրման աշխատանքներում ներգրավել բոլոր շահառուներին,
2. իրականացնել աշխատանքներ, կազմակերպել միջոցառումներ բնագիտական մասնագիտություններով ուսումնառության մոտիվացիան ուժեղացնելու նպատակով,
3. աշխուժացնել հետազոտական աշխատանքները,
4. կատարելագործել կրթական ծառայությունների գնահատման և կարիքների վերհանման մեխանիզմները,
5. կատարելագործել առաջխաղացմանը նպաստող ծառայությունները,
6. իրականացնել խորհրդատվական աշխատանքներ ուսանողների, կուրսերի տարբերակմամբ:

**V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕՓԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ**

**ԶԱՓԱՆԻՇ:** *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

ՎՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան ՄՈՒՀ-ը համալրվում է որակյալ կադրային ներուժով:

Համալսարանի անձնակազմի զարգացմանն են ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության՝ կադրերի հստակ պլանավորումը, սահուն սերնդափոխության, աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների, մարդկային ռեսուրսների մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման, պարտականությունների և իրավունքների հստակ բաշխումն ու ապահովումը: Համալսարանի ղեկավարությունը պարբերաբար միջոցներ է ձեռնարկում պրոֆեսորադասախոսական և

ուսումնասիրական անձնակազմը գիտական աստիճան և կամ կոչում ունեցող հաստիքային դասախոսներով համալրելու ուղղությամբ:

(„ՎՊՀ, պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգ, „ՎՊՀ,, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու կարգ, ՎՊՀ-ի գիտական խորհուրդ, 25.09.2014թ., արձանագրություն թիվ 7, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգ, 05.05. 2014թ., հրաման 671Լ/Կ):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասիրական կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնասիրական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը  
<http://www.vsu.am/karg/Profesoradasaxosakan-verjnakan-1.pdf>

<http://www.vsu.am/karg/nor%20ashxatanqayin%20paymanagir.pdf>

Հիմքեր՝  
Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների՝ նշելով գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները (հաստիքային ցուցակ)

Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը  
<http://www.vsu.am/karg/patvavor%20kochumner-NOR.pdf>

*Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնասիրական կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին:*

ՎՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան ՄՈՒՀ-ը համալրվում է որակյալ կադրային ներուժով ([ՎՊՀ 2014-2018թ.թ. զարգացման հայեցակարգ](#)): Այդ նպատակով կատարվում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի վերլուծություն և գնահատում ([Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգ, ՎՊՀ-ի գիտական խորհուրդ, 25.09.2014թ. \(արձանագրություն թիվ 7\)](#)): Դասախոսական կազմի մասնագիտական որակները պարբերաբար ստուգվում են դասալսումների, կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող ստուգայցի միջոցով:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները յուրաքանչյուր ուսումնական տարվա համար վերանայվում են ըստ կանոնակարգի ([Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգ, 05.05. 2014թ., հրաման 671Լ/Կ](#)):

Մշակման փուլում է ուսումնասիրական կազմի մասնագիտական որակները բարձրացնելու վերապատրաստման և ատեստավորման կարգը:

*Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնասիրական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը*

ՄՈՒՀ-ում պրոֆետրադասախոսական կազմը համալրվում է մրցույթով, աշխատանքի հրավիրվողներով և ժամավճարային կարգով ՀՀ Աշխատանքային օրենսգրքին, աշխատանքային պայմանագրին, ՎՊՀ-ի կանոնադրությանն ու [ներքին կարգապահական կանոններին](#), իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ կոլեկտիվ պայմանագրին համապատասխան՝ պայմանավորված ՄՈՒՀ-ի առաքելության և կրթական ծրագրերի նպատակները պատշաճ իրականացնելու անհրաժեշտությամբ:

Մշակման փուլում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը, ինչպես նաև հասարակական աշխատանքների իրականացմանը միտված տարբերակված հավելավճարի կարգը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆետրադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

- Հիմքեր՝
- Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆետրադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները (պաշտոնների նկարագրեր)
  - Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականությունը
  - Վերանայման վերլուծությունները և արդյունքների արտացոլումը նոր քաղաքականության մեջ

*Հիմնավորել պրոֆետրադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:*

Մրցութային հանձնաժողովը և ղեկավարությունը առաջնորդվում են ընտրվող պրոֆետրադասախոսական կազմի մասնագիտական որակներով: Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերը, որպես կանոն, իրականացնում են դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթություն ունեցող կադրեր, որոնք հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ:

Հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, ունեն գիտական աստիճան (կամ գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն) և/կամ գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ:

ՎՊՀ գիտխորհրդին կից ստեղծված է մրցութային (նշանակումների) հանձնաժողով, որը խստագույնս հետևում է պրոֆետրադասախոսական կազմի համալրման օրինականությանը և գործում է ըստ հաստատված [կանոնակարգի](#) (**Մշտական հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին, 05.09.2013թ., հրաման 1388 Ա/Կ**):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

- Հիմքեր՝
- Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը
  - Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման

մեխանիզմներն ու գործիքները

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ

Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, ղեկավարների)

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի և նրանց աշխատանքի մասնագիտական որակի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ըստ մշակված կարգի՝ պարբերաբար կազմակերպվում է <<Դասախոսը ուսանողի աչքերով>> սոցիոլոգիական հարցում, արդյունքները տեղակայվում են ներքին ցանցում, քննարկվում են գիտխորհրդում, համապատասխան ստորոբաժանումներում: Գործում է նաև ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ** դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների

Դասավանդողների կատարելագործման թեմաները

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը

Այլ հիմքեր

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄՈՒՀ-ի գերակա խնդիրներից է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը:

Լրացուցիչ կրթության բաժնի կողմից իրականացվում է դասախոսների կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը, որը բաղկացած է երկու հիմնական կառուցամասերից՝ կրթական և հետազոտական-մեթոդական՝ համաձայն ունկնդիր-դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի: Կազմվել է նաև դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը:

2013-2015 թթ. վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվող դասընթացներին ընդգրկվել են 201 դասավանդող, 20 ուսումնաօժանդակ աշխատող:

Նախատեսվում է ստեղծել շարունակական (հարատև) կրթության կենտրոն՝ համապատասխան հաստիքներով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը

Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը(նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ դասախոսական կազմը համալրվում է հայտարարված մրցույթով. ստուգվում է մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ ժամանակահատվածի կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին, կամ աշխատանքի են հրավիրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

ՎՊՀ յուրաքանչյուր դասախոս ներկայացնում է առարկայական ուսումնամեթոդական փաթեթը, իր կողմից իրականացվելիք աշխատանքային անհատական պլանը:

Տվյալ ուսումնական տարվա ավարտին յուրաքանչյուր դասախոս ամբիոն է ներկայացնում համապատասխան հաշվետվություն:

2015 թ. մարտին ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թվաքանակը և ամբիոններում նրանց ներգրավվածությունն ըստ տարակարգերի ունի հետևյալ նկարագիրը [V\5.1..doc](#)

ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմում ունենք ՀՀ ԳԱԱ 1թղթակից անդամ:

Ըստ 2011-2015 թթ. համեմատության՝ արձանագրված է պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճանաշնորհման և կոչումների նկատելի աճ [V\5.2..doc](#)

Փոփոխվել է գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող դասախոսների թվաքանակը ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմի նկատմամբ [V\5.3.doc](#)

Փոխվել է ժամավճարային հիմունքով աշխատանքի հրավիրված դասավանդողների թիվը հիմնական կազմի նկատմամբ [V\5.4.doc](#)

2013-2015 թթ. ընկած ժամանակահատվածում գրանցվել է գիտական աստիճան և կոչում ունեցողների թվաքանակի աճ, տոկոսային հարաբերակցությամբ (հիմնական աշխատակազմ) 73,73 %-ից հասել է 78,46 % [V\5.5..doc](#)

Կատարվել է ուսումնաժանդակ կազմի աշխատանքային ծանրաբեռնվածության բարելավում (71 աշխատողից՝ 49):

2013-2015 թթ. ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների թիվը փոքր տատանում է ունեցել. 84-ից դարձել է 78 (շուրջ 18 %-ն ունի գիտական աստիճան):

Կարևոր է մարդկային ռեսուրսների ապահովման, անցնցում սերնդափոխության խնդիրը: Կան վտանգներ, քանի որ պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 38,4 %-ի տարիքն անցնում է

ԲՈՒՀ-ի կողմից ստացվել է ասպիրանտական 12 գիտաճյուղով կրթություն կազմակերպելու իրավունք, որը կկարգավորի սերնդափոխության (տարիքային սանդղակով) խնդիրը: Վտանգ ներկայացնող <<Մաթեմատիկա>> գիտաճյուղի համար արդեն ունենք հայցորդության 3 դիմում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ.** ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Հիմքեր՝ Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ի ռազմավարական խնդիրների մեջ կարևորագույն տեղ է գրավում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանն ու բարձրացմանը, մասնագիտական առաջընթացին միտված քաղաքականությունը:

Մշակվել են դասախոսական կազմի, մասնավորապես երիտասարդ դասախոսների, խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:

ՎՊՀ-ն ունի դասախոսական կազմի գործունեությունը խրախուսող քաղաքականություն և գնահատման մեխանիզմներ (ՎՊՀ-ի ներքին կարգապահական կանոններ): ՎՊՀ-ում գնահատվում և խրախուսվում են երիտասարդ դասախոսների կատարած աշխատանքները նույնպես:

Մշակման փուլում են դասախոսական կազմի խրախուսման քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ ըստ մի շարք չափորոշիչների /մասնագիտական, մանկավարժական վարպետություն, անձնային որակներ և այլն/, մշակվում է կանոնակարգ՝ դասախոսների վարկանշային-տարբերակված աշխատավարձ վճարելու նպատակով:

ՎՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանն է նպաստում գիտական հոդվածների ժողովածուների անվճար տպագրումը և հրատարակումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների

Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները

Հիմքեր՝ Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

*Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնասովանողական աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

2013-2015թթ. բարելավվել է ՎՊՀ վարչական, ուսումնասովանողական, վարչատնտեսական աշխատակազմերի թվաքանակը [V\5.7..doc](#)

Վարչական և ուսումնասովանողական աշխատակազմը, առաջնորդվելով բուհի ռազմավարական ծրագրով, իրականացնում է իր ստորաբաժանման գործառնություններից բխող խնդիրները:

Կանոնակարգման փուլում է վարչական և ուսումնասովանողական աշխատակազմի վերապատրաստման և ատեստավորման հարցը:

Կանոնակարգված է ստորաբաժանման ղեկավարների կողմից իրենց անմիջական ղեկավարին ներկայացվող ամենամյա աշխատանքային պլանների և դրանց կատարման ժամանակացույցների կազմակերպումը:

Վարչական ստորաբաժանումների՝ հինգ [ֆակուլտետների](#), [հենակետային վարժարանի](#) և [քոլեջի](#) համար գիտխորհրդի կողմից հաստատվել են կանոնադրություններ և կանոնակարգեր:

Կանոնակարգված է ակադեմիական խորհրդատուի աշխատակարգը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների գործավարության կարգերը: Գիտխորհրդի կողմից հաստատվել և գործողության մեջ են դրվել վարչական, ուսումնասովանողական ստորաբաժանումների կանոնակարգերը:

2013-2015 թթ. համեմատությամբ ակնհայտ է ՎՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական-ուսումնասովանողական-վարչատնտեսական կազմերի հարաբերակցության նկատելի փոփոխությունը [V\5.8..doc](#)

*Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Չափանիշ 5-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար :*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> <li>1. Բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմի առկայություն:</li> <li>2. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգի առկայություն:</li> <li>3. Կրթական ծրագրերի նպատակներին, բուհի առաքելությանը համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմի առկայություն:</li> <li>4. Պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման միտում:</li> <li>5. Դասավանդման արդյունավետությանը միտված ժամանակակից ուսուցման անհրաժեշտ միջոցների առկայություն:</li> <li>6. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գնահատման առկայություն:</li> <li>7. Լրացուցիչ կրթության բաժնի կրեդիտային համակարգով կազմված որակավորման բարձրացման ծրագրի իրականացում՝ համապատասխան միջազգային</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասովանողական կազմի ոչ համաչափ բաժնու Ֆակուլտետների:</li> <li>2. Ավագ, միջին և երիտասարդ սերնդի ոչ լիար համագործակցություն:</li> <li>3. Բուհում կազմակերպվող որակավորման դասընթացներին աշխատակազմի ոչ լիարժեք մասնակցություն:</li> <li>4. Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների համագործակցության ոչ բավարար վիճակ:</li> <li>5. Աշխատանքային գործառնությունների, գործավար իրավունքների և պարտականությունների ոչ բաժնուցություն աշխատակազմում :</li> <li>6. Պրոֆեսորադասախոսական և վարչական, ուսումնասովանողական, վարչատնտեսական կազմի նախատեսված խրախուսման միջոցների ոչ կազմակերպված:</li> <li>7. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնասովանողական կազմի ներուժի ոչ լիարժեք օգտագործում:</li> </ol>

<p>չափանիշների:</p> <p>8. Բուհի աշխատակազմի տարակարգային դրույքաչափերի, սահմանված խրախուսման միջոցների առկայություն:</p> <p>9. ՎՊՀ ռազմավարական ծրագրի իրագործմանը և աշխատանքների կազմակերպմանը վերաբերող ընթացակարգերի և սահմանված աշխատանքային գործառույթների առկայություն:</p> <p>10. Պրոֆեսորադասախոսական և վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմի համաչափ բաշխման առկայություն:</p> <p>11. Աշխատակազմի համար նախատեսված ժամային նորմերի կանոնակարգման առկայություն:</p>	
<p style="text-align: center;"><b>Հնարավորություններ</b></p> <p>1. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստում և ատեստավորում:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման բազմաչափ մեխանիզմների առկայություն:</p> <p>3. Դասավանդողների վերաբերյալ ուսանողների սոցիալական ձևավորված մշակույթ:</p> <p>4. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստման և ատեստավորման գործընթացներ:</p> <p>5. Պրոֆեսորադասախոսական կազմի տարբերակված հավելավճարի տրամադրում:</p> <p>6. Տարածաշրջանում սոցիալական վիճակի վատթարացման, արտագաղթի և այլ ռիսկերի վերլուծական կարողություն:</p>	<p style="text-align: center;"><b>Սպառնալիքներ</b></p> <p>1. Ստորաբաժանումների միջև ոչ լիարժեք համագործակցություն:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական ոլորտում ոչ բավարար մասնակցություն:</p>
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <p>ՎՊՀ-ում պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ վարչատնտեսական կազմերի հարաբերակցությունը համապատասխանում է բուհի ներկայիս ռազմավարությանը, ըստ աշխատանքների կազմակերպման անհրաժեշտության՝ վարվում է սահուն կադրային քաղաքականություն:</p> <p>Այդուհանդերձ, անցումը համալսարանական կրթության՝ ստեղծում է կադրային քաղաքականության վերանայման և վերամշակման անհրաժեշտություն հետևյալ ոլորտներում.</p> <p>Կազմակերպության կառավարման և աշխատանքի կազմակերպման ոլորտ.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ստորաբաժանումներում աշխատանքների պլանավորման և կազմակերպչական աշխատանքների վերանայում,</li> <li>✓ Ընթացակարգերի վերամշակում և համալսարանական պահանջներին համապատասխանեցում,</li> <li>✓ Կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, աշխատանքային կարգապահության և պատասխանատվության բարձրացում,</li> </ul>	

- ✓ Կառավարման թափանցիկության ապահովում,
- Կազմակերպության անձնակազմի զարգացման ոլորտ.
- ✓ Վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմերի՝ մրցույթով աշխատանքի ընդունման կարգի մշակում և կիրառում,
- ✓ Պրոֆետրադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմերի վերապատրաստման աշխատանքների խթանում,
- ✓ Աշխատողների խրախուսման մեխանիզմների բարելավում,
- ✓ Խրախուսել պրոֆետրադասախոսական անձնակազմի գիտահետազոտական ոլորտում ներգրավվածությունը:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեության նպատակը և զարգացման գերակա ուղղություններն ամրագրված են համալսարանի զարգացման հայեցակարգում և ռազմավարությունում: 2014-2018թթ. ռազմավարությունում նախատեսված է Ֆհստակեցնել գիտության զարգացման գերակայությունները>: Գիտության և կրթության միջև արդյունավետ կապի իրականացումը համալսարանի գիտական ոլորտի զարգացման պարտադիր պայմաններից է: Համալսարանի գիտխորհրդում հաստատվել են գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և զարգացման 2015-2019 թթ. գերակայությունները: Մշակված է համալսարանի գիտական գործունեության համալիր վարկանիշային համակարգ, որը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել ստորաբաժանումներում կատարվող գիտահետազոտությունների վիճակը և նրանց որակի ապահովման հնարավորությունները: Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի պլանավորումը կատարվում է ամբիոներում և ամրագրված է աշխատանքային պլաններում:

<b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:	
Հիմքեր՝	<p>Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները</p> <p>Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (կցել կամ հղում կատարել)</p> <p>Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները</p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Գիտահետազոտական գործունեությունը և դրա անընդհատ զարգացումը բուհի առաջնահերթություններից է. դա ամրագրված էր ինչպես ՎՊՄԻ-ի 2010-2015 թթ., այնպես էլ ՎՊՀ-ի 2014-2018 թ.թ. ռազմավարական ծրագրերում: Գիտահետազոտական գործունեության հիմնական նպատակներն են՝</p> <p>ա) ապահովել գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճ,</p>	

բ) ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդավիճակություն,

գ) ապահովել հայագիտության ոլորտի զարգացման առաջնահերթությունը:

Գիտական գործունեության ուղղությունները նույնպես ամրագրված են եղել ռազմավարական ծրագրում:

Առաջինը մանկավարժական գիտության զարգացման խթանումն էր: Այդ նպատակով համալսարանում կազմակերպվել է 6 գիտաժողով, իսկ երկու գիտաժողովում էլ գործել են մանկավարժության բաժանմունքներ: 2010-2014թ.թ. հանրապետական և միջազգային գիտաժողովներին ներկայացվել է 155 աշխատանք: Գիտահետազոտական աշխատանքներին մասնակցել են նաև բակալավրիատի և մագիստրարուրայի ուսանողները (տես գիտաժողովների նյութերի հրապարակումները):

Համալսարանում առաջնային էին մանկավարժության տեսության, կրթության և մանկավարժական մտքի պատմության, գործնական մանկավարժության, սոցիալական մանկավարժության ուղղություններով տարվող աշխատանքները: Այս շրջանակներում արված հետազոտությունների թիվը անցնում է 60-ից, որոնց հիմնադրությունների մի զգալի մասը տեղ է գտել առանձին դասընթացներում և պրակտիկաների ընթացքում:

Հայագիտության ոլորտի զարգացումը նույնպես առաջնահերթություններից մեկն է: Համալսարանում իրականացվում է հայ և օտարազգի հեղինակների զբաբար բնագրերի փոխադրում արևելահայերենի: Երկու գիտաշխատախումբ զբաղվում էր Ստ. Չորյանի և Հովհ. Թումանյանի երկերի համաբարբառների կազմման աշխատանքներով: 2013թ. աշխատախմբերը լուծարվել են բուհում առկա ֆինանսական դժվարությունների պատճառով, և միայն մեկ աշխատակից է շարունակում աշխատանքները Հովհ. Թումանյանի երկերի համաբարբառների վրա:

ՎՊՀ-ում հետազոտություններ են իրականացվում հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական մասնագիտություններով: Համալսարանում գործում են գիտահետազոտական լաբորատորիաներ և կաբինետներ, որոնք օգտագործվում են ինչպես ուսումնական, այնպես էլ գիտահետազոտական նպատակներով: 2007-2012թ.թ. իրականացվել է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական 4 աշխատանք՝ «Միջբարբառային փոխներթափանցումները Լոռու խոսվածքում», «Ցեղիտային և օրգանական պարարտանյութերի օգտագործմամբ մշակաբույսերի կենսունակության և հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ դիմացկունության բարձրացման ուսումնասիրությունը», «Հայկական տոհմանունները» և «Հայ համեմատական անվանագիտություն» (տես ռեկտորի հրամանները): Այժմ պետբյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքներ համալսարանում չեն իրականացվում:

ՎՊՀ-ն առաջնորդվում է ՀՀ օրենսդրության այն դրույթով, որ գիտնականը և գիտական աշխատողն իրավունք ունեն «իրենց հետաքրքրություններին, ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային և ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտական և գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ»: Այլ կերպ ասած՝ գիտնականն ազատ է իր գիտական

գործունեության բնագավառն ընտրելիս:

2014թ.-ին՝ համալսարանականացումից հետո, ընդունված նոր ռազմավարությամբ նախատեսված է «հստակեցնել գիտության զարգացման գերակայությունները»։ Ուստի և 2015թ. հունվարին գիտխորհրդում հաստատվել են «Վանաձորի պետական համալսարան ՊՈԱԿ-ում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը» և «ՎՊՀ-ում գիտության զարգացման 2015-2019թթ. գերակայությունները» (տես vsu.am): Գերակայություններ են համարվել հայագիտությունը, գիտությունները կյանքի և երկրի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, հստակեցվել են գերակայությունների շրջանակներում կատարվող ուսումնասիրությունների ուղղությունները: Առաջին մշտադիտարկումները նախատեսված է անցկացնել 2015թ. մայիս-հունիս ամիսներին ՈԱԿ-ի հետ միասին (տես ՎՊՀ գիտխորհրդի 2015թ. աշխատանքային պլան):

Գիտահետազոտական աշխատանքներին նպաստելու համար ՎՊՀ-ում մինչև 2013թ. հուլիսը գործել է գիտելիքի և գիտության կենտրոն, որի աշխատանքները համակարգվել են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորների կողմից: 2013թ. սեպտեմբերից համալսարանի գիտահետազոտական քաղաքականության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորը (տես ռեկտորի հրամանը): Կառուցվածքային այս փոփոխությունը կատարվել է գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՎՊՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում և հրապարակումներում և մասնագիտական հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, պարբերականների և մենագրությունների, ինչպես նաև հեղինակային իրավունքի վկայականներով ու ինտելեկտուալ սեփականության այլ նյութերով: Հրատարակված աշխատանքները (գիտաժողովների նյութերը) տեղադրվում են ՎՊՀ-ի կայքում, իսկ համալսարանի գրադարանում նախատեսվում է ստեղծել ՎՊՀ-ի աշխատակիցների գիտական աշխատությունների բանկ (տես գրադարանի աշխատանքային պլան):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր՝	Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները
---------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Միջնաժամկետը ու կարճաժամկետ ծրագրերի պլանավորումը կատարվում է ամբիոններում, ինչն էլ ամրագրվում է նրանց աշխատանքային պլաններում: Միջնաժամկետը ու կարճաժամկետ ծրագրերի իրականացնելու գործում ՎՊՀ-ն կարևորում է գիտաժողովների,

նստաշրջանների անցկացումը:

Հիմնարար հետազոտություններն իրականացվում են մասնագիտական ամբիոններում և լաբորատորիաներում: 2012-2014թ.թ. համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակվել է 443 հոդված, բուհական 4 դասագիրք, 26 ուսումնամեթոդական ձեռնարկ, 24 մենագրություն:

2012-2014թ.թ. ՎՊՀ-ում տեղի են ունեցել 8 գիտաժողովներ, որոնցից 3-ը՝ միջազգային և 5-ը՝ հանրապետական: Ընդհանուր առմամբ զեկուցվել են 114 աշխատանքներ (ՎՊՀ-ից՝ 63), որոնցից 22-ը՝ միջազգային, իսկ 92-ը՝ հանրապետական գիտական նստաշրջաններում:

Վերոնշյալ 8 գիտաժողովների նյութերն արդեն հրատարակված են առանձին ժողովածուներով:

Նշված 114 աշխատանքներից 31-ը ունեն մանկավարժական և մեթոդական բնույթ: Դրանցից 31-ի հեղինակները ՎՊՀ-ի-ի աշխատակիցներն են:

ՎՊՀ-ում հրատարակվել են 10 մասնագիտական պրակներ, որոնցում ընդգրկված 179 հոդվածներից 100-ի հեղինակներ ևս ՎՊՀ-ի աշխատակիցներն են:

**Գիտական աշխատանքների տվյալները 2012-2014թ.թ.**

Ծ/ Ծ	Տարեթիվը	Ուսումնա- մեթոդական աշխատանք	Մենագրություն	Դասագիրք
1.	2012	14	9	4
2.	2013	5	7	-
3.	2014	7	8	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>26</b>	<b>24</b>	<b>4</b>

Որպես համալսարանի հիմնարար և կիրառական հետազոտությունների ոլորտի ռազմավարության զարգացման ուղեկցող արդյունք՝ ծրագրվում է՝

- ✓ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,
- ✓ մասնագիտական խորհուրդների ստեղծում,
- ✓ մագիստրանտների և ասպիրանտների (հայցորդների) ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում,
- ✓ գիտական և գիտամեթոդական գրականության ծավալների ընդլայնում և տարածում,
- ✓ գիտական արդյունքների առևտրայնացում և դուրսբերում արտաքին և ներքին շուկա,
- ✓ երիտասարդ գիտական կադրերի աճը խթանող ծրագրերի մշակում,
- ✓ ուսանողների ներգրավվածություն գիտաժողովներին, սեմինարներին, մրցույթներին,
- ✓ աշխատակիցների գիտական գործողումների իրականացում,
- ✓ համագործակցություն ՀՀ ԳԱԱ ճյուղային ինստիտուտների և հետազոտական կենտրոնների հետ:

2014թ. հոկտեմբերին կայացել է 2 միջազգային և 1 հանրապետական գիտաժողով՝ «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցման համատեքստում»՝ նվիրված ՎՊՀ-ի 145-ամյակին, Հայկական քիմիական ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպված 4-րդ միջազգային գիտաժողովը՝ «Ձեռքբերումներ և խնդիրներ», և Հովհ. Թումանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովը (նյութերը կայքում): 2015թ.-ին նախատեսված է միջազգային գիտաժողով՝ նվիրված Մ.Աբեղյանի ծննդյան 150-ամյակին,

ինչպես նաև ՈՒԳԸ և ներբուհական գիտաժողովներ՝ նվիրված հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին: Մագիստրանտներն ակտիվ ներգրավվածություն ունեն գիտահետազոտական աշխատանքներում. նրանք հողվածներ են տպագրում ինչպես դասախոսների հետ, այնպես էլ առանձին՝ հանդես գալով գիտաժողովներում (տես գիտաժողովների նյութերի հրապարակումները):

2014թ.-ի հունվարից գործում է <<Գիտական գործուղումների կարգը>>, ըստ որի՝ ՎՊՀ-ն գիտական միջոցառման մասնակից աշխատակիցներին տրամադրում է ճանապարհածախսը (տես vsu.am):

<<Վանաձորի պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման կարգը>>, որը նույնպես ընդունվել է 2015թ. հունվարին և կիրառվելու է սեպտեմբերից, կխթանի ուսումնագիտական աշխատանքների ծավալները և կատարման որակը, մագիստրանտների ներգրավվածությունը: Այս կարգի փորձնական կիրառումը ցույց տվեց, որ այն ունի մի շարք ընթացակարգային թերություններ՝ կապված մրցույթների անցկացման, գումարների բաշխման և արդյունքների տպագրության հետ: Անհրաժեշտ ընթացակարգերի ընդունումը նախատեսված է մինչև ուսումնական տարվա վերջը:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները  
 Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար)  
 Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը  
 Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը  
 Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը

*Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Որակյալ հետազոտությունների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար նախատեսված են եղել և իրականացվել են մի շարք քայլեր:

Գրադարանում 2012թ.-ի մայիսից գործում է ինտերնետային wi-fi կապ, որը տրամադրել է viva cell ընկերությունը 2 տարի ժամկետով՝ մինչև 2014թ. մայիսը (պայմանագիրը երկարաձգվել է մինչև 2015թ. մայիսը, իսկ մասնաշենքերից մեկում 2005-ից՝ համակարգիչներով հագեցած գիտական կաբինետ: Ֆակուլտետներում ամբիոններին կից գործում են հայոց լեզվի և գրականության, փիլիսոփայության և իրավագիտության, աշխարհագրության, հոգեբանության և մանկավարժության, պատմության, դեղագործական քիմիայի կաբինետները, գիտահետազոտական համալիր լաբորատորիան, Ս. Մերգելյանի անվան համակարգչային լսարանը, լինգվաֆոնային կաբինետը, որոնք նախատեսված են թե

դասախոսների, թե ուսանողների համար:

Հետազոտական աշխատանքներն էապես խթանում են ՀՀ օրենսդրական ակտերը (մասնավորապես ԿԳՆ և ԲՈՀ-ի), որոնք կարևորում են դասախոսի հետազոտական աշխատանքի արդյունքները և ձեռքբերումները դոցենտի և պրոֆեսորի կոչումներ շնորհելիս:

Վերջին տարիներին լաբորատորիաները համալրվել են մի շարք նորագույն սարքավորումներով: 2012-2014թ.թ. լաբորատորիաների և կաբինետների համար գնվել են շուրջ 31543,5 մլն. դրամի սարքավորումներ:

Յուրաքանչյուր տարի հրատարակվում են տարբեր գիտաճյուղերին նվիրված գիտական հոդվածների ժողովածուներ: 2015թ.-ից <<Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիրը>> ներառված է ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում (տես boh.am): Հետազոտական բյուջեն ձևավորվում է պետական և արտաբյուջետային միջոցներից: ՎՊՀ-ն վերջին երեք տարիների ընթացքում միայն 2013թ.-ին է ամբիոներում գիտահետազոտական աշխատանքները ֆինանսավորելու համար հատկացրել 3.0 մլն. դրամ գումար, որը կազմում էր բյուջեի 0.4%-ը: Սակայն ոչ մի ամբիոն նախատեսված գումարներից օգտվելու հայտով հանդես չէր եկել:

2015թ.-ի բյուջեում հետազոտության և զարգացման համար արդեն նախատեսված է 38500 հազար դրամ (բյուջեի 4.3%-ը), որը ներառում է ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրում, տեղեկագրերի և գիտաժողովների նյութերի տպագրություն, գիտական գործուղումներ, գիտական փորձաքնություններ, լաբորատոր սարքավորումների ձեռքբերում և այլն:

Հետազոտությունների համար նախատեսվող բյուջեն մասամբ բաշխվում է ամբիոններից ներկայացված հայտերի, զեկուցագրերի, աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների հիման վրա: Սակայն այն ունի համակարգման, ընթացակարգային կանոնավորման կարիք:

Որակյալ հետազոտություններին նպաստում է ՎՊՀ-ի աշխատակիցների մասնակցությունը տարաբնույթ գիտական միջոցառումներին. համալսարանն օժանդակում է աշխատակիցների մասնակցությանը հանրապետական և միջազգային գիտաժողովներին՝ մասամբ կամ ամբողջությամբ փոխհատուցելով գործուղումների ճանապարհածախսերը (տես vsu.am, <<Գիտական գործուղումների մասին կարգը>>):

2013-թ.-ին համալսարանի մի շարք դասախոսներ դրամական պարգևներ են ստացել գիտահետազոտական արդյունավետ աշխատանքներ կատարելու համար (տես ռեկտորի հրամանը): Դասախոսների գնահատման վարկանիշային համակարգի ներդրումից հետո կարելի կլինի խուսափել համահարթեցումից, իսկ դրամական հավելավճարները կունենան մշտական բնույթ:

<<Պրոֆեսորադասախոսական աշխատակիցների կողմից գրված մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, անհատական ցուցահանդեսների, սպորտային նվաճումների խրախուսման կարգը>> (տես vsu.am) սահմանում է հավելավճարներ (պարգևատրումներ) կատարած աշխատանքների համար:

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և

գրագործությունը կանխելու նպատակով հրապարակման ներկայացված նյութերը նախապես քննարկվում են ամբիոնների մասնագիտական սեմինարներում կամ նիստերում: Մենագրություններն ու ուսումնական ձեռնարկները տպագրության են երաշխավորվում համալսարանի գիտխորհրդում ամբիոններում կամ ֆակուլտետների խորհուրդներում քննարկվելուց հետո: Ըստ անհրաժեշտության՝ հրապարակման ենթակա նյութերը կարող են արտաքին գրախոսման ուղարկվել ՀՀ գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ: Այս դրույթներն ամրագրված են «Ժողովածուների տպագրության» և «Գիտաժողովների անցկացման կարգերում»: 2015թ.-ի հունվարից գործում է նաև «Ակադեմիական ազնվության կարգը» (տես vsu.am):

Հետազոտական արդյունքի որակին էապես նպաստում են հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում հրապարակման բարձր պահանջները:

Սակայն գիտահետազոտական գործունեության իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը դեռևս բավարար համարել չի կարելի: Չկան երիտասարդ կադրերի աճը խթանող ծրագրեր, անհրաժեշտ լաբորատորիաների կամ սարքավորումների բացակայության պատճառով երբեմն հետազոտություններն իրականացվում են այլ բուհերում կամ գիտահետազոտական հիմնարկներում: Դանդաղ է ընթանում լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի հարստացումն ու նորացումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար

*Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Համալսարանում գիտության բնագավառում միջազգային համագործակցությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և իրականացվում է Հայաստանի կողմից հաստատված միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի և կոնվենցիաների հիման վրա՝ համաձայն արտասահմանյան երկրների հետ կնքված պայմանագրերի:

Համալսարանի միջազգային համագործակցության նպատակներից են կրթական ու գիտական գործունեության որակի ապահովումը և որպես ուսումնական կենտրոնի՝ միջազգային հեղինակության բարձրացումը (vsu.am, Ռեզումեներ): Այսօր համալսարանը պայմանագրեր ունի և համագործակցում է 7 կազմակերպությունների հետ: Համալսարանի դասախոսները և ուսանողները մասնակցում են ԱՊՀ և արտասահմանյան բուհերում անցկացվող գիտագործնական գիտաժողովներին: Դասավանդողների և ուսանողների ներգրավվածությունը, սակայն, միջազգային հետազոտական նախաձեռնություններում բարձր չէ: Դրան հիմնականում խոչընդոտում է օտար լեզուների անբավարար իմացությունը: Իրավիճակը շտկելու համար 2012-2013 ուստարվա 2-րդ կիսամյակից համալսարանի լրացուցիչ կրթության բաժնի կողմից կազմակերպում են անգլերենի դասընթացներ, որոնց

մասնակցել են 128 աշխատակիցներ, ըստ որում՝ 1-ին մակարդակի դասընթացներին 74 մարդ, 2-րդ մակարդակին՝ 54 (տես ԼԿ բաժնի տեղեկանքը):

Համալսարանը չունի օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները կարգավորող մեխանիզմներ, քանի որ նախ՝ նման կարգավորումը կարող է սահմանափակել գիտնականի ազատությունները և շփումները, և երկրորդ՝ յուրաքանչյուր պարբերական ինքն է սահմանում տպագրության իր չափանիշները:

Ստորև ներկայացնում ենք ՎՊՀ-ի աշխատակիցների հոդվածների քանակը՝ տպագրված միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) և ՀՀ գրախոսվող ամսագրերում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները  
 Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ  
 Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները  
 Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ)

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	35 %
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	50 %
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	-

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ: Համալսարանի գիտական ոլորտի զարգացման պայմաններից է «գիտության և կրթության ինտեգրումը» (տես vsu.am, Ռազմավարություն): Դեռևս բակալավրիատում ուսանողները առնչվում են հետազոտական գործունեությանը, երբ սկսում են կատարել կուրսային, ապա և ավարտական աշխատանքներ: Մագիստրատուրայի ուսանողները մասնակցում են ամբիոնների սեմինարներին, իսկ նրանց ավարտական աշխատանքների մի մասը, որպես կանոն, առնչվում է ամբիոնների հետազոտության թեմաներին:

2015-16 ուստարվանից ներդրվելիք մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչին տրվել է 48 կրեդիտ (40 %), որից 18 կրեդիտը ուսանողները հավաքում են ուսումնական տեսական գործընթացին զուգահեռ, իսկ վերջին 30-ը՝ հետազոտական աշխատանքներին ու պրակտիկաներին (տես մագիստրոսական ՄԿԾ-ներ):

Դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ վերոբերյալ գործընթացներից բավարարված է դասախոսների 50%-ը, ուսանողների 35%-ը: Իսկ գործատուների 66.7%-ը նշել է, որ կցանկանար հետազոտություններ պատվիրել համալսարանին, սակայն դա չի արվել կամ ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով (33.3%), կամ էլ հետազոտություն պատվիրելու վերաբերյալ տեղեկացված չեն եղել (6.67%) (տես հարցման արդյունքները):

Բացի ամբիոններից՝ ուսանողների գիտական գործունեությանը մեծապես նպաստում է ուսանողական գիտական ընկերությունը՝ ՈՒԳԸ-ն, որը պարբերաբար կազմակերպում է հանրապետական գիտաժողովներ, որին մասնակցում են ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ: Գիտաժողովներին զեկուցված և հրատարակման երաշխավորված լավագույն աշխատանքները տպագրվում են ժողովածուներում: Վերջին հանրապետական ուսանողական գիտաժողովին մասնակցել են ՀՀ 7 բուհերի ուսանողներ (տես ՈՒԳԸ գիտաժողովների նյութեր):

Սակայն անհրաժեշտ է այնպիսի քաղաքականության մշակում, որ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների գոնե մի մեծ մասը տեղ գտնի կրթական ծրագրերում և կամ էլ նպաստի դրանց բարեփոխմանը:

*Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Չափանիշ 6-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 3 տարիների համար:*

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. ՎՊՀ-ի ռազմավարական պլանում հետազոտություններին և զարգացմանը վերաբերող նպատակների առկայություն 2. ՎՊՀ-ի ամբիոնների մի մասի գիտահետազոտական հիմնական ուղղվածության առկայություն և համապատասխան գիտական և հետազոտական աշխատանքների իրականացում 3. “Վանաձորի պետական համալսարանի տեղեկագրի” մասնագիտական պրակտիկայի մշտական	1. ՎՊՀ –ի գիտական կաբինետներից, գրադարանից, ընթերցասրահներից և ուսումնական կաբինետներից օգտվելու հնարավորություն 2. Հանրապետական և միջազգային գիտաժողովների մասնակցություն 3. Այլ կազմակերպությունների լաբորատորիաներում, համայնքապատկան հողերում փորձեր և հետազոտություններ

<p>հրատարակում և ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկվածություն</p> <p>4. Համահամալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում</p> <p>5. Ուսանողների և դասավանդողների ակտիվ մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների</p> <p>6. ՈւԳԸ-ի ակտիվ գործունեություն</p>	<p>իրականացնելու հնարավորություն</p> <p>4. Ներհամալսարանական դրամաշնորհով գիտահետազոտական նախագիծ կատարելու հնարավորություն</p>
<p><b>Թույլ կողմեր (Weaknesses)</b></p>	<p><b>Վտանգներ (Threats)</b></p>
<p>1. Գիտական հետազոտությունների իրականացման համար երբեմն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայություն</p> <p>2. Գիտական թեմաների պետական ֆինանսավորման բացակայություն</p> <p>3. Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի բացակայություն հետազոտությունների բնագավառում</p> <p>4. Ամբիոնների հետազոտական աշխատանքներում ուսանողների սակավ մասնակցություն</p> <p>5. Մի շարք մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերի բացակայություն</p> <p>6. Գիտահետազոտական կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն</p>	<p>1. Գիտահետազոտական պատվերների բացակայություն</p> <p>2. Երիտասարդ գիտնականների թույլ ներհոսք գիտության բնագավառ</p> <p>3. Բնագիտամաթեմատիկական մասնագիտությունների &lt;&lt;ծերացում&gt;&gt;</p>
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p>	

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ և ԶԱՐԳԱՑՈՒՄԸ					01.03.2015	25.12.2015
	I	II	III	IV	Առկա վիճակը	Բարելավմանն ուղղված քայլեր
1. Դասախոսների վարկանիշային համակարգի մշակում և ներդրում				+	Պատրաստ է նախագիծը	Գներդրվի ֆինանսական հնարավորությունների առկայության և հիմնավորումների դեպքում
2. Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում		+	+		Ամբիոններում տարվող աշխատանքները ժամանակային պլանավորում չունեն	Գիտահետազոտական աշխատանքների կատարման համար սահմանել ժամանակացույց, մշակել հաշվետվողականության համակարգ
3. Հետազոտական բյուջեի ձևավորման և բաշխման կարգի և ընթացակարգի մշակում և ներդրում		+	+		Բյուջեի ձևավորումն ու բաշխումը համակարգված չէ	Ֆինանսատնտեսական հանձնաժողովին հանձնարարել ձևավորել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթ
4. Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականության և ընթացակարգերի մշակում և ներդրում			+		Խրախուսման առանձին տարրեր կան տարբեր կանոնակարգերում	Ի մի բերել խրախուսմանն ուղղված դրույթները, մշակել քաղաքականություն և կիրառման ընթացակարգեր
5. Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնասողների և դասախոսների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգի մշակում և ներդրում		+	+		Առկա են <<Հորիզոն 2020>>-ի և Վանաձորի տեխնոպարկի առաջարկած փաթեթները	Շարունակել միջազգային ծրագրերի որոնումները, ամբիոնների իրազեկումը, խորհրդատվությունների տրամադրումը
6. Հետազոտական գործունեության ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականության, ընթացակարգերի և մեթոդների մշակում և ներդրում		+	+	+	Առկա է ուսանողության ներգրավվածություն	Ձևավորել դասախոսների գիտական աշխատանքների ուսումնական պրոցեսում ներդրման փաստաթղթային փաթեթ, անցկացնել սոցիարցում ուսանողների շրջանում կարիքների վերհանման համար

**VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

**ԶԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՄՈՒՀ-ի ուսումնական գործընթացի կազմակերպումը, որակյալ կրթության համար ուսումնական միջավայրի ապահովումը, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման, մասնագիտական զարգացման, հետազոտական աշխատանքների կատարման, գրադարանային ֆոնդի թարմացման, հարստացման, սարքավորումների, գույքի ձեռք բերման, լսարանային պայմանների, սանիտարա-հիգիենիկ , առողջապահական և անվտանգության ապահովման համար նախատեսված ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակների և ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությանը, ինչը ամրագրված է համալսարանի զարգացման հայեցակարգում և ռազմավարությունում:

ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կատարվում է, ստորաբաժանումների կողմից սեփական կարիքների բացահայտման հիման վրա, իսկ պահաջվող ռեսուրսների գնումները՝ ըստ գնումների մասին ՀՀ օրենքի պահանջի և ընթացակարգի:

<b>ԶԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հիմքեր	<p>Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները</p> <p>Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները</p> <p>Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը</p> <p>Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը</p> <p>Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները</p>
Պատասխանել հետևյալ հարցերին:	<b>%</b>
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	44.7
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	61.2
<p><i>Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:</i></p> <p>Համալսարանն իր ուսանողների կրթական կարիքներն ապահովելու և հազեցած կրթական միջավայր ստեղծելու համար ունի 1 վարչական, 3 ուսումնական մասնաշենքեր, որոնցից մեկը, որը հատկացված է արվեստի ամբիոնին գտնվում է ինստիտուտի հիմնական տարածքից դուրս և գրանցված է Գր. Լուսավորիչի 47 հասցեում: Այդ մասնաշենքում մասնագիտական ուսումնական պարապունքներն են անցկացնում կերպարվեստի և գծագրության, երաժշտական կրթության բաժինները: Դասերն ընթանում են 20 մոլբերտով կահավորված թվով 4 և 9 դաշնամուրային լսարաններում: Գործում է նաև խեցեգործության խմբակը:</p>	

Ուսումնական և ուսումնա-լաբորատոր շենքերի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 8287.34 քմ: Ուսումնական թիվ 1 մասնաշենքում են գտնվում հումանիտար հոսքի երեք ֆակուլտետները՝ բանասիրական, պատմաաշխարհագրական և մանկավարժության: Վերանորոգված և ուսումնական ժամանակակից գույքով համարված լսարաններում, կաբինետներում են կազմակերպվում դասախոսությունները, գործնական և սեմինար պարապունքները, արտալսարանային աշխատանքները [VII7.1.docx](#)

Ուսումնական 1-ին մասնաշենքում իրենց ուսումնական, գիտական գործունեությունն են ծավալում հայոց լեզվի, գրականության, ռուսաց լեզվի, օտար լեզուների, պատմության, հոգեբանության և սոցիոլոգիայի, մանկավարժության, պատմության, հոգեբանության, հայոց լեզվի և գրականության, Հ.Դինքի անվան, լրագրության, լինգվաֆոնային, փիլիսոփայության և իրավագիտության, տնտեսագիտության և աշխարհագրության կաբինետները: Նկուղային հարկում են գտնվում հրաձգարանը և ֆիզդաստիարակության փոքր մարզադահլիճը: Քանի որ համալսարանը չունի սեփական մեծ մարզադահլիճ, ուստի մարմնակրթական դաստիարակության դասերի մի մասը ընթանում են վարձակալած տարածքներում:

Ուսումնական 2-րդ մասնաշենքը ներկայացվում է, որպես ուսումնալաբորատոր մասնաշենք, քանի որ այնտեղ է կազմակերպվում բնագիտական հոսքի ուսումնական գործընթացը: Այս մասնաշենքի տարածքում են գտնվում ֆիզիկամաթեմատիկական և կենսաբանաքիմիական ֆակուլտետները՝ համա-պատասխան ամբիոններով: Ուսումնական պրոցեսի կազմակերպման նպատակով գործում են համապատասխան լաբորատորիաներ [VII7.2.docx](#)

Ուսումնական արհեստանոցը նախատեսված է նյութերի մշակման պրակտիկում, նյութերի մշակման տեխնոլոգիաներ, տեխնոլոգիական ստեղծագործություն, դիզայն առարկաների գործնական պարապունքներ անցկացնելու, ինչպես նաև արտադրական պրակտիկա ժամանակ ուսանողներին մետաղամշակման, փայտամշակման հաստոցներ կառուցվածքների հետ ծանոթացնելու համար:

2008թ կառուցվել է Ս. Մերգեյանի անվան համակարգչային կենտրոնը, որը համարված է արդիական համակարգիչներով, համապատասխան ուսումնական գույքով:

Բացի նշված մասնաշենքերից համալսարանը Լոռու մարզի Բագում համայնքում ունի վերանորոգված և վերակառուցված 2 մասնաշենք՝ ընդհանուր 1081.1քմ մակերեսով և հողատարածք: Այստեղ են անցկացվում ուսումնամարզական միջոցառումներ, կազմակերպվում են համահամալսարանային միջոցառումներ, ամառային ճամբարներ՝ համալսարանի աշխատակիցների երեխաների և թոռների համար: Մասնաշենքերում առկա են կենցաղային բոլոր պայմանները: Առաջիկայում նախատեսվում է տարածքում կառուցել մարզադաշտ, լողավազան:

2014թ. ինքնավերլուծության մեջ նախատեսված էր արխիվի տարածքի բարելավում , այն կատարվել է:

2014թ. ստեղծվեց Բագումի հանգրվանի կառուցապատման ֆոնդ:

*Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան ՎՊՀ-ի լսարանային ֆոնդի, ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակի գնահատմանը, դրանց փուլային արդիականացմանը, նոր լաբորատորիաների ստեղծմանը և ուսումնական ու լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործմանը զուգընթաց համալսարանում առկա են նաև մի քանի հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Նախատեսվում է մեծ մարզադահլիճի կառուցում՝ կահավորումով :

Համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար: Արդյունքում՝ ՎՊՀ մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ, սակայն կահավորման և արդիական տեխնիկական հագեցվածության առումներով դեռ անելիքներ կան: *Քայլեր պետք է ձեռնարկվեն Բարեկամների ակումբի միջոցով, նաև այլ աղբյուրներից գումարներ հայթայթելու ընթացիկ պահանջները բարելավելու համար:*

Գրադարանի զարգացումը ՎՊՀ-ի կարևոր ռազմավարական ուղղություններից է: 2010թ. ՎՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած գրադարանի զարգացման հայեցակարգի իրականացման շնորհիվ բարձրացել է ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին: Համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում գրադարանի գրքային ֆոնդը համալրելու, տեղեկատվական հնարավորությունները մեծացնելու, տեխնիկական և շենքային պայմանները բարելավելու նպատակով:

ՎՊՀ-ի գրադարանի հարկաբաժինն զբաղեցնում է 702 քմ մակերես: Նրա երեք գրապահոցներում առկա են 228.538 միավոր գիրք, որոնցից 2920՝ հնատիպ: Գրադարանն ունի երկու ընթերցասրահներ, որոնցում առկա է 3915 միավոր գրականություն: Համալսարանի երեք ֆակուլտետներում առկա են թվով 6 մասնագիտական կաբինետ-ընթերցասրահներ՝ 2214 միավոր գրականությամբ: Գրադարանի երկու ընթերցասրահները վեց կաբինետ-ընթերցասրահների հետ կարող են միաժամանակ սպասարկել 232 ընթերցողի:

Գրադարանի վերազինմամբ բարեփոխվել է ոչ միայն նեքին աշխատանքների կատարման որակը, այլև նշանակալիորեն բարձրացել է գրադարանի աշխատակիցների սպասարկման կուլտուրան, որը ուսանողներին ևս պարտավորեցնում է բարեկիրթ վարվելակերպի:

Գրադարանը հագեցած է անհրաժեշտ գրականությամբ, և շարունակվում է համալրելու գործընթացը. տարեկան համալրումը կազմում է 2000 միավոր գրականություն:

Ուսանողների համար պահանջվող որակով ուսուցման համար էլեկտրոնային ընթերցասրահի պահանջը բավարարման ընթացքի մեջ է:

Ընթացքի մեջ է գրադարանի համակարգչային գրքացուցակի և քարտարանի ստեղծման գործընթացը, որի վերջնարդյունքում ընթերցողները կարող են տեղեկանալ գրադարանում առկա գրականության մասին, ինչպես նաև ցանկացած վայրից կատարել էլեկտրոնային պատվեր:

Սկսված են համալսարանի լոկալ էլեկտրոնային գրադարանի ստեղծման աշխատանքները: Նրա մեջ ներառված են ՎՊՀ-ում կայացած հանրապետական և միջազգային գիտաժողովների նյութերն ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հրապարակումները:

ՎՊՀ-ի համակարգչային ցանցը բավարարում է կրթական պահանջները: Այն իր

տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրերով որոշակիորեն բարձր մակարդակ ունի:

Բավարար չէ ուսումնագիտական ստորաբաժանումների հետ գրադարանի համագործակցության մակարդակը: Ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը քիչ են ներգրավված տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման աշխատանքներում:

ՎՊՀ-ի գրադարանը համագործակցում է Վանաձորի քաղաքային գրադարանի և Նորամուծության ու ձեռներեցության ազգային կենտրոնի հետ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը ՎՊՀ վարչակազմի ուշադրության կենտրոնում է: Այսօր ՎՊՀ համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրումներով համապատասխանում է ներքին շահակիցների պահանջներին և բավարարում է կրթական պահանջները:

Բոլոր մասնաշենքերը (բացի Գր. Լուսավորիչի 47 հասցում գտնվողից) միացված են ներքին ցանցին: Վերոհիշյալ մասնաշենքն ապահովված է Համացանցով WiFi կապի միջոցով:

ՎՊՀ-ի ներքին ցանցն այսօր ներառում է 270-ից ավել համակարգիչ, որոնց մալուխային ցանցը ձգվում է ավելի քան 3 կմ:

ՎՊՀ-ում այսօր ուսանողների տրամադրության տակ են գտնվում հետևյալ լսարանները և կաբինետները՝

Ս. Մերգեյանի անվան Համակարգչային կենտրոն 51 համակարգիչով, 8-20 համակարգիչներով համալրված 7 լաբորատորիա, 1-5 համակարգիչներով համալրված 15 ուսումնական կաբինետ, որոնցից 8 հատում առկա են տեսապրոյեկտորներ, ակտիվ գրատախտակներ և էկրաններ: Համակարգչային լսարաններից 6-ում կազմակերպված են մինի ենթասերվերներ:

Վերոհիշյալ լսարանների և կաբինետների գերակշռող մասում առկա է Համացանցի մուտքի թույլտվություն: ՎՊՀ բոլոր ստորաբաժանումներում ևս առկա է համացանցի մուտքի թույլտվություն:

Վիվա Սել-USU՝ ընկերությունը գրադարանում ստեղծել և կահավորել է անվճար WiFi անկյուն: WiFi անկյուն ՎՊՀ-ի կողմից ստեղծվել է նաև վարչական մասնաշենքի 1 և 2-րդ հարկերում, ինչպես նաև ուսումնական մասնաշենքերից մեկում, որոնց միջոցով հնարավորություն է տրվում անվճար օգտվել Համացանցի ծառայություններից:

Նախատեսվում է նաև 2015 թվականին գրադարանի ընթերցասրահում տերմինալ-սերվերային համակարգի հիմքի վրա կազմակերպել էլեկտրոնային գրադարան 8 հատ աշխատանքային տեղով:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր՝ Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի  
Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը)  
Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների  
Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)

Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման , սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով)  
 Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների բաշխումը Այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը  
<http://vsu.am/karg/finans%20hancnajokovi-NOR.pdf>


*Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերի հաշվին:

ՎՊՀ-ի բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվը կազմվում է նախորդ տարիների փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա և նպատակ է հետապնդում վերահսկողություն իրականացնելու ֆինանսական հոսքերի կառավարման և տնօրինման համար:

2014թ.-ին ՎՊՀ-ի բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն հետևյալ բաշխվածությունը. Ուսման վճարները կազմում են ՎՊՀ-ի բյուջեի մուտքային մասի գերակշիռ զանգվածը՝ 76.5% -ը, պետական ֆինանսավորումը՝ 17.5%, այլ եկամուտները՝ 6%: ՎՊՀ-ի բյուջեի այլ եկամուտները կուտակվում են շնորհներից, ընդունելության հայտերի համար դիմորդների կողմից մուծվող գումարներից, բուհում գործող Լեզուների ուսուցման կենտրոնի վարձավճարներից, կրթության որակի բարձրացման դասընթացների վճարներից, ՎՊՀ-ի ուսումնամարզաառողջարանային հանգրվանում կազմակերպվող ամառային ճամբարի վճարներից և վճարովի այլ ծառայություններից (պատճենահանում, տարածքի վարձակալություն, բանկոմատի շահագործում և այլն): Պետական ֆինանսավորման կողմից տրամադրվող միջոցների տնօրինման ու ծախսման արդյունավետությունը մշտապես ստուգվում է համապատասխան կառույցների կողմից: Բուհում գործող դրամաշնորհային ծրագրերի միջոցների կիրառման արդյունավետությունը մշտադիտարկվում է համապատասխան կառույցների ու կոորդինացնող կազմակերպությունների կողմից:

*Միտևա 7-1 ՎՊՀ եկամուտներն ըստ աղբյուրների 2014թ.*



Վերջին տարիների բյուջեի ֆինանսական վերլուծությունները վկայում են, որ տարեցտարի

ՎՊՀ-ի ֆինանսական մուտքերը սկսել են աստիճանաբար նվազել. դա պայմանավորված է նախ և առաջ դիմորդների թվաքանակի նվազմամբ: Մակայն սրան գուզընթաց ավելացել են ծախսերը, ինչը բացատրվում է աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների, ձեռք բերվող ռեսուրսների և ուսումնական միջավայրի շարունակական բարելավման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

**Աղյուսակ 7-1 ՎՊՀ բյուջեի եկամուտներն ըսկ աղբյուրների 2011-2014թթ (հազ. դրամ)**

Եկամուտներ	Տարիներ			
	2011	2012	2013	2014
Ուսման վճարներ	645593.7	634602.7	664963.1	577715.8
Պետական ֆինանսավորում	156806.7	131732.4	124107	132478.2
Այլ եկամուտներ	21963.5	22160	24268.3	46512.4
Հենակետային վարժարան	48763.1	61301.5	65040.2	72889.4
Քոլեջ	975	3050	6042.3	9447.8
Ընդամենը տարեկան եկամուտ	874102	852846.6	884420.9	839043.6

Ինչպես երևում է՝ ներկայացված աղյուսակում վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները 2011թ.-ի համեմատ 2014-ին նվազել են 11%-ով: Աղյուսակ 7-1-ում բերված տվյալները վկայում են, որ ՎՊՀ-ի եկամուտները մեծապես կախված են ուսման վարձավճարներից, հետևաբար ՎՊՀ-ն եկամուտների բազմազանեցման կարիք ունի: Այդ նպատակի իրականացման համար համալսարանում աշխատանքներ են տարվում մատուցված ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման, ՎՊՀ-ի ուսումնական ստորաբաժանումների սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին ԲՈՒՀ-ի մասնակցությունն ակտիվացնելու և այլ ուղղություններով:


ՎՊՀ-ի կարևորագույն ռազմավարական նպատակն է որակյալ կրթության ապահովումը, որի իրականացմանն են ուղղվում կուտակվող ֆինանսական միջոցների ավելի քան 2/3-ը:

**Միտնա 7-2. ՎՊՀ ծախսերն ըստ ուղղությունների 2014թ.**

**Այլ ծախսեր**

**Ուսումնական և ուսումնաօժանդակ**

**ծախսեր**



**Աղյուսակ 7-2. Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հարաբերակցությունը**

**տարեկան ընդհանուր ծախսերի համեմատությամբ**

Ծախսեր Տարիներ	2011	2012	2013	2014
Ընդհանուր տարեկան ծախսեր	848911.2	817814.2	884420.9	839043.6
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր	777209.6	731302.7	828702.3	757656.3
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհ. Ծավալում (%)	91.5	89.5	93.7	90.3
Ուսանողի թիվ	4224	3374	3059	2826
Ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի մեծությունը	183.9	216.7	229.4	228.9

Ֆինանսական միջոցների սղության պատճառով ինստիտուտը չի կարողանում իր միջոցներից էական հատկացումներ կատարել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ավելացման համար և, հետևաբար, ֆինանսական միջոցների գերակշիռ մասն ուղղվում է ուսումնական գործընթացի և դրա ռեսուրսների կազմակերպմանն ու ապահովվածությունը:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

**Հիմքեր՝**

Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները

Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը

Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգը

Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմներին (աուդիտներ, հաշվետվություններ)

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների և գլխավոր հաշվապահի կողմից՝ հիմքում ունենալով հաշվապահության և ուսումնական մասի կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը և ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը: Բյուջեի նախագիծը քննարկվում է ՎՊՀ-ի ֆինանսատնտեսական հանձնաժողովի նիստում և հավանության արժանանալու դեպքում ներկայացվում է ՎՊՀ-ի կառավարման խորհրդի հաստատմանը:

ՎՊՀ-ում եկամուտների կենտրոնացումից հետո դրանք բաշխվում են ըստ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքների քանակի: Դասախոսի աշխատավարձի չափը որոշվում է համաձայն հաստիքի չափի, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացվում է դասախոսների հաջորդ տարվա ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը:

Ռեկտորների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը ՎՊՀ-ի գնումների համակարգման բաժնի կողմից:

ՎՊՀ-ում ֆինանսական ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը մշտապես գտնվում է ռեկտորատի և ստորաբաժանումների ղեկավարությունների ուշադրության կենտրոնում:

ՎՊՀ –ի գործունեության համար ոչ բավարար կարելի է համարել այն հանգամանքը, որ չի կատարվում արտաքին աուդիտ և համապատասխան հանձնաժողովների կողմից չեն կատարվում եռամսյակային վերլուծություններ՝ բյուջեի մուտքերի ու ելքերի վերաբերյալ: Այս պահին ձեռնարկվում են միջոցներ հաստիքների, աշխատաժամանակի կրճատման համար, ինչը նպատակ ունի խնայել ֆինանսական միջոցները և ուղղել դրանք կրթության որակի բարելավմանը:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Պ.** ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ռեկտորների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը

Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմները

<http://vsu.am/index.php/hy/karucvacq-menu/vpmi-xorhur/2013-08-16-19-38-47/rectorat/gnumneri-hamakargman-bajin-menu>

*Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կատարվում է բուհի առանձին ստորաբաժանումների, վարչական կազմի կողմից սեփական կարիքների բացահայտման հիման վրա: Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջի համաձայն՝ ՎՊՀ –ն նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջնող ռեսուրսները՝ դրանց

գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի իրականացնելու համար:

Նախապես բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հայտեր: Դրանք գնումների պատասխանատու ստորաբաժանման մասնագետը խմբավորում է ըստ ապրանքատեսակների, ապա գնման համար նախատեսված միջոցների առկայության սահմաններում որոշվում են գնման ենթակա ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալները: Գնումը իրականացվում է ըստ օրենքի՝ սահմանված ժամկետներում՝ ապահովելով բոլոր անհրաժեշտ ապրանքատեսակների ձեռքբերումը:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:**

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգերը  
Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները և /կամ համակարգը  
Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար  
Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները  
<http://vsu.am/karg/gorcavarutyun.pdf>

*Վելուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ի համար տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության բարելավումը կարևոր խնդիր է: http:

Ներկայումս տեղեկատվությունը և փաստաթղթաշրջանառությունն իրականացվում են կայք էջով, ներքին ցանցով. վերջինով կարգավորվում է վարչական և ուսումնական ստորաբաժանումների աշխատանքի համակարգումը: Ցանցը հնարավորություն է տալիս ամբողջական տեղեկություն ստանալ ուսանողների առաջադիմության, ուսումնական պլանների, աշխատանքային պլանների, զեղչերի, կրթաթոշակների, փոխատեղման վերաբերյալ. ցանցում տեղադրված են նաև դասընթացների դասախոսական տեքստերը, ԱՈՒՄՓ-ները, ամբիոններին բաշխվող ժամաքանակը:

Փաստաթղթաշրջանառությունը կատարվում է գործավարության կարգով և «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի կանոնակարգով: Վերջինս կարգավորում է ստացված թղթակցության ընդունումը, գրանցումն ու շարժը, դիմումների և գրությունների քննարկման ժամկետների պահպանումը, ելից թղթակցության ձևակերպումը, փաստաթղթերի պահպանման կարգը: Գործավարության կարգով հստակեցված են նաև կազմակերպության իրավական ակտերի ձևակերպումը, քաղաքացիների դիմումների, առաջարկությունների և բողոքների քննարկումը և դրանց ընթացք տալու գործընթացը:

Ներքին ցանցը բարելավման կարիք ունի և՛ ծավալի, և՛ որակի, և՛ հզորության առումներով. սերվերի հզորությունն այսօր բավարար չէ:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:**

Հիմքեր՝ Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված

ծառայությունների ենթակառուցվածքները  
Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը  
Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումը վերջին 5 տարվա համար  
Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմը և դրա անդամների աշխատանքային նկարագրերը  
Մատուցվող ծառայությունների արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ

*Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը, հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:*

*Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Առողջապահական և անվտանգության, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը ՎՊՀ-ի ռազմավարական ուղղություններից է [VII7.1.docx](#), [VII7.2.docx](#): ՎՊՀ-ն ունի բուժկետ, որի միջոցով իրականացնում է կոլեկտիվի անդամներին ցույց տրվող առաջին բուժօգնությունը (աշխատում է 1 բուժքույր): Բոլոր առաջին կուրսեցիներն անցնում են պարտադիր բուժզննում, 2013թ.-ից այն կիրառվում է նաև ողջ աշխատակազմի համար: Յուրաքանչյուր բյուջետային տարի առանձին տողով ֆինանսական միջոցներ են տրամադրվում և՛ բուժկետը առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովելու և՛ բուժզննումները կազմակերպելու համար:

«ՖԴնԱԻՀ» ամբիոնի հիմնական խնդիրներից է կոլեկտիվի առողջության և անվտանգության ապահովումը: Մարզադահլիճի ձեռք բերումը մեծապես կնպաստի խնդրի բարելավմանը:

Ամբիոնի աշխատակիցները հասարակական կարգով պարապում են տարբեր մարզաձևերից խմբեր, ինչի արդյունքում հանրապետական ուսանողական մրցումների ժամանակ մի շարք մարզաձևերից (սեղանի թենիս, աթլետիկա և կրոսավազք, ձեռքի գնդակ, ֆուտզալ, վոլեյբոլ) գրավում են մրցանակային տեղեր:

Ամբիոնին հատկացվում է բուժական խմբերի համար ժամաքանակ, յուրաքանչյուր տարի բուժզննման արդյունքում ձևավորվում են 5-7 խմբեր:

Վերը նշված աշխատանքները, ռազմավարական խնդիրները լուծվում են ինչպես վերոնշյալ ամբիոնների, այնպես էլ մարզառազմահայրենասիրական դաստիարակության կենտրոնի միջոցով. աշխատանքների մեջ ներգրավված են 22 դասախոսներ և 5 աշխատակիցներ:

Բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում պարտադիր դասընթաց է «Քաղպաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», իսկ կամրնտրական են «Բժշկագիտություն և առողջության պահպանում», «Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն» դասընթացները (վերջին երկուսից մեկը պարտադիր ուսումնասիրվում է): Համապատասխան ամբիոնների կողմից յուրաքանչյուր տարի ուսանողների համար

կազմակերպում են դասախոսություններ, լրացուցիչ պարապմունքներ:

ՎՊՀ-ի տարածքում ծխելն արգելվում է:

Արտակարգ իրավիճակների Լոռու մարզի հատուկ ջոկատի հետ համատեղ ՎՊՀ-ի շտաբը տարեկան 2 անգամ անցկացնում են միջոցառումներ թե՛ փրկարարական տարբեր տիպի տարհանումների, թե՛ հրդեհի և արտակարգ վիճակի տագնապների առկայության դեպքում:

Ամեն տարի զինակոչային տարիքի երիտասարդների համար կազմակերպվում են գարնանային և աշնանային զինակոչային միջոցառումներ, այցելության Լոռու մարզի հատուկ գունդ, ծանոթություն ռազմատեխնիկայի հետ, սպայական անձնակազմի հետ և կրոսային պարապմունքներ:

Յուրաքանչյուր տարի ուսանողության, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի համար անցկացվում են հրաձգային մրցումներ:

ՎՊՀ-ն իր ունեցած շենքային պայմանների պատճառով դեռևս չի կարողանում հիմնարար քայլեր ձեռնարկել աշխատակիցների առողջության պահպանման համար, սակայն օգտագործում է ունեցած հնարավորությունները:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատակիցների սոցիալական քաղաքականությանն ուղղված աշխատանքները մշտապես գտնվել են ռեկտորատի և արհեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում՝ կարևորելով աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման և սոցիալական այլ խնդիրների լուծմանն ուղղված խմբագրերի իրականացումը:

Մասնավորապես 2010-2014թթ. ընթացքում ձեռք են բերվել 49 առողջարանային ուղեգրեր, որից օգտվել են համալսարանի թվով 82 աշխատակից :

Այժմ հնարավորություններ են փնտրվում 2015թ. ևս ուղեգրեր տրամադրելու համար: Առողջարանային ուղեգրերի ձեռքբերման համար փոխանցվել է ընդհանուր 3.120.000 (երեք միլիոն հարյուր քսան հազար) դրամ:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈԻՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր՝	Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը) Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները
---------	---

*Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը կատարվում է հիմնականում տարբեր սոցիոլոգիական հարցումների միջոցով. մասնավորապես «ՎՊՀ-ի կրթության որակի գնահատման» սոցիոլոգիական հարցման հարցաթերթերի 62 հարցերից 18-ում գնահատվել են վերոնշյալ հարցերը (Տե՛ս հարցաթերթիկը): Ստացված պատասխանների մեջ ամենացածրը (53%) 26-րդ հարցի գնահատականն է (ըստ մասնագիտացումների անհրաժեշտ կաբինետների

հազեցվածություն), 18-ը (գրադարանի հազեցվածությունն անհրաժեշտ գրականությամբ), ամենաբարձրը՝ 67 (22. Համակարգչային կենտրոնի որակական ներմուծված ծրագրեր):

Ուսանողների կողմից գնահատում կատարվել է նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիալական թերթիկների «Առաջարկություններ» բաժնում:

Դասավանդողների շրջանում գնահատում չի կատարվել. նման գնահատում նախատեսվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

*Չափանիշ 7-ի համար ներկայացնել վերջին 5 տարվա SWOT վերլուծություն:*

<b>Ուժեղ կողմեր</b>	<b>Հնարավորություններ</b>
ՎՊՀ-ին ունի ուսումնական ռեսուրսներ, որոնք բավարարում են իրականացվող ԿԾ-երի նվազագույն պահանջները:	ՎՊՀ-ին ունի հնարավորություն վերան ԿԾ-երը ռեսուրսներով ապահով մեխանիզմները: Մշակել ԿԾ-երի երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն
<b>Թույլ կողմեր</b>	<b>Վտանգներ</b>
Ֆինանսական ռեսուրսների հավաքագրման անկատարությունը: Ֆինանսների նվազեցումը: Ալտերնատիվ ֆինանսական մուտքերը ապահովող քաղաքականության բացակայություն: Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների գնահատման գործող մեխանիզմների անկատարությունը:	Ուսանողների թվի նվազում, պայմանավորված սոցիալական խնդիրներով: Ժամանակի պահանջներին համահունչ կրթական ծառայությունների մատուցման սակավ հնարավորության:

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման և պլանավորվող ուղիները:*

Հնարավորություններ փնտրել այլընտրանքային աղբյուրներից ֆինանսական միջոցների ձեռքբերման՝ գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման և արդյունավետության բարձրացման, լաբորատորիաները տեխնիկական միջոցներով, սարքերով, սարքավորումներով հազեցման, ուսումնական մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների վերանորոգման, կահավորման, բարելավման, արդիական տեխնիկայով ապահովման և ժամանակակից չափանիշներով մարզադահլիճի կառուցման ու կահավորման համար:

ՄՈՒՀ-ի եկամուտների բազմազանեցման նպատակով կատարվող աշխատանքները ընդլայնել մատուցվող ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման, վճարովի ծառայությունների տեսականու և ծավալների մեծացման, եկամտաբերության բարձրացման, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտում միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության ավելացման ուղղություններով:

Կատարել ֆինանսական աուդիտ և վերլուծություններ բյուջեի մուտքերի ու ելքերի վերաբերյալ, որը հնարավորություն կտա ֆինանսական միջոցները ռացիոնալ բաշխել և ավելի շատ հատկացումներ անել կրթության որակի ապահովմանը ու զարգացմանը:

ՄՈՒՀ-ի փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության գործընթացների արդյունավետ կազմակերպման համար բարելավել ներքին ցանցը և ավելի բարձրացնել սերվերի հզորությունը:

Ավարտել համալսարանի էլեկտրոնային գրադարանի ստեղծման աշխատանքները:

Գրադարանի ընթերցասրահում տերմինալ- սերվերային համակարգի հենքի վրա կազմակերպել էլեկտոնային գրադարան՝ հնարավոր թվով աշխատանքային տեղերով:

Բարձրացնել ուսումնագիտական ստորաբաժանումների համագործակցության մակարդակը համալսարանի գրադարանի, ուսումնական և գիտական կաբինետների, լաբորատորիաների հետ: Ընդլայնել ուսանողների և դասախոսների ներգրավածությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման, ձեռքբերման և օգտագործման աշխատանքներում:

### VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

**ՉԱՓԱՆԻՇ:** *ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:*

Հասարակական պատասխանատվության ոլորտում ՎՊՀ քաղաքականության հիմքում ընկած են բուհում իրականացվող կրթության և այլ գործընթացների վերաբերյալ հանրությանը հնարավորինս սպառիչ և համակողմանի տեղեկատվության տրամադրումը, այդ գործընթացների թափանցիկության ապահովումը, ինչպես նաև հասարակության հետ կապի միջոցով հանրային նոր կրթական պահանջների որոշարկումը և ամրագրումը՝ կրթական գործընթացներն առավել նպատակային դարձնելու միտումով: Հասարակական պատասխանատվության բարձրացման ճանապարհով բուհը ձգտում է ձեռքագատվել ինքնաբավության վնասակար վիճակից, նոր ուղիներ փնտրել և գտնել օրավուր զարգացող և փոփոխվող համաշխարհային կրթական իրականության մեջ: Այս առումով ՎՊՀ-ն հավակնում է դառնալ ՀՀ բուհական համակարգի առաջատարներից մեկը:

<b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:	
Հիմքեր՝	<p>Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները</p> <p>Հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ և այլն)</p> <p>Հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումները</p>

Հասարակության զարգացմանը միտված ՄՈՒՀ-ի իրականացրած այլ աշխատանքները

*Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում («Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՎՊՀ կանոնադրություն, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ զարգացման հայեցակարգ 2014-2018), ինչպես նաև մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում:

Ըստ սահմանված կարգի՝ ռեկտորը յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կառավարման բարձրագույն մարմնին՝ ՎՊՀ խորհրդին: Հաշվետվությունը ներառում է գործունեության բոլոր ոլորտները՝ ներքին իրավական դաշտ, տարբեր կառուցվածքային փոփոխություններ, կրթական գործընթաց, ուսանողական համակազմ, առաջադիմություն, պետական որակավորում, պրոֆեսորադասախոսական աշխատակազմ, բարեփոխումներ և կրթության որակի ապահովում, գիտահետազոտական աշխատանքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտաքին քաղաքականություն, իրազեկման աշխատանքներ, սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն <http://www.vsu.am/karg/mshakuyt-1.pdf>

Խորհրդի նիստից 10 օր առաջ հաշվետվությունը ամբողջությամբ (գրքի տեսքով) և խտասալիկով ներկայացվում է խորհրդի անդամներին, զեկուցումից հետո տեղադրվում է բուհի պաշտոնական կայքէջում:

Խորհրդի նիստին ներկայացվում են նաև նախորդ ֆինանսական տարվա բյուջեի կատարման վերլուծությունը և «Կոռուպցիոն երևույթների պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» կատարողականը <http://www.justice.am/legal/view/article/53>

Ռեկտորը հաշվետվությունը ներկայացնում է նաև կոլեկտիվի ժողովին. վերջինիս հրավիրվում են ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումները և ուսանողությունը:

Բուհի ներքին հաշվետվողականությունը ժամանակային երկու կտրվածքով է կատարվում. ստորաբաժանումների (ոչ ուսումնագիտական) ղեկավարները ներկայացնում են օրացուցային տարվա վերջում, ուսումնագիտական ստորաբաժանումները և դասախոսները՝ ուսումնական տարվա վերջում. ֆակուլտետների ղեկանները ներկայացնում են ուստարվա վերջում և օրացուցային տարվա վերջում: Ուսումնագիտական և վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունները տրվում են ըստ բուհի կառուցվածքի: Սակայն վերջինների համար հստակ ժամանակացույց և մեխանիզմ մշակված չէ:

Գիտական խորհրդին և ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներին ամենամյա հաշվետվություններ են ներկայացնում ղեկանները: Ամբիոնների վարիչները գիտական խորհրդին հաշվետվություն են ներկայացնում՝ համաձայն գիտական խորհրդի նիստերի աշխատանքային պլանի: Արտալսարանական աշխատանքների հաշվետվությունները ներկայացվում են տեսանյութերով:

Դեկանները և ամբիոնի վարիչները հաշվետվությունները ներկայացնում են ըստ մշակված փաթեթի: Վերջիններս տեղեկատվական են (փաստական), ինչպես նաև վերլուծական: Դեկանների հաշվետվությունները ներկայացվում են ֆակուլտետի կոլեկտիվի տարեվերջյան հաշվետու ընդլայնված նիստի ընթացքում:

Համալսարանի խորհրդի, գիտխորհրդի, ֆակուլտետային գիտաամբթողական խորհուրդների մեջ ընդգրկված են պետական լիազոր մարմնի, կառավարության, մարզային կրթական կառույցների ներկայացուցիչներ և ուսանողներ այս իրողությունը ապահովում է և՛ ներքին, և՛ արտաքին հաշվետվողականություն: <http://www.vsu.am/karg/marz%20dast-1.pdf>

Պետության և հասարակության առջև (վերջինս՝ կայքով) ներկայացվում են սահմանված կարգով պահանջվող բոլոր հաշվետվությունները (ուսանողի առաջադիմության ձև 1, պետական քննությունների և ավարտական որակավորման աշխատանքների /բակալավրի համար/ և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների, ձև 3-ԳՄ, ուսանողների շարժ): Դրանք ներկայացվում են ՀՀ ԿԳ նախարարություն, վիճակագրական վարչություն. 2013 թ.-ից ներդրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ՄԿԿՏՀ), սակայն դեռևս (ոչ մեր պատճառով) այն գործածության մեջ չի դրվել:

Պահպանված է նաև պետեկամուտների կոմիտեին ներկայացվող հաշվետվությունների կարգը: Կայքում տեղադրված են ամսագրերի («Բանբեր», ապա՝ գիտական հոդվածների ժողովածուներ) 30-ից ավելի գրքերը: Տարբեր տիպի տեղեկատվություն է տրամադրվում բուհի գիտական ներուժի, գիտնականների ուսումնասիրությունների մասին:

Պետական որակավորման հանձնաժողովների մեջ 50%-ը շահակիցներ են:

Դեռևս կարգավորման կարիք ունեն մի շարք ստորաբաժանումների հաշվետվությունների ներկայացման կարգերը, 2013 թ. հունվար ամսից փորձնական կերպով /բանավոր հանձնարարականի ձևով/ ներքին հաշվետվողականություն է սահմանվել ուսումնամթողական վարչության աշխատակիցների համար (15 օրը մեկ):

Ներկայացված հաշվետվությունները ուսումնամթողական վարչության վարիչի կողմից վերլուծվում են, առանձին դեպքերում մշակվում են մեթոդական երաշխավորություններ:

Հաշվետվողականությունն ապահովվում է նաև բուհի պաշտոնական կայքէջով (տե՛ս «Նորություններ» բաժինը). ներկայացվում են տվյալ ուսումնական տարվա ընդունելության (առկա և հեռակա ուսուցման համակարգ) կրթական ծրագրերը, ընդունելության տեղերը, վճարի չափը, շնորհվող որակավորումները, ընդունելության քննությունները: 2014թ.-ից շնորհվող որակավորումներին զուգընթաց ներկայացվում են նաև մասնագիտական կրթական ծրագրերի վերջարդյունքները և աշխատանքային գործունեության ոլորտները:

Կայքում ներկայացվում են նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ըստ ամբիոնների: Սոցիալական գործընկերության առաջնայնության և կարևորման արգասիքն են եղել հատկապես մարզի սոցիալական աշխատանքների պատասխանատուների հետ հանդիպումները, կլոր սեղանները, «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրի քննարկումները (հավելված 8-8): Վերջին երեք տարիների ընթացքում կազմակերպվել են 5 հանդիպում-քննարկումներ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր	<p>ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները</p> <p>Հաշվետվությունները, զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում</p>
--------	---

*Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ ԻԶՀ-ի 4-րդ կետի 5-րդ ենթակետը, ռազմավարության իրականացման պլանի 5-րդ ենթակետը բավականին հստակ և իրատեսորեն սահմանում են տեղեկատվական գործընթացի (մասնավորապես կրթության գործընթացի) կատարելագործման ուղղությունները:

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն է տրամադրվում «Վանաձորի պետական համալսարան» /նախկինում՝ «Մանկավարժ»/ երկշաբաթաթերթի, տեղական «Լոռի ԹՎ» հեռուստաալիքի «Բանբեր ՎՊՀ» հաղորդումների միջոցով: 2013 թ.-ից «Վանաձորի պետական համալսարան» թերթն առաքվում է պետական բուհեր, Վանաձորի և տարածաշրջանի դպրոցներ:

2006-ին ստեղծվել է լրատվության և տպագրության բաժինը, որն ապահովում է շահակիցներին և լայն հասարակությանը տեղեկատվության ապահովումը:

Համացանցի պաշտոնական կայքէջում տեղադրվում են համալսարանի մշակութային, գիտագործնական գործունեությունը լուսաբանող նյութեր (հավելված 8-9):

Ռեկտորը ժամանակային տարբեր կտրվածքներով հանդիպում է լրատվամիջոցների, հատկապես տեղական հեռուստաալիքների լրագրողների հետ: ՄՈՒՀ-ի բոլոր միջոցառումներին հրավիրվում են ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Պաշտոնական կայքէջում տեղադրված են գործող կանոնադրությունները, կանոնակարգերը (104), 15 մասնագիտության տեղեկագրքերը:

Գովազդի, ինչպես նաև տեղեկատվության նպատակով ստեղծվել են մի շարք հոլովակներ, բուկլետներ (նաև օտարալեզու), սակայն այս ուղղությամբ աշխատանքները բավարար չեն կարող համարվել: Անընդհատ և արագ զարգացող հաղորդակցական հնարավորությունների ընդլայնմամբ պայմանավորված՝ պարբերական վերակառուցման կարիք ունի համացանցային էջը: Վերջինս ունի «Նորություններ», «Հարց-պատասխան», «Հետադարձ կապ», «Կարծիքներ», «Հեռավար կրթություն», «Հայտարարություններ», «Աշխատատեղեր», «Ծրագրեր», «Դիմորդ» էջերը (տե՛ս [www.vspi.am](http://www.vspi.am) կայքը): «Կարծիք» էջը ստեղծվել էր հատկապես հետադարձ կապի ապահովման թափանցիկության կարգավորման նպատակով, սակայն դեռևս նպատակին չի ծառայում: 2012-ից գործում է ռադիոհանգույցը, որը ևս տեղեկատվության տրամադրման գործառույթ ունի:

«Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկի “Առաջարկություններ” բաժինը հետադարձ կապի և վերլուծության հնարավորություն է տալիս: Սակայն այս հարցման արդյունավետությունը բավականին ցածր է, անհրաժեշտ է բարելավել այն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր՝	<p>Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները</p> <p>Ամփոփված արդյունքները և վերլուծությունները</p>
---------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: *Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ի համար հասարակության հետ կապերի զարգացումը ռազմավարական է: Կառուցվածքային վերակառուցման արդյունքում ստեղծվել է համագործակցության և կապերի բաժինը:

Այդ կապն ապահովվում է վեբ-կայքի, «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի, զանազան տեղեկատվական նյութերի, լրատվամիջոցների հետ համագործակցության միջոցով, որոնք ապահովում են մշտական առնչություններ հանրության հետ:

Համացանցային ռեսուրսների անընդհատ զարգացումը լուրջ խթան է ՎՊՀ գործունեության և ընթացակարգերի թափանցիկության ու հասանելիության ապահովման համար: Տարածաշրջանում ՎՊՀ-ն հատկապես նոր՝ համալսարանի կարգավիճակով հանրային հետաքրքրություն ներկայացնող գիտակրթական կառույց է, ուստի պատահական չէ, որ այստեղ տեղի ունեցող հանրային նշանակության միջոցառումները լուսաբանվում են մարզային, նաև հանրապետական լրատվամիջոցների կողմից: Դրանք լուսաբանվում են նաև ՎՊՀ պաշտոնական կայքի <http://www.vsu.am> «Նորություններ» բաժնում: Տարեկան հայոց լեզվով ներկայացվում է շուրջ 300 տեղեկատվական բնույթի նյութ: Պատշաճ ուշադրություն է դարձվում նյութերի լեզվական որակին:

Համացանցային ռեսուրսների հնարավորինս արդյունավետ օգտագործման առումով, սակայն, տարիներ ի վեր չի լուծվում տեղեկատվական նյութերն այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն) ներկայացնելու խնդիրը, ինչը սահմանափակում է պաշտոնական կայքից օգտվողների քանակը՝ դարձնելով այն սոսկ տեղական օգտագործման համացանցային ռեսուրս: Անցած 5 տարիների ընթացքում անշեղորեն աճել է բուհի պաշտոնական կայքէջի այցելուների թիվը: Կտրուկ աճ է գրանցվել 2014 թվականին, երբ այցելությունների թիվն արդեն տասն անգամ գերազանցում էր նախորդ տարիների ցուցանիշները: Հատկապես վերջին երկու տարիներին տեղեկատվական բնույթի և այլ նյութեր մեկ օրում երբեմն ապահովում են 300-ից մինչև 1000 դիտում, որն ավելին է, քան հանրապետական շատ համացանցային պարբերականների դիտումները:

Բաժնի կողմից մեծ ուշադրություն է դարձվում համացանցային սոցիալական կայքերի օգտագործմանը բուհի նպատակների համար: Մասնավորապես ակտիվ գործում են Facebook-յան մի քանի խմբեր: Համալսարանի բոլոր ֆակուլտետները, մասնագիտություններն ունեն իրենց FB խմբերը, դրանց օգտատերերի թիվը գերազանցում է 3000-ը: Ստեղծվել է նաև

դպրոցների հետ ակտիվորեն համագործակցող «Լոռու դպրոցներ» խումբը, որտեղ ընդգրկված կրթօջախներին արագորեն հասանելի է դառնում համալսարանի գործունեությանը և նորություններին վերաբերող տեղեկատվությունը <https://www.facebook.com/vanadzor.vph>  
<https://www.facebook.com/groups/285884468264060/>

Բնականաբար, այս ամենի արդյունքում ոչ միայն ապահովվում է բուհի գործունեության թափանցիկությունը, այլև որոշակի չափով լուծվում են գովազդի խնդիրներ:

Համալսարանն իր համացանցային տիրույթն ունի նաև Twitter-ում <https://twitter.com/vsu2015>, ինչպես նաև Youtube-ում <https://www.youtube.com/user/VanPetManInst?feature=mhee> որտեղ տեղեկատվությունը նաև տեսանյութերի եղանակով է հասանելի դառնում օգտատերերին:

Բարելավման կարիք ունի բուհ-հասարակություն կապը՝ հատկապես վերջինիս ակնկալիքների բավարարման առումով: Շահառուները, տվյալ դեպքում՝ հասարակությունը, կարիք ունի ոչ միայն գովազդային կամ տեղեկատվական, այլ նաև (առավելապես) վերլուծական-ինքնաքննադատական նյութերի, որոնք կփաստեին, որ բուհը գնում է ինքնակատարելագործման ճանապարհով՝ չերկնչելով այդ ճանապարհին եղած թերություններն ու բացթողումները մատնանշելուց: Այս առումով հասարակության ակնկալիքը ուսումնասիրելու լուրջ անհրաժեշտություն կա, որի համար, սակայն, պակասում է նախաձեռնողականությունը և հատկապես համապատասխան մասնագետների բացակայությունը:

Բուհի ուսումնագիտական գործունեության լուսաբանման թերի կողմերից է քննադատական նյութերի անհամեմատ փոքր թիվը. գերակշռում են զուտ տեղեկատվական նյութերը, որոնք թեև ներկայացնում են բուհի ներքին (ուսանողական, գիտական, մարզական) կյանքի նաև թերի կողմերը, այնուամենայնիվ ինքնաբավության որոշակի միտում ունեն, ինչը մտահոգիչ է: Սակավ են համալսարանի տարբեր ստորաբաժանումներից ստացվող ինքնավերլուծական, ինքնաքննադատական նյութերը:

Համալսարանն առաջնորդվում է իր գործունեության վերաբերյալ հանրությանը մշտապես իրազեկ և տեղեկացված պահելու քաղաքականությամբ, ինչի արդյունքում ավելի քան 5 տարի պարբերաբար իրականացվում է լրատվամիջոցների, մասնավորապես մարզային հեռուստաընկերությունների հետ նպատակասլաց համագործակցության քաղաքականություն: Համալսարանի ղեկավար կազմը մասնակցում է հեռուստատեսային կլոր սեղանների, բանավեճ-քննարկումների, մամլո ասուլիսների:

Համացանցային կայքում առկա վերոնշյալ էջերը հնարավորություն են տալիս գրավոր հարց ուղղելու ուղիղ ռեկտորին, պրոռեկտորներին, ուսումնամեթոդական վարչությանը և այլ ստորաբաժանումների: Պետք է նշել, որ կապի այս միջոցից դեռևս շատերը չեն օգտվում, սակայն նկատելի է որոշակի առաջընթաց. տարեցտարի մեծանում է հարցումների թիվը, իսկ այդ հարցերին երկօրյա ժամկետում պատասխաններ են տրվում:

Ընդունելության օրեր և ժամեր են սահմանված ռեկտորի, պրոռեկտորների, ղեկանների համար, սակայն արձանագրման, հերթագրման ընթացակարգ մշակված չէ:

Տեղեկատվության տրամադրման և հասարակության հետ կապի միջոց է նաև քաղաքացիների դիմումների ընդունումը և արձագանքումը: Դիմումները ընդունվում են ընդհանուր բաժնում և դրվում շրջանառության մեջ:

ՎՊՀ-ում դեռևս հասարակության հետ կապերի ձևավորման, հետադարձ կապի

ապահովման մեխանիզմները դանդաղ են զարգանում. նորաստեղծ կառույցը մշակում է համապատասխան ընթացակարգեր:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ** դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր՝	<p>Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները</p> <p>Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական գործառնությունների ներքին գնահատման գործընթացները և հիմքերը</p> <p><i>Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p>
---------	---

*Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:*

Հասարակությանը կրթական ծառայության մատուցումը, մակարդակի բարձրացումը, գիտական և մանկավարժական կադրերի պատրաստումը, կրթական գործունեության թափանցիկության ապահովումը կրթական գործընթացում գործատուների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածության ապահովության միջոցով ՎՊՀ-ի զարգացման նպատակներից և խնդիրներից են <http://www.vsu.am/karg/zarg.pdf>:

Ռազմավարական ուղղությունների մեջ նախատեսված է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Նշված նպատակների, խնդիրների և ուղղությունների առումով աշխատանքներ պատշաճ մակարդակով կատարվում են, սակայն գոհացուցիչ չեն մարզի սոցիալ-զարգացմանը ինտեգրման աշխատանքները: Թերևս պատճառը մարզի ղեկավարության, տնտեսության, մշակութային առանձին տնտեսավարողների հետ համագործակցության ծրագրեր չունենալն է:

Որոշակի ուշադրություն է դարձվում սոցիալ-դաստիարակչական գործունեությանը: Վերջին երկու տարիներին աշխուժացել և կանոնակարգվել են հատկապես մշակութային, ռազմահայրենասիրական, մարզական միջոցառումները. բազմաթիվ հանդիպումներ, բաց դասեր են կազմակերպվել արցախյան ազատամարտերի մասնակիցների հետ:

ՎՊՀ-ն սատարում է սոցիալապես անապահով խավին, կատարվում են ուսման վարձի զեղչեր <http://www.vsu.am/karg/qoleji%20sovoroxneri%20npast-NOR.pdf>

ՎՊՀ-ում ուսուցումը կազմակերպվում է բակալավրի, մագիստրոսի (բարձրագույն կրթության) կրթական ծրագրերով. բուհն իրավունք ունի հետբուհական մասնագիտական կրթության լրացուցիչ իրականացման: Ասպիրանտական ընդունելություն չի կատարվում /հիմնական պատճառներից մեկը կարգն է. վանաձորաբնակը դժվար է հաղթահարում օտար լեզվի (TOEFL) քննությունը/, սակայն մեծացել է հայցորդների թիվը. 2015 թ.-ին ստացվել է 9

դիմում:

Լեզուների ուսուցման կենտրոնը ծառայություն է մատուցում ուսանողությանը և հասարակությանը: Չնայած սահմանված գումարի աննշանությանը (ուսանողի համար ամիսը 3000 դրամ, քաղաքացու համար 8000դրամ) հասարակության կողմից այն դեռևս մեծ պահանջարկ չունի:

Պատճառներից մեկը վատ գովազդն է: Հարկ է նշել, որ գովազդի ուղղությամբ թերացումները մեծ չափով պայմանավորված են անհրաժեշտ մասնագետի բացակայությամբ: ՎՊՀ-ի ուսանողությանը մատուցում է հոգեբանական և իրավական խորհրդատվություն:

*Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Չափանիշ 8 -ի վերաբերյալ ներկայացնել վերջին 5 տարվա SWOT վերլուծությունը:*

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Պետական մարմիններին և հասարակությանը, արտաքին և ներքին շահակիցներին ներկայացվող հաշվետվողական համակարգի ստեղծումը:</li> <li>2. Հասարակության հետ կապերի բաժնի ստեղծումը:</li> <li>3. Վեբ-կայքի առկայությունը:</li> <li>4. Facebook սոցիալական ցանցում էջի ստեղծումը:</li> <li>5. Բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գոյությունը և որակյալ կրթության մատուցումը:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրների լուծմանը ինտեգրման պատրաստակամություն և ուժերի առկայություն:</li> </ol>
Թույլ կողմեր	Սպառնալիքներ
<ol style="list-style-type: none"> <li>1. Հաշվետվողականության համակարգի գործիքների ոչ լիարժեքություն:</li> <li>2. Մարզային կառույցների հետ ծրագրերի, համաձայնագրերի բացակայություն:</li> <li>3. Հետադարձ կապի հստակ մեխանիզմի բացակայություն:</li> <li>4. Հասարակության հետ կապն ապահովող բուհական ստորաբաժանման լրատվության և տպագրության բաժինը համապատասխան կադրերով լիարժեքորեն ապահովելու ճանապարհին խոչընդոտների առկայություն /կես դրույթով աշխատող կայքավար, թերթի պատասխանատու քարտուղար և այլք/:</li> <li>5. Պրոֆեսիոնալ գովազդի բացակայություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ժողովրդագրական իրավիճակ:</li> <li>2. Ֆինանսական միջոցների նվազում:</li> <li>3. Հասարակության հոգեբանության, գիտելիքի արժեքավորման մոտեցումների փոփոխություն:</li> </ol>

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

**ՎՊՀ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՔԱՅԼԵՐ**

				Ժամկետը				01.03.2015	25.12.2015
				I	II	III	IV	Առկա վիճակը	Բարելավմանն ուղղված քայլեր
1.	Լրատվության և տպագրության բաժինը անհրաժեշտ կադրերով և անհրաժեշտ դրույքաչափերով համալրում						v	Բաժնում կան կես դրույքով աշխատողներ /կայքավար, թերթի պատասխանատու ևն/	Կներդրվի ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում
2.	Գովազդի վերաբերյալ առանձին կարգի և ընթացակարգի մշակում և ներդրում						v	Կատարվում են աշխատանքներ նախագծի մշակման ուղղությամբ	Մինչև սեպտեմբեր ամիսը անհրաժեշտ կարգի ու ընթացակարգի ընդունում
3.	Համալսարանի կայքէջի գործունեության կարգի և ընթացակարգի մշակում և ներդրում				v			Կատարվում են աշխատանքներ նախագծի մշակման ուղղությամբ	Մինչև տարեվերջ անհրաժեշտ կարգի ու ընթացակարգի ընդունում
4.	ԶԼՄ-ների հետ համագործակցության վերաբերյալ առանձին կարգի մշակում				v			Կատարվում են աշխատանքներ նախագծի մշակման ուղղությամբ	Մինչև տարեվերջ անհրաժեշտ կարգի ու ընթացակարգի ընդունում
5.	Պաշտոնական կայքէջի այլալեզու տարբերակների գործարկում						v	Տարբերակները չեն գործում, լրացված են մասամբ	Կներդրվի ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԱՅՆԱՅՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման քաղաքականությունը բխում է Համալսարանի առաքելությունից և կանխորոշվում է հետևյալ գերակայություններով.

- Ինտեգրված Եվրոպական տարածքի ձևավորման գործընթացներում ակտիվ մասնակցություն
- Բուհի միջազգային կապերի ընդլայնում և բազմազանացում, տարածաշրջանային և միջազգային համալսարանական ցանցերի ստեղծումը
- Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ համագործակցության խթանում կրթական և գիտական ոլորտներում
- Բուհի միջազգային գործունեության տեղեկատվական ապահովում
- Դրամաշնորհային նախագծերի որոնում և մշակում, միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվական ծառայության բարելավում
- Արտասահմանյան երկրների առաջատար բուհերի հետ՝
  - Միջմասնագիտական ասպարեզներում համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի մշակում և իրականացում
  - Որակավորման աստիճանների համատեղ շնորհման գործընթացների ակտիվացում
- Նպաստավոր պայմանների ստեղծում հրավիրյալ օտարերկրյա դասախոսների և ուսանողների կարճաժամկետ և երկարաժամկետ այցելությունների համար
- Ուսումնամեթոդական միավորների, ամբիոնների և ֆակուլտետների, անհատ փորձագետների ակտիվ ներգրավում միջազգային գիտակրթական նախագծերում և դրամաշնորհային ծրագրերում (double և joint degree, staff and student mobility )

<p><b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:</p>	
Հիմքեր՝	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը  <a href="http://www.vsu.am/karg/krtakan%20barep%20bajin-11.pdf">http://www.vsu.am/karg/krtakan%20barep%20bajin-11.pdf</a></p>
	<p>Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները <a href="#">IX\9.2 (1).doc</a></p>
	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը (վերջին 3 տարվա համար)՝ <a href="#">IX\9.2 (2).doc</a></p>
	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար )<a href="#">IX\9.3..docx</a></p>
<p><i>Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p>	

ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանն ուղղված են ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից ընդունված հետևյալ փաստաթղթերը.

1. «Համալսարանի զարգացման հայեցակարգ 2010-15թթ»,
2. «Կանոնակարգ "[Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ](#)" պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական բարեփոխումների և կապերի բաժնի»
3. «[Կրթական բարեփոխումների և արտաքին կապերի բաժնի գործունեության հայեցակարգային դրույթները և հիմնական ուղղությունները](#)»:
4. «Հայեցակարգ միջազգային գործունեության և ռազմավարական համագործակցության զարգացման»
5. «Կանոնակարգ “Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ” ՊՈԱԿ-ի Համագործակցության և կապերի բաժնի»

6. Ամենամյա միջազգային գործունեության զարգացման ռազմավարություն  
Համաձայն «Համալսարանի զարգացման հայեցակարգ 2010-15թթ. »-ի` Համալսարանի միջազգային գործունեության կարևորագույն խնդիրներից մեկն ինտեգրումն է Եվրոպական ընդհանուր կրթական տարածքում, որը բխում է Բոլոնյան գործընթացի հիմնական դրույթներից: Այդ տեսակետից կարևորվում է այլ բուհերի հետ փորձի փոխանակումը` կրթական ծրագրերի կատարելագործման, դրանց բովանդակության արդիականացման, նորագույն կրթական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ` Համալսարանի կրթական ծառայությունների որակը և մակարդակը ժամանակակից աշխատաշուկային համապատասխանեցնելու, Եվրոպայի ընդհանուր կրթական տարածքում ընդգրկվելու նպատակով:

Համաձայն հայեցակարգային դրույթների` ՎՊՀ-ի արտաքին կապերի զարգացումն ուղղված է ոչ միայն դեպի արտերկիր, այլ նաև դեպի հանրապետության այլ բուհեր` նպատակ ունենալով բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող կրթական բարեփոխումներով թելադրված ընդհանուր մոտեցումների, անհրաժեշտ փաստաթղթերի մշակումը, գործառույթների իրականացումը: Այդ նպատակով Ինստիտուտը համագործակցում է հանրապետության այլ բուհերի հետ` բուհական կոնսորցիումի շրջանակներում:

Կապերի զարգացման կարևոր ուղղություն է նաև կապերի հաստատումը և զարգացումը ՀՀ-ում գործող ընկերությունների հետ` ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների արդյունավետությունը բարձրացնելու, ՎՊՀ-ի շրջանավարտների համար աշխատաշուկայի հնարավորություններից օգտվելու, գործատուների հետ հետադարձ կապերի ապահովման նպատակով: Այդ կազմակերպություններից են IREX-ը, Բաց հասարակության Համալսարանի աջակցության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (Սորոսի հիմնադրամ), Վիվա Սել ընկերությունը, Եվրոհանձնաժողովի կրթական, աուդիովիզուալ և մշակութային գործակալության (EACEA) հայաստանյան գրասենյակը:

Վերջինիս` բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող Տեմպուս և Էրազմուս Մոնդուս ծրագրերին մասնակցելը մեծ խթան է Համալսարանի արտաքին կապերի զարգացման համար:

Օտար լեզուների իմացությունը միջազգայնացման զարգացման կարևոր տարրերից է: Հաշվի առնելով այդ հանգամանքը` ՎՊՀ-ում կազմակերպվել է լեզուների ուսուցման կենտրոն, որտեղ դասավանդվում են օտար լեզուներ (անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն)` լեզուների իմացության իրազեկման համաեվրոպական համակարգի պահանջներին համապատասխանող ծրագրերով: Այդ դասընթացներին մասնակցում են դասախոսներ, ուսանողներ, վարչական աշխատողներ, մեր և այլ բուհերի շրջանավարտներ:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ միջազգայնացման գործընթացն ընդլայնելու, արդյունավետությունը բարձրացնելու համար խիստ անհրաժեշտ է մշակել այդ ուղղության հստակ ռազմավարություն, ընթացակարգեր և գործառույթներ, որոնց բացակայությունը խոչընդոտում է տվյալ ոլորտում կանոնակարգված աշխատանքի

կատարումը և արդյունքում՝ միջազգայնացման զարգացումը և խորացումը:

ՎՊՀ-ն կարևորում է համագործակցությունը Լոռու տարածաշրջանի դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ: Կրթական բարեփոխումների և արտաքին կապերի բաժնում 2010թ-ից կազմավորվել է բուհ-դպրոց կապերի ենթաբաժին, որը գործում է ըստ Համալսարանի գիտխորհրդի կողմից ընդունած Կարգի և տարեկան աշխատանքային պլանի: Ենթաբաժնի հիմնական նպատակը դպրոցականների ճիշտ մասնագիտական կողմնորոշումն է, ապագա մասնագիտության ընտրության նկատմամբ նրանց գիտակցված մոտեցման ձևավորումը:

Այդ նպատակին են ծառայում ենթաբաժնի և ամբիոնների աշխատակիցների կողմից անցկացվող միջոցառումները՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով հարցումների, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ բաց դասերի անցկացում և այլն:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա զարնանը ՎՊՀ-ում կազմակերպվում և անցկացվում է դպրոցականների առարկայական օլիմպիադա բարձր դասարանների աշակերտների համար, ինչը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին ստուգելու իրենց գիտելիքները, պատրաստվելու դպրոցի ավարտական և բուհի, ՄՄՈՒՀ-ի ընդունելության քննություններին: Օլիմպիադաներում առաջին տեղը գրաված և հետագայում ՎՊՀ ընդունված աշակերտների համար նախատեսված է արտոնություն՝ ուսման վճարի 20% -ի չափով:

Ենթաբաժինը զբաղվում է նաև անապահով ընտանիքների երեխաների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպմամբ: Այդ դասընթացները վարում են ամբիոնների առաջատար մասնագետները, լավագույն մագիստրանտները:

Ենթաբաժնի աշխատանքների մասն են կազմում մշակութային միջոցառումները՝ տարբեր մրցույթների անցկացման միջոցով, որոնց նպատակն է՝ նպաստել վաղվա ուսանողի, քաղաքացու կայացմանը:

Ամբիոններն աշխատում են ներգրավել քաղաքի և հարակից գյուղերի ուսուցիչներին ներինստիտուտական, ներամբիոնային գիտամեթոդական աշխատանքներին՝ հրավիրելով նրանց մասնակցելու գիտաժողովներին, կազմակերպելով մասնագիտական խնդիրներին նվիրված սեմինարներ:

Սակայն հարկ է նշել, որ դպրոց-բուհ կապերը զգալի մասով միակողմանի բնույթ են կրում, չի զգացվում ուսուցիչների զգալի հատվածի հետաքրքրվածությունը այդ կապերը խորացնելու, բարելավելու ուղղությամբ:

**ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:**

Հիմքեր՝	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառույթները</p> <p>Ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը</p> <p>Ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների կտրվածքով</p>
---------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ում 2009-12թթ ընթացքում արտաքին կապերով զբաղվում էր կրթական բարեփոխումների և արտաքին կապերի (2012թ-ից՝ կրթական բարեփոխումների և կապերի)

բաժինը: Բաժնի վարիչը ենթարկվում էր ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի 1-ին Բաժինը վերանվանվել է «Կապերի և համագործակցության բաժին» և ենթարկվում է գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորին:

Նշված տարիների ընթացքում Բաժնի աշխատակիցները կատարել են տեղեկատվական աշխատանք՝ արտաքին տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող դրամաշնորհային ծրագրերի, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, այլ միջոցառումների վերաբերյալ Համալսարանի ուսանողությանը, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, վարչական աշխատողներին տեղեկացնելու ուղղությամբ, տեղեկատվական աշխատանք և գործուն օգնություն են ցուցաբերել Էրազմուս Մունդուս ծրագրերին դիմողներին՝ անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ձևակերպելու նպատակով: Բաժնի աշխատակիցները զբաղվում են նաև արտասահմանից ժամանած հյուրերի կենցաղային պայմանները հոգալու հարցերով, ինչպես նաև ժամանած մասնագետների կողմից անցկացվող պարապմունքների, սեմինարների կազմակերպման հարցերով:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթաները խթանելու համար անհրաժեշտ է ակտիվացնել Համալսարանի ամբիոններում կատարվող աշխատանքները հանրապետության այլ բուհերի և արտասահմանյան գործընկերների հետ՝ ուղիղ կապեր հաստատելու ուղղությամբ՝ գիտական, գիտագործնական, կրթական բնագավառին վերաբերող տարբեր բնույթի համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Հիմքեր՝ Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը  
Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը

*Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Վերջին երեք տարիների ընթացքում միջազգային գործունեության զարգացման ռազմավարությամբ և աշխատանքային պլանով նախատեսված է եղել.

- արտասահմանյան և ԱՊՀ երկրների առաջավոր բուհերի հետ համագործակցության զարգացում,
- Բոլոնիայի գործընթացի հիմնական գերակայությունները խթանող ծրագրերի մշակում,
- համալսարանի աշխատակիցներին, ուսանողներին դրամաշնորհային ծրագրերի, կոնֆերանսների, սեմինարների մասին իրազեկում,
- դրամաշնորհային նախագծերի իրականացում,
- դրամաշնորհային նախագծերի որոնում և ծրագրերի մշակում,
- մասնակցություն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի աշխատանքներին

Բոլոր այս ոլորտներում կարելի է արձանագրել ՎՊՀ-ի միջազգային գործունեության ակտիվացում: Համալսարանը 10 միջազգային կոնսորցիումների անդամ է: Այդ կոնսորցիումների անդամ բուհերի ընդհանուր թիվը 157 է: Դրանք եվրոպական երկրների և հետխորհրդային հանրապետությունների առաջավոր բուհեր են: ՎՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի Կոստրոմայի պետական համալսարանի, Մինսկի լեզվաբանական համալսարանի, Լեհաստանի Կրոնոս քաղաքի համալսարանի, Ղազախստանի Կոկշետաու քաղաքի համալսարանի, Գերմանիայի Դարմշտադտ քաղաքի կիրառական գիտությունների

համալսարանի հետ, ինչպես նաև եռակողմ՝ Վանաձոր-Դարմշտադտ-Կոստրոմա համագործակցության պայմանագիր: ՎՊՀ-ն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի ակտիվ անդամ է, 9 դրամաշնորհային նախագծերի գործընկեր: Հայաստանում Erasmus+ազգային գրասենյակի վիճակագրական վերլուծության համաձայն՝ համալսարանը միջազգային նախագծերի թվով Հայաստանում ԵՊՀ-ից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը:

Համաձայն «Համալսարանի զարգացման հայեցակարգ 2010-15թթ. »-ի՝ արտաքին կապերի զարգացման կարևորագույն ուղղություններից է մասնակցությունը Լոռու մարզում իրականացվող տարածաշրջանային ծրագրերին ֆրանկոֆոնիայի զարգացման և տարածման վերաբերյալ Լոռու մարզի մարզպետարանի կողմից կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում Համալսարանը երկկողմանի պայմանագրի շրջանակներում 2008թ-ից ակտիվորեն աշխատում է Ֆրանսիայի՝ ֆրանսերեն լեզվի թոշակառու ուսուցիչների (ԳՐԵՖ) կազմակերպության հետ՝ նպաստելով մարզի դպրոցներում, բուհերում և այլ ուսումնական հաստատություններում ֆրանսերեն դասավանդող մասնագետների վերապատրաստմանը, կազմակերպելով ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումներ:

Վերջին տարիներին Համալսարանը համագործակցության պայմանագրեր է կնքել արտասահմանյան 14 բուհերի հետ, հանդիսանում է 10 միջազգային կոնսորցիումների անդամ: Դրանցից է ՌԴ Կոստրոմայի Ն.Ա.Նեկրասովի անվան պետական համալսարանը, որի հետ Ինստիտուտը կնքել է համագործակցության երկկողմանի պայմանագիր: Նույն համալսարանի և Դարմշտադտի կիրառական գիտությունների ավետարանչական համալսարանի հետ Ինստիտուտն ունի եռակողմ պայմանագիր: Այդ պայմանագրերի շրջանակներում ՎՊՀ-ի աշխատակիցները և ուսանողները մասնակցել են միջմշակութային հետազոտությունների լաբորատորիայի աշխատանքներին (Կոստրոմա- 2010, 2011 թթ, Դարմշտադտ, 2012): Նրանց կողմից ներկայացված հոդվածները տպագրվել են լաբորատորիայի աշխատանքների նյութերի ժողովածուում: Համատեղ հրատարակվել է ժողովածուների 8 հատոր: ՎՊՀ-ի դասախոսներից հրավիրվել են Դարմշտադտի կիրառական գիտությունների համալսարանում դասախոսություններ և սեմինարներ անցկացնելու համար:

2013թ-ին լաբորատորիայի աշխատանքներն անցկացվեցին Վանաձորում: Նիստերի ընթացքում մեր ուսանողները և դասախոսները ունկնդրեցին Գերմանիայից և Բելառուսիայից ժամանած իրենց գործընկերների զեկուցումները՝ նվիրված սոցիալական աշխատանքի, միջմշակութային հաղորդակցության բնագավառի տարբեր խնդիրներին: Պայմանագրի շրջանակներում մեր ուսանողներին ընձեռնվել է հնարավորություն՝ 1-2 ամիս տևողությամբ սովորելու Դարմշտադտում և Կոստրոմայում, անցկացնելու դաշտային պրակտիկա Կոստրոմայի համալսարանի ուսանողների հետ: Վանաձորում մեր ուսանողները հյուրընկալել են Բելառուսից, Կոստրոմայից և Դարմշտադտից ժամանած ուսանողներին և ասպիրանտներին: Պայմանագրեր են ստորագրվել նաև Բելառուսի Լեզվաբանական (ք. Մինսկ), Ղազախստանի Կոկչետաուի Ա.Միրզահամեդովի անվան համալսարանների հետ, իսկ Գերմանիայի Օսնաբրյուկ քաղաքի կիրառական գիտությունների համալսարանի հետ ստորագրվել է մտադրությունների համաձայնագիր:

2013թ-ին համագործակցության պայմանագիր է կնքվել Լեհաստանի Կրոսնո քաղաքի Ստանիսլավ Պիզոնի անվան բարձրագույն մասնագիտական դպրոցի հետ:

Կրթության որակի ապահովման ներքին գործուն համակարգ ստեղծելու նպատակով Ինստիտուտը մասնակցել է Բաց հասարակության Համալսարանի աջակցության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (Սորոսի հիմնադրամ) կողմից «Կրթության որակի ապահովման և

գնահատման համակարգ» №15110 դրամաշնորհային ծրագրին՝ նվիրված որակի ներքին համակարգի շրջանակային մոդելի մշակմանը և ներդրմանը (2007-2009), որում ընդգրկված էին հանրապետության խոշոր բուհերը՝ պետհամալսարան, բժշկական, ճարտարագիտական համալսարաններ, «Եվրասիա» համալսարան:

Այդ ծրագրի իրականացման արդյունքում ստեղծվեցին նախադրյալներ՝ ինստիտուտում որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետ մոդելի ընտրության, անհրաժեշտ ենթակառուցվածքի կազմակերպման և այդ ուղղությամբ աշխատանքների ծավալման համար:

Ուսուցման անհրաժեշտ որակի ապահովման գործում որոշիչ դեր է խաղում կրթական ծրագրերի որակը: Նպատակ ունենալով համապատասխանեցնել կրթական ծրագրերի որակը միջազգային չափանիշներին՝ ինստիտուտը մասնակցել է Սորբոսի հիմնադրամի մեկ այլ նախագծի՝ «Կրթական ծրագրերի որակի բարձրացման մեխանիզմների մշակում և ներդրում «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության հիման վրա» աշխատանքներին (դրամաշնորհ №16532): Այդ նախագծի արդյունքում մշակված մագիստրոսական կրթական ծրագիրը կառուցված է կոմպետենտությունների հիման վրա և համապատասխանում է եվրոպական կրթական չափանիշներին: Այս ծրագրի մոդելով Համալսարանում մշակվել է «Կրթական ծրագրերի մշակման և ներդրման հայեցակարգ», և համալսարանի բոլոր կրթական ծրագրերը վերափոխվել են թյունինգ մեթոդաբանությամբ՝ միտված լինելով.

- Հիմնվել կրթական վերջնարդյունքների վրա,
- դառնալ ուսանողակենտրոն,
- հաշվի առնել աշխատաշուկայի պահանջները և սոցիալական պատվերը:

Ինստիտուտը սերտ կապեր ունի «Ռոսսոտրոլոնիչեստվո» գործակալության Հայաստանի բաժանմունքի հետ: Համագործակցությունը բազմաբնույթ է և ներառում է տարբեր գիտագործնական միջոցառումներ, լեզվի ուսուցման դասընթացներ և այլն:

«Վիվա Սել ՄՏՍ» կազմակերպության հետ կնքված հուշագրի շրջանակներում մեր ուսանողները հնարավորություն ունեն իրենց արտադրական պրակտիկական անցկացնելու այդ կազմակերպությունում: Կազմակերպությունը նվիրել է Համալսարանին գույք՝ համակարգչային լսարանի համար, ացկացվել են հանդիպումներ «Վիվա Սել ՄՏՍ»-ի գործադիր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հետ: Ներկայումս «Վիվա Սել ՄՏՍ»-ի կողմից կրթաթոշակներ են ստանում Համալսարանի 11 լավագույն ուսանողներ:

IREX կազմակերպության հայաստանյան գրասենյակն ամեն տարի Ինստիտուտում անցկացնում է սեմինար ԱՄՆ դեպարտամենտի կողմից առաջարկվող դրամաշնորհների մասին տեղեկատվության ապահովման նպատակով: 2010թ-ին Համալսարանի կրթական բարեփոխումների բաժնի մասնագետը ստացավ սովյալ կազմակերպության դրամաշնորհը՝ ԱՄՆ-ում մագիստրոսական կրթություն ստանալու համար:

Հետամուտ լինելով զարգացման առանցքային ուղղությանը՝ Եվրոպայի ընդհանուր կրթական տարածքին ընդգրկվելուն՝ Համալսարանի ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են Եվրամիության կրթական, աուդիովիզուալ և մշակութային գործակալության հայաստանյան գրասենյակի (EACEA) կողմից կազմակերպվող սեմինարներին՝ բարձրագույն կրթության ոլորտում գործակալության կողմից առաջարկվող բարձրագույն կրթության բարեփոխումների Տեմպուս և շարժունության ապահովման Էրազմուս Մունդուս դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով (Վանաձոր, 2009, 2012, Գյումրի, 2010, Երևան, 2012, Ալմաթի, 2014, Բուդապեշտ, 2014, Շվեդիա, 2014, Լեհաստան, 2014, Ռուսինիա, 2014):

Ներկայումս Համալսարանը ներգրավված է նույն գործակալության կողմից կառավարվող Տեմպուս ծրագրի հետևյալ նախագծերում՝ որպես միջբուհական կոնսորցիումի անդամ.

- MAHATMA- նախագծի իրականացման արդյունքում մշակվել և 2013-14 ուստարվանից ՎՊՀ-ում (ինչպես նաև կոնսորցիումի անդամ այլ բուհերում) ներդրվել է «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագիրը: Կոնսորցիումի անդամ են 15 եվրոպական և ԱՊՀ երկրների բուհեր և հաստատություններ:
- VERITAS- նախագիծը միտված է զարգացնելու կրթության երրորդ շրջափուլը՝ հիմնված Զայցբուրգյան սկզբունքների վրա: Կոնսորցիումի անդամ են 18 եվրոպական և ԱՊՀ երկրների բուհեր և հաստատություններ:
- LeAGUe- նախագիծը նպատակ ունի Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում մշակելու հարատև կրթության ցանց: Կոնսորցիումի անդամ են 14 եվրոպական և ԱՊՀ երկրների բուհեր և հաստատություններ:
- SSRULLI- նախագիծը նպատակ ունի ամրապնդելու համալսարանների՝ որպես ցկյանս ուսումնառության հաստատությունների հատուկ դերը: Կոնսորցիումի անդամ են 14 եվրոպական և ԱՊՀ երկրների բուհեր և հաստատություններ:
- GOVERN – նախագծի նպատակն է խրախուսել բուհի ինքնավարությունը և պատասխանատվությունը՝ ստեղծելով բուհի կառավարման ժամանակակից համակարգ՝ Բոլոնիայի սկզբունքներին համահունչ: Կոնսորցիումի անդամ են 20 եվրոպական և ԱՊՀ երկրների բուհեր և հաստատություններ:

Համալսարանը միջբուհական կոնսորցիումի կազմում ընդգրկված է EACEA գործակալության կողմից ղեկավարվող ակադեմիական շարժունության Էրազմուս Մունդուս դրամաշնորհային ծրագրի երկու երկարաժամկետ նախագծերում՝ «IANUS» և «EMINENCE»: Այդ նախագծերը հնարավորություն ընձեռեցին մեր ուսանողներին մասնակցելու և ստանալու դրամաշնորհներ՝ Եվրոպայի առաջատար բուհերում 1-2 կիսամյակ սովորելու համար: Ներկայումս ՎՊՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի թվով 26 ուսանողներ սովորել կամ սովորում են տարբեր եվրոպական երկրների համալսարաններում (Ֆրանսիա, Պորտուգալիա, Շվեդիա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա): EMINECE նախագծի երրորդ փուլի արդյունքում 7 ուսանող պետք է մեկնեն սովորելու Պորտուգալիայում, Շվեդիայում, Ռումինիայում և Լեհաստանում:

Նույն փուլի շրջանակներում արձանագրվել է առաջընթաց դասախոսների շրջանում. ՎՊՀ-ի 6 դասախոս հրավիրվել է Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա՝ դասավանդելու և հետազոտություն անցկացնելու նպատակով:

Հատկանշական է, որ մեր բուհը դարձել է ոչ միայն ուղարկող, այլև ընդունող կողմ. EMINENCE նախագծով սովորում է Լեհաստանի Ա. Միցկևիչի անվան համալսարանի մագիստրանտ Դանուտա Մարիա Ստոյակը: Ընդունել ենք նաև 2-ական դասախոս Ռումինիայից և Լեհաստանից: Ա. Միցկևիչի համալսարանից 2 պրոֆեսոր՝ Քշիշտոֆ Ֆեդորովիչը և Բարտոլոմեյ Բժեզինսկին, 2015թ. փետրվարին հանդես են եկել մի շարք դասախոսություններով:

EMINENCE նախագծի նույն փուլով 2015թ. հոկտեմբերին Լեհաստանի Ա. Միցկևիչի անվան համալսարանից ՎՊՀ են ժամանելու 2 դասախոս:

Ներկայումս տեղի է ունեցել հարացույցի փոփոխություն, և TEMPUS-ի փոխարեն մեկնարկել է ERASMUS + ծրագիրը, որի Հիմնական գործողություն 1-ի շրջանակներում ներկայացվել են երկկողմ համաձայնագրերի 7 հայտ (Բուլղարիա, Լեհաստան /3/, Ռումինիա, Պորտուգալիա,

<p>Իսպանիա):</p> <p>Բաժնի աշխատակիցները ակտիվ գործունեություն են ծավալում նաև ERASMUS + ծրագրի Հիմնական գործողություն 1-ի շրջանակներում գործընկերներ գտնելու ուղղությամբ: Այս կապակցությամբ անց են կացվում խորհրդակցություններ և փոխադարձ այցեր Եվրամիության տարբեր երկրներ:</p> <p>Եվրոպական մի շարք բուհերի հետ ինտենսիվ բանակցություններ են տարվում նաև երկակի /double/ դիպլոմ և համատեղ /joint/ աստիճան շնորհելու ուղղությամբ:</p> <p>Արտաքին կապերով զբաղվող աշխատակիցները կատարում են նաև որոշակի աշխատանք՝ մեր ուսանողներին և աշխատակիցներին հանրապետության այլ բուհերում գործող նույնանման ծրագրերի մասին տեղեկատվության տարածման նպատակով: Այսպես, Համալսարանի մագիստրատուրայի մեկ շրջանավարտ ստացել է Էրազմուս Մունդուս ծրագրի Երևանի համալսարանում գործող BACKIS նախագծի դրամաշնորհը:</p> <p>Այսպիսով՝ կատարվել է որոշակի աշխատանք Համալսարանի միջազգայնացման ուղղությամբ: Սակայն հարկ է նշել, որ որոշ պայմանագրեր շարունակություն չեն ունենում կողմերի ցածր ակտիվության պատճառով: Գործընթացի զարգացմանը խոչընդոտում են մի շարք այլ հանգամանքներ, որոնցից կարելի է նշել ոչ բավարար ֆինանսական ռեսուրսները, սակավաթիվ աշխատակազմը, օտար լեզվի ոչ բավարար իմացությունը, ինչպես նաև պատշաճ կանոնակարգման բացակայությունը, որոշ չափով նաև մայրաքաղաքից հեռու գտնվելու հանգամանքը: Անհրաժեշտ ենք նաև համարում ուսանողների, հատկապես մագիստրանտների առավել ակտիվ ներգրավվածության ապահովումը արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներին:</p>	
<p><b>ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն</b> ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:</p>	
<p>Հիմքեր</p>	<p>Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները  <a href="http://www.vsu.am/karg/lracucich%20krtutyam-NOR.pdf">http://www.vsu.am/karg/lracucich%20krtutyam-NOR.pdf</a>          Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը <a href="#">IX\9.1.doc</a>          Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը          Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ</p>
<p>Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար՝ :</p> <p><i>Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):</i></p> <p>Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների 2012-2014թթ.-ին օտարերկրյա ուսանողներին առաջարկվել են անգլերեն լեզվով հետևյալ դասընթացները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Անգլերեն լեզու (պրակտիկ դասընթացներ հնչյունաբանությունից, քերականությունից, բառապաշարից)</li> <li>2. Գրավոր խոսքի հմտություններ</li> <li>3. Անգլերենի տեսական քերականություն</li> <li>4. Անգլերենի տեսական հնչյունաբանություն</li> </ol>	

5. Անգլերենի բառագիտություն
6. Անգլերենի ոճագիտություն
7. Թարգմանության տեսություն
8. Անգլիական և ամերիկյան գրականություն
9. Տեսական քերականության արդի հիմնահարցեր
10. Բանավոր և գրավոր խոսք
11. Տեքստի բանասիրական վերլուծություն
12. Անգլերենի դասավանդման մեթոդիկա ավագ դպրոցում
13. Անգլերենի դարձվածաբանություն
14. Ամերիկագիտություն
15. Ակադեմիական գրագիտություն

Բուհի միջազգայնացմանը խոչընդոտող հանգամանքներից մեկը աշխատակազմի՝ անգլերենի իմացության ոչ պատշաճ մակարդակն է: Սակայն, վերջին երեք տարիների ընթացքում բուհում այս առթիվ նկատվում է որոշակի ակտիվություն. 2012 թ.-ից բուհում գործում է լեզուների ուսուցման կենտրոն, իսկ 2013թ.-ից նաև Լրացուցիչ կրթության բաժինը, որի գործառույթներից մեկն է կազմակերպել անգլերենի դասընթաց աշխատակազմի համար: Վերջին երեք տարիների ընթացքում բուհի աշխատակազմի 128 անդամ հաճախել է կենտրոնի կողմից կազմակերպված անգլերենի դասընթացներին:

*Չափանիշ 9-ի վերաբերյալ ներկայացնել վերջին 5 տարվա SWOT վերլուծություն:*

<b>Ուժեղ կողմեր</b>	<b>Թույլ կողմեր</b>
Կապերի և համագործակցության բաժնի աշխատակիցների բավարար կոմպետենտություն և գիտելիքներ	Բաժնի աշխատակիցների մինիմալ քանակ
Աշխատանքի արդյունավետության ցուցիչների առկայության կարևորության գիտակցում	Աշխատանքի արդյունավետության հստակ ցուցիչների բացակայություն
Միջազգային կապերին և համագործակցությանը վերաբերող մշակված փաստաթղթերի անհրաժեշտ մակարդակ	Օրենսդրական դաշտի անկատարություն (օրինակ՝ երկակի և համատեղ դիպլոմների շնորհման վերաբերյալ)
Արտաքին կապերի բնագավառում ստորագրված պայմանագրերի որոշակի քանակ	Ստորագրված որոշ պայմանագրերի շրջանակներում պասիվ համագործակցություն
Այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող դրամաշնորհային (այդ թվում նաև փոխանակման) ծրագրերին ուսանողության և դասախոսական կազմի մասնակցության ապահովում	Դասախոսական և վարչական անձնակազմի մասնակցության ցածր մակարդակ
Պայմանագրեր՝ հանրապետության այլ բուհերի հետ	Դրամաշնորհային ծրագրերի որոնման հնարավորությունների ոչ լիարժեք կիրառում
Միջազգային ծրագրերի մասնակցության բարձր վարկանիշ հանրապետությունում (երկրորդ տեղ)	Բենչմարքինգի տեխնոլոգիաների ոչ լիարժեք կիրառում
	Առաջավոր բուհերի կրթական ծրագրերի հավատարմագրման և բուհում դրանց ներդրման (ֆրանչայզինգ) պրակտիկայի

	բացակայություն
	Կրթական ծրագրերի կարծրությունը և անհատական ուսումնական հետազոծի բացակայություն, որը խոչընդոտում է ուսանողների շարժունությանը
<b>Հնարավորություններ</b>	<b>Վտանգներ</b>
Կրթական բարեփոխումների ներկա մակարդակին համապատասխանող մշակված անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն	Փաստաթղթերի արագ «հնացում»՝ կապված բարեփոխումների ոլորտում արագ կատարվող փոփոխությունների հետ
Տեղեկատվական աշխատանքների իրականացում, PR նորարարական տեխնոլոգիաների յուրացում և կիրառում	Գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի բացակայության պատճառով գիտական ներուժի զարգացման ցածր մակարդակ
Կամավորական շարժման ակտիվացում	
Անձնակազմի շարժունության ակտիվացում	

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

**Միջազգային գործունեության ասպարեզում բուհի զարգացման հայեցակարգը և առաքելությունը նախատեսում են հետևյալ նպատակային կողմնորոշիչները.**

- ✓ ՎՊՀ-ում գործում են արտաքին կապերի իրականացումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր
- ✓ ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները կանոնակարգված են
- ✓ ՎՊՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային համապատասխան համապատասխան հաստատությունների և կառույցների հետ
- ✓ ՎՊՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ:
- ✓ SWOT վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ բուհի միջազգային գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել բարելավմանն ուղղված հետևյալ քայլերը.
- ✓ ընդլայնել Կապերի և համագործակցության բաժինը՝ ընդգրկելով ավելի շատ աշխատողներ
- ✓ ակտիվացնել և բազմազանեցնել բաժնի գործունեության տեսակները և ձևերը
- ✓ ընդգրկել ավելի մեծ թվով աշխատակիցներ միջազգային ծրագրերի իրականացման համար
- ✓ առավել արդյունավետ զբաղվել հայտարարված դրամաշնորհներ գտնելու ուղղությամբ (fund-raising)
- ✓ կատարելագործել բենչմարքինգի տեխնոլոգիաները և ներդնել առաջավոր բուհերի փորձը
- ✓ մշակել և ներդնել ուսանողի ուսուցման անհատական հետազոծ (PDP)՝ շարժունությունն ավելի արդյունավետ դարձնելու համար
- ✓ հաշվի առնելով Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը՝ մշակել ուսանողների և դասախոսների շարժունության հայեցակարգ
- ✓ ակտիվացնել օտար լեզուների իմացությունը ուսանողների և աշխատողների շրջանում՝ շարժունությունն ավելի արդյունավետ դարձնելու համար:

## X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի ապահովման համակարգի գործառույթներն իրականացվում են ՈԱԿ-ի հայեցակարգին համապատասխան ռազմավարական պլանով, որը բխում է համալսարանի զարգացման հայեցակարգից և ռազմավարությունից: Որակի ապահովման համակարգում մշակվում և իրականացվում է Համալսարանի քաղաքականությունը որակի կառավարման բնագավառում, պարբերաբար ստուգվում և վերլուծության են ենթարկվում կառուցվածքային ստորաբաժանումների կողմից որակի բարելավմանը միտված գործընթացների արդյունքները, անցկացվում ուսումնական գործընթացի մեթոդական, տեղեկատվական, նյութատեխնիկական, կադրային ոլորտի ուսումնասիրություններ, աջակցելով որակի կառավարման համակարգի մշակման, ներդրման և ուղղորդման, առկա վիճակի վերլուծության, կրթական ծրագրերի վերամշակման, մոնիթորինգի, աուդիտի, կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման մեթոդների ներդրման գործընթացներին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր՝

Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը [X\10.8.doc](#)  
 Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը  
<http://www.vsu.am/karg/krt%20vorak%20apahovman-1.pdf>

*Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Համալսարանի որակի ապահովման /ՈԱ/ համակարգի ներդրումը, որպես մասնագիտական կրթության եվրոպական համակարգին ինտեգրվելու կարևոր պայման, իրականացվում է 2010 թվականից, որի գործունեությունը միտված է համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների բարելավմանը:

ՎՊՀ ՈԱ համակարգի [X\10.1.doc](#) քաղաքականությունը բխում է մուլտի առաքելությունից, որի նպատակն է աջակցել բարձրորակ, աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստմանը: ՈԱ համակարգը իր գործառույթներն իրականացնում է՝ ըստ որակի ապահովման ռազմավարական պլանի, գործունեության վարման հստակ քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի, որոնք հասանելի են բոլոր շահագրգիռ կողմերի համար ([www.vsu.am](http://www.vsu.am)): ՈԱ գործընթացները համակարգվում են ՈԱԿ-ի կողմից. բոլոր ստորաբաժանումներում գործում են ՈԱ աշխատախմբեր պարբերաբար անց է կացվում մշտադիտարկում (մոնիթորինգ) և կրթական գործընթացի աուդիտ, որոնց արդյունքները պարբերաբար ներկայացվում են գիտխորհրդի, ռեկտորատի նիստերին, քննարկվում ֆակուլտետներում, ամբիոններում և այլն:

ՈԱԿ-ի հիմնական խնդիրն է [X\10.3.doc](#) ապահովել համալսարանի որակի կառավարման համակարգի զարգացումը և նախագծել նրա բարելավմանն ուղղված գործողությունները՝ տեսանելի դարձնելով և հաշվի առնելով դժվարությունների հաղթահարման ուղիները և հաստատության հետագա զարգացմանը միտված նախաձեռնություններն ու մտադրությունները: Այս գործընթացին ակտիվ մասնակցություն ունեն նաև ուսանողները, որոնք հնարավորություն ունեն ազատ արտահայտելու իրենց հուզող հարցերը, խնդիրները և լուծումները:

Կենտրոնը պարբերաբար ստուգում և վերլուծում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից որակի բարելավմանը միտված գործողությունների արդյունքները և աջակցում ՎՊՀ-ի ինքնագնահատման գործընթացներին:

ՈԱ կենտրոնը կազմակերպում և իրականացնում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների մոնիթորինգ, ինչպես նաև ԿԾ-ի ներքին աուդիտ:

ՈԱ բնագավառի 2014-2018 թթ. զարգացման ռազմավարության հիմնական ուղղությունները կապված են ԿԾ-ի վերամշակման և համալսարանական կրթության ներդրման հետ որակի մշակույթի սկզբունքների հիման վրա:

ՈԱ հայեցակարգը և քաղաքականությունը մշակվել է ակնկալվող արդյունքների հասնանելիության արդյունավետ մեխանիզմների ստեղծման հիման վրա:

ՈԱ հայեցակարգի հիմքում ընկած են ինքնագնահատմամբ վերհանված աշխատանքային գործընթացներին առնչվող կարիքները ([www.vsu.am](http://www.vsu.am)): ՈԱ հայեցակարգում ներկայացված են ՈԱ չափանիշերը և նրանց իրականացման ռազմավարությունը:

ՈԱ բոլոր գործընթացները կրում են պաշտոնական բնույթ և մատչելի են շահակիցներին, ինչը նպաստում է որակի շարունակական ամրապնդմանը ոչ միայն ներքին շահակիցների, այլև կրթական ծառայությունների կարիքների, աշխատաշուկայի հետազոտման և գնահատման հիման վրա: Գործընթացի նման կազմակերպումը նպաստում է հանրային վստահության ձեռք բերմանը:

Համալսարանում շարունակական բնույթ են կրում մասնագիտական կրթության բարեփոխումների ուղղությամբ կատարվող աշխատանքները, սակայն, իրական արդյունքների մասին կարող ենք խոսել բարելավման ծրագրերի ներդրման գործընթացի առաջին փուլից հետո:

Չնայած այդ ուղղությամբ բավականին աշխատանքներ կատարվել են, մասնավորապես, վերանայվել է ՈԱ քաղաքականությունը, մշակվել և ներդրվել են կարիքների վերհանման նոր գործիքներ, այնուամենայնիվ, դեռևս անելիքները շատ են, որոշ աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և ամբողջովին համակարգված չեն:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ ք.** Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր	<p>Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը</p> <p>Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող</p>
--------	--

Ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը

Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը

Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը

*Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

2013 թ-ից ԿՈԱԿ-ը վերանվանվեց ՈԱԿ և դարձավ անկախ կառույց, որը անմիջապես հաշվետու է գիտխորհրդին և ռեկտորին:

ՈԱ ներքին համակարգի զարգացման նպատակով ՎՊՀ-ում իրականացվեց «Որակի ապահովման ներքուհական համակարգի ստեղծում և ամրապնդում» տեխնիկական աջակցության ծրագիր, ինչը հնարավորություն տվեց հարստացնել ՈԱԿ-ի նյութատեխնիկական բազան համակարգչային և գրասենյակային սարքավորումներով, կահույքով և համակարգչային ծրագրերով:

ՈԱ մշակույթի ձևավորման, որակի կառավարման նպատակով ՎՊՀ-ում իրականացվել են կրթության որակի բարելավմանը միտված ծրագրեր և վերապատրաստումներ («Բարձրագույն և հետբուհական հաստատություններում կառավարման գործունեության թափանցիկության և հաշվետվողականության համակարգի ստեղծում», «TEMPUS MAHATMA միջազգային մագիստրոսական ծրագիր», «Դպրոցի տնօրենների վերապատրաստում»):

2010-2013 թթ. Կենտրոնի կողմից իրականացվել են որակի ապահովմանը միտված վերապատրաստումներ, որոնց մասնակցել են Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, վարչական աշխատողներ, ուսանողներ: Ֆակուլտետային հանձնախմբեր:

ՈԱԿ-ի աշխատանքներում ընդգրկված են 3.5 հաստիք: ՈԱ գործընթացները իրականացվում են ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ միասին: Այդ աշխատանքներին մասնակցում են նաև ուսանողները և գործատուները:

Յուրաքանչյուր տարի նախապես ներկայացվում է հաջորդ տարվա աշխատանքների ծավալը, որը ենթարկվում է վերլուծության և ֆինանսավորվում՝ ըստ համալսարանի ֆինանսական հնարավորությունների:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր՝  
 Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքերը  
*(քաղվածքներ հրամաններից)*

*Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՈԱ կենտրոնի քաղաքականության մեջ կարևորվում է շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին: Այդ նպատակով կազմակերպվում են հանդիպումներ ՄՈԻՀ-ի շրջանավարտների հետ Լոռու մարզի գործատուների մասնակցությամբ:

Ֆակուլտետային ՈԱ-ն հանձնախմբերում ընդգրկված են դասախոսներ, ուսանողներ,

գործատուներ: Ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում պարբերաբար անց են կացվում հարցումներ և բաշխվում հարցաթերթիկներ (օրինակ, դասախոսը ուսանողի աչքերով, ուսանողների վերաբերմունքը ուսումնական գործունեության, նրանց հոգեբանական հարմարվողականության, էլեկտրոնային թեստավորման, անձնային և մասնագիտական որակների գնահատման և բարելավման նկատմամբ): Արդյունքում ՄՈՒՀ-ում ՈԱ մշակույթ է ձևավորում:

Նկատելիորեն բարելավվել է ուսանողների մասնակցությունը ՈԱ գործընթացներին, թեև դեռևս առկա են խնդիրներ, որոնք առայժմ բավարար լուծում չեն ստացել:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ շահեկիցների մեծ մասի մոտիվացիան թույլ է և անարդյունավետ են մասնակցում ՈԱ բարեփոխումների գործընթացին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ.** Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր՝	<p>Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները</p> <p>Համապատասխան այլ հիմքեր և վերլուծություններ</p>
---------	---

*Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ-ի ՈԱԿ-ի կանոնակարգը հաստատվել է ԳԽ-ի կողմից և սահմանում է Կենտրոնի կազմակերպչական մեթոդական հիմքը ու հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, աշխատակազմը, գործունեության ուղղությունները, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ ունեցած փոխհարաբերությունները:

ՈԱ համակարգը գործում է ՎՊՀ-ի հայեցակարգի և զարգացման ռազմավարական պլանի հիման վրա, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով:

2013 թ. լույս է տեսել որակի ապահովման ձեռնարկ, որտեղ ներկայացված են ՈԱ մոդելները, մշակման մեթոդաբանությունը, առաքելությունը, խնդիրները, նպատակները, հայեցակարգը: Որակի ապահովման հայեցակարգում ներառված են կենտրոնի գործունեության հիմնական սկզբունքներն ու ռազմավարությունը, կրթության որակի ապահովման ծրագրերի կրթական ռեսուրսները, ուսանողների աջակցության համակարգը, ներքին աուդիտը, մոնիթորինգը և այլն: Ներկայումս նախապատրաստվում է նոր ձեռնարկ, որտեղ հաշվի են առնված միջազգային և տարիների ընթացքում ՄՈՒՀ-ի ձեռք բերած փորձը:

Ուսանողների հոգեբանական հարմարվողականության, նրանց իրազեկվածության, կրթական համակարգից բավարարվածության վերաբերյալ հարցումները պարբերաբար իրականացվում են 2010 թվականից: Հարցաթերթիկները մշակվում են հինգ տարվա պիտանելիության կտրվածքով, յուրաքանչյուր հետազոտությունից առաջ դրանք վերանայվում և անհրաժեշտության դեպքում լրամշակման են ենթարկվում՝ արդյունքները առավել հուսալի և օբյեկտիվ դարձնելու նպատակով:

ՎՊՀ-ում որակի ապահովումը իրականացվում է հետևողական վերահսկման ռեժիմով՝ համաձայն սահմանված չափանիշերի և կանխատեսվող ակնկալիքների: Որակի ներքին ապահովման համակարգի վերանայմանն են միտված տարբեր միջազգային նախագծերի և դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերը:

ՈԱ մշակույթը համեմատաբար նոր է, հետևաբար այն մշտապես կատարելագործման կարիք ունի: Խնդրի լուծումը պլանավորված է համապատասխան մասնագիտական մարդկային ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի, գործիքակազմի առկա ոչ բավարար

հնարավորություններով:

*Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բեկնմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):*

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե.** Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր՝	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:
---------	---

*Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՎՊՀ որակի գնահատման կամ հավատարմագրման գործընթացների հաջող իրականացման գործում մեծ կարևորություն ունեն Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների ինքնագնահատման (ինքնավերլուծության) մեխանիզմները: Այդ նպատակով տարբեր ֆակուլտետներում ստեղծվել են ինքնագնահատման գործընթացի իրականացման համար ֆակուլտետային հանձնաժողովներ, որոնցում ընդգրկված են ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ: Որակի ապահովման կենտրոնը համակարգում է ֆակուլտետային ինքնավերլուծությունը, կատարում առաջարկություններ և ներկայացնում այն քննարկման: Նման վերլուծությունների արդյունքում վերհանված կարիքները տեսանելի են դարձնում բացթողումները, որոշ գործընթացների մեխանիզմների բացակայությունը:

Համալսարանում ստեղծված է աշխատանքային խումբ, որի հիմնական նպատակը՝ ինքնավերլուծության զեկույցի պատրաստումն է: Յուրաքանչյուր չափորոշիչ վերլուծության պատասխանատվությունը դրված է կոնկրետ անձի վրա, որը հնարավորություն ունի անհրաժեշտության դեպքում համարելու աշխատանքային խումբը: Գործընթացը համակարգվում է Համալսարանի ռեկտորի կողմից: Յուրաքանչյուր չափորոշիչ պարբերաբար քննարկման է ենթարկվում վերոհիշյալ խմբի կողմից, այնուհետև ներկայացվում ստորաբաժանումներին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ.** Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/վերլուծության արդյունքները մակարդակը
--------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Արտաքին և ներքին շահակիցների համար գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում են ՎՊՀ-ի բուհի կայք-էջում:

Ներքին և արտաքին շահակիցների համար ՎՊՀ -ի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով կարևոր է համարվում նրանց տեղեկացվածությունն ապահովող համակարգերի առկայությունը: Բուհում առկա են տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

1. ՎՊՀ -ի գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը:
2. ՎՊՀ -ի ռեկտորի ամենամյա զեկույցը գիտխորհրդին:
3. ՎՊՀ -ի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:
4. Դասընթացների տեղեկագիրքը, որը հրատարակվում և հասանելի է դառնում ուսանողներին, արտաքին և ներքին շահակիցներին՝ տպագրված տարբերակով:
5. ՎՊՀ-ի կայք-էջում տեղադրվող տեղեկատվությունը ներքին գործընթացների և կանոնակարգերի վերաբերյալ:
6. Ֆակուլտետների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով ամենամյա իրականացվող ներքին ստուգումները, որի արդյունքները քննարկվում են ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովների հետ, իսկ այնուհետև ԳԽ-ում:

Պարբերաբար ՈԱԿ-ը անցկացնում է հանդիպումներ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվում են կենտրոնի կողմից կատարված աշխատանքները, առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները:

*Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅՂ ԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> <li>1. Ղեկավարության աջակցություն:</li> <li>2. ՈԱԿ-ը անկախ է և հաշվետու է ռեկտորին:</li> <li>3. Մասնագիտացված աշխատանքային խմբի առկայություն</li> <li>4. Որակի ներդրմանն աջակցող դրամաշնորհային ծրագրերում մասնակցություն</li> <li>5. ՈԱ քաղաքականություն</li> <li>6. ՈԱ աշխատանքային խմբերի առկայություն ստորաբաժանումներում:</li> <li>7. ՈԱ գործընթացների պաշտոնական բնույթը և մատչելիությունը շահակիցների համար:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների որոշ մասի մոտ ՈԱ մոտիվացիայի ոչ բավարար մակարդակ:</li> <li>2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների անկատարություն:</li> <li>3. Գործատուների մակերեսային արտահայտված համագործակցություն:</li> </ol>
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<ol style="list-style-type: none"> <li>1. Որակի ներդրմանն աջակցող դրամաշնորհային ծրագրերում մասնակցության հնարավորություն</li> <li>2. ՈԱ կանոնակարգերի և ընթացակարգերի կատարելագործման հնարավորություն կարիքների բացահայտման սկզբունքների հիման վրա</li> <li>3. Շահակիցների ներգրավման հնարավորություն</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. ՈԱ մեխանիզմների ներդրման դժվարություններ, պայմանավորված արտաքին գործոններով:</li> <li>2. Մրցակցային դաշտի լարվածություն:</li> </ol>

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

1. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների որոշ մասի մոտ ՈԱ մոտիվացիայի ոչ բավարար մակարդակ, որը պայմանավորված է ոչ միայն սոցիալական խնդիրներով այլև որակի մշակույթի ներդրման հետ կապված դժվարություններով: Այս փուլում առավել արդյունավետ գործում են հանդիպումները, զրույցները:
2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների անկատարություն: Շրջանավարտի հետ հետադարձ կապի ապահովման հետ կապված կարիքների վերհանում և համապատասխան մեխանիզմների մշակում:
3. Գործատուների մակերեսային արտահայտված համագործակցություն: Գործատուների հետ համագործակցության մեխանիզմների կատարելագործում:  
4. Բուհի ներքին և արտաքին շահեկիցների հետաքրքրվածությունը ՈԱ միտված բարեփոխումներին:  
Անցումը համալսարանական կրթության անհրաժեշտություն է ստեղծում աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումների ձևավորման համար, ըստ որի հարկավոր է.
  - ✓ ավելի ընդարձակել աշխատակիցների և շահեկից կողմերի ներգրավվածությունը կառավարման գործընթացներում,
  - ✓ կատարելագործել ֆինանսական մուտքերի և ֆինանսական ռեսուրսների ձևավորման և կառավարման մեխանիզմները,
  - ✓ ստեղծել ֆինանսական աուդիտի համակարգ:

Հավելվածի N	Անվանում
1.1	Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգ
1.2	Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ
1.3	Մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը և ընթացակարգը
1.4	Կանոնադրություն
1.5	Համալսարանի կառուցվածքը
1.6	Կրթական ծրագրերի հաստատման կարգ
1.7	ՎՊՀ-ի ՈԱ համակարգի ներդրման և կատարելագործման ռազմավարություն 2014-2018թթ.
1.8	Ռազմավարության իրականացման պլան «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» Պետական ոչ առևտրային կազմակերպության ռազմավարական զարգացման 2014-2018 թթ.
1.9	Մասնագիտության կրթական ծրագիր
3.1	Հեռակա ուսուցման համակարգի 2014թ. շրջանավարտների մասնագիտությունների և որակավորումների (բակալավրի հիմնական կրթական ծրագիր)
3.2	Առկա ուսուցման համակարգի 2014թ. շրջանավարտների մասնագիտությունների և որակավորումների (բակալավրի հիմնական կրթական ծրագիր)
3.3	Առկա ուսուցման համակարգի 2014թ. շրջանավարտների մասնագիտությունների և որակավորումների (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիր)
3.4	ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմ
3.5	«Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագիր
3.6	Մաթեմատիկական անալիզ առարկայի ուսումնամեթոդական փաթեթ
3.7	«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի
3.8	ՎՊՀ-ում ներդրված կրթական ծրագրերի ցուցակ
3.9	Մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ ըստ ձևավորվող կոմպետենցիաների
3.10	«Իրավագիտություն» մասնագիտության մասնագիր
3.11	Պահանջվող կոմպետենցիաների և դրանք ձևավորող տվյալ ՀԿԾ հիմնական մասերի համապատասխանեցման մատրիցա
3.12	Պահանջվող կոմպետենցիաների և դրանք ձևավորող տվյալ ՀԿԾ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցման մատրիցա
3.13	Քաղվածք՝ «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում կիրառվող դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդներից
3.14	Մասնագիտական կրթական ծրագրի համեմատական վերլուծություն

	(բենչմարքինգ)՝ ըստ ձևավորվող կոմպետենցիաների, դասավանդման և ուսումնառության, դասավանդման մեթոդների
3.15	Քաղվածք՝ պահանջվող կոմպետենցիաների և «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ՀԿԾ-ի հիմնական կրթաբաղադրիչների համապատասխանեցման մատրիցայից
3.16	Քաղվածք՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում նախատեսվող կոմպետենցիաների և դրանք ապահովող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների աղյուսակից
3.17	Քաղվածք՝ պահանջվող կոմպետենցիաների և «Մաթեմատիկա» մասնագիտության ՀԿԾ-ի հիմնական կրթաբաղադրիչների համապատասխանեցման մատրիցայից
3.18	Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն
4.1	Ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների, ուսուցման համակարգերի, կրթական աստիճանների
4.2	Ուսանողների և դասախոսների, որոնք տեղեկատվություն են տրամադրել չափանիշը գրելու համար
4.3	Լոռու մարզի աշխատաշուկայի պահանջարկի վերլուծություն
4.4	Աշխատանքի ընդունվածների ցանկ
4.5	Կանոնակարգ ուսանողների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի (ֆոնդի) ձևավորման
4.6	Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների
5.1	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի թվաքանակը՝ ըստ ամբիոնների և տարակարգերի, 2015թ., մարտ
5.2	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճանաշնորհման և կոչումների մակարդակը և շարժը 2011-2015թ.թ.
5.3	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի շարժը և հարաբերակցությունը՝ ըստ գիտական աստիճանի և/կամ կոչումի 2013-2015թ.թ.
5.4	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական հիմնական և ժամավճարային կազմի շարժը և հարաբերակցությունը 2013-2015թ.թ.
5.5	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի գիտական աստիճանաշնորհման և կոչումների հարաբերակցությունը 2013-2015թ.թ.
5.6	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի բաշխվածությունն ըստ ֆակուլտետների և տարիքային սանդղակի
5.7	ՎՊՀ-ի վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական աշխատակազմերի թվաքանակը և հարաբերակցությունը 2013-2015թ.թ.
5.8	ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական կազմերի թվաքանակը և հարաբերակցությունը 2013-2015թ.թ.
5.9	Հրաման. Իրավական ակտերը հաստատելու, իրավական ակտերը ուժը կորցրած ճանաչելու մասին
5.10	Հրաման. Մշտական հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին
7.1	ՎՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ամբիոնները
9.1	Համագործակցության և կապերի բաժնի գործունեության ռազմավարական

	պլան
9.2	2015թ. միջազգային գործունեության զարգացման ռազմավարություն
9.3	2014թ. միջազգային գործունեության զարգացման ռազմավարություն
9.4	ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվը
10.1	Որակի ապահովման հայեցակարգ
10.2	ՈԱԿ կանոնակարգ
10.3	Որակի կառավարման համակարգի կանոնակարգ
10.4	Որակի ապահովման աուդիտի հայեցակարգ
10.5	Մասնագիտության կրթական ծրագրի ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգ
10.6	Մշտադիտարկման անցկացման կանոնակարգ
10.7	ՎՊՀ-ի որակի ապահովման կենտրոնի աշխատանքային պլան <u>12/01/2015 - 25/12/2015</u>
10.8	Որակի ապահովման ձեռնարկ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### Հավելված 3.1.1: Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքը

Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերը պետք է ներառեն հստակ և համապարփակ գործընթաց, որը վկայում է, որ քննարկվել և նկարագրվել է հետևյալը.

- ծրագրի հայեցակարգը և նպատակները,
- ծրագրի համապատասխանությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին,

- ծրագրի խնդիրները, առարկան և մոդուլները,
- ծրագրի, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի և մոդուլի ակնկալվող կրթական արդյունքները,
- պլանի համապատասխանությունը նշված նպատակներին և ակնկալվող կրթական արդյունքներին,
- ուսուցման ձևը /առկա, հեռակա, հեռավար/ և ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը,
- կրթական արդյունքներին համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդները,
- կապը հաստատության այլ ծրագրերի հետ,
- ապագա զբաղվածության (աշխատանքի տեղավորման հնարավորության) խնդիրները ,
- ծրագրի կառավարման խնդիրները,
- ծրագրի համապատասխանությունը Հայաստանի, եվրոպական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջներին,
- մարդկային անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը,
- անհրաժեշտ ինֆորմացիոն ռեսուրսները,
- ծրագրի ազդեցությունը ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման վրա,
- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- այլ ՄՈՒՀ-երի կողմից առաջարկվող համանման կամ հարակից ծրագրերի միջավայրային վերլուծությունը,
- ծրագրի պահանջվածությունը սովորողների կողմից,
- ծրագրի վերաբերյալ համապատասխան շահակիցների և մասնագիտական շրջանակի հետ խորհրդակցությունների անցկացումը,
- սովորողների գնահատման արդարացի, հիմնավորված և չափորոշիչներին համապատասխանող ներդրված մեխանիզմները,
- ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանության մեխանիզմները,
- սովորողների ընդունելության, առաջադիմության և փոխադրումների բավարար մեխանիզմները, որակավորումների ազգային շրջանակին համապատասխան դիմալրմի հավելվածը և այլն: